Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

19415

ԱՌԱԿՔ

ՄԽԻԹԱՐԱՅ

ԳՈՐՇԻ

19415

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

—

1842

ՊԵՏԱԿԱՆ
ՄՍՏԵՂԱԴՐԱՆ
3449

19 1 1
11

ԱՌԱԿՔ

ՄԽԻԹԱՐԱՅ

ԳՈՇԻ

Ա

ԱՍՏՈՒԱԾ յառնելն երբեմն զաղարարածս՝ երկեաւ հակառակիլ. և խառնեաց զծանրն ընդ թեթեւին, զսկարն ընդ հզօրին. զի թէ հակառակ դարձցին՝ առ միմեանս, և ոչ ընդ արարչին։

Խրատէ առակս զթագաւորս՝ կարդել զմեծամեծս և զնուաստս ընդդէմ միմեանց. զի մի ընդ թագաւորս, այլ ընդ միմեանս պատերազմեացին։

Բ

Փափագեաց երկին խոնարհիլ, իբրու զի ամենեցուն ըղձալի է. սակայն երկեաւ անկանիլ 'ի փառաց. այլ լուսաւորք Ճառագայթաձեւ զնա արարին։

Ուսուցանէ օրինակս՝ համարձակութեամբ խոնարհիլ փառաւորաց. զի բնաւորեալն ընդ նոսա պատիւ՝ ոչ թողու անարգիլ։

Գ

Կարծեաց երբեմն զանձնէ արեգակն՝ թէ Աստուած իցէ՝ 'ի բարձրանալն. իբրեւ խոնարհեալ եմուտ ընդ երկրաւ, ծանեաւ զբնութիւն իւր։

Յայտնէ գաղափարս, զի ոմանց 'ի թագաւորաց անմոտաց 'ի բարձրանալն յաղթութեան փառաւք՝ կարծեցան Աստուած լինել. 'ի մոտանելն 'ի գերեզման՝ գիտացին զբնութիւն իւրեանց։

Դ

Ի լման՝ լուսին կարծեաց զանձնէ թէ արեգակն էցէ, և զոչ լուսաւորէ. այլ՝ ի պակասել լուսոյն՝ և ոչ զգիշեր լուսաւորէ։

Յանդիմանէ եղանակս զայնոսիկ՝ որ՝ ի պատահել միոյ իրի պատուոյ՝ մեծամեծաց կարծէ ժամանել. այլ և ոչ զոր ունի վայելէ յանմոռանալն։

Ե

Ժողովեալ երբեմն աստեղաց՝ ասեն՝ ի նոցանէ ծերագոյնքն. Մեք բազումք եմք՝ զիարդ զոչ և զգիշեր ոչ լուսաւորեմք նման արեգական և լուսնի։ Ասէ ոմն. Զի ոչ միաբանութեամբ վարիմք։ Եւ խոնարհեալ միաբանութեամբ նախ հերքէալ զարեգակն, և՝ ի ծագել լուսնի՝ պարտեցան և ասեն. Այսպէս՝ ի սմանէ աղօտացաք, զինչ և յարեգական ծագելն լինցուք։ Եւ զղջացեալ զպարտութիւն խոստովանեցան։

Խրատէ առակս , թէպէտ և բազումք լցեն՝ և տկարք , հզօրի յաղթել ոչ կարեն . խմաստութիւն է՝ այլ եւս տկարիւ զփորձառնուլ՝ և զղջանալ . որ և թողութեան է արժանաւոր :

Զ

Երկիր հայեցեալ՝ի բարձրութիւն լերանց՝ համարձակեցաւ լինել և երկին . և ոչ կարաց զլուսաւորս ընդ ինքեամբ առնել նման երկնի՝ և լուսաւորել :

Յանդիմանէ նշանակս զաշխարհական ոմանս , որ վիքացեալ՝ի Ճոխութիւն իւրեանց , զքահանայից կամին յափշտակել զպատիւ . սակայն լուսաւորին՝ քան լուսաւորեն , նման երկրի , զի լուսաւորի՝ քան լուսաւորէ :

Է

Ի մէջ անկոց խորհուրդ եղեւ՝ թէ ո՞ւմ արժան է թագաւորել՝ի վերայ մեր . և ոմանց ասացեալ զարմաւեանի թէ բարձր է հասակաւ , և քաղցր

է պողովք. իսկ որթոյ հակառա-
կեալ՝ ասէ. Ես եմ ուրախարարն, ինձ
արժան է լինել. և թզենի՝ թէ ես
զի քաղցրաճաշակ եմ. իսկ դժնիկ՝
թէ ես հարկանող եմ, ինձ 'ի դէպ
է. և առաւելութեամբ իւրաքանչիւր
զանձն յարդէր, և անկարօտ ասէր
այլոց։ Իսկ արմաւենի խոկացեալ
գիտաց՝ եթէ ոչ հաւանին նոցա թա-
գաւորել, զի զայլս ընդ իւրեանց
ոչ կամէին ճոխանալ, և ասէ թէ յա-
ւէտ ինձ վայել է լինել արքայ. և ա-
մենեքին վկայեցին և ասեն. Բարձր
ես հասակաւ և քաղցր պտղով. բայց
երկու ինչ պակասէ քեզ, զի յաւուրս
մեր ոչ տաս պտուղ, և 'ի շինուած
ոչ պատշաճիս. մանաւանդ զի բարձ-
րութեամբ քո անճաշակ բազմաց լի-
նիս։ Եւ նա պատասխանեաց, թէ
զձեզ խշխանս կարդելով՝ այնպէս
թագաւորեմ։ և 'ի կատարել ժամա-
նակացն իմոց՝ և որդւոց ձերոց թա-
գաւորեցից։ Եւ յօրինեաց զկարգ
թագաւորութեանն յանձն առնլով
նոցա զորթ՝ դինէպէտ, և զթզենի՝
հիպատոս, զդժնիկ՝ դահճապետ,

և զնուռնեանի՝ բժշկապետ, և զայլս 'ի պողոց 'ի դարմանս, զմայրս՝ 'ի շինուածս, զանասուս՝ յայրուսին, զմորենի՝ 'ի բանս, և զայլսն ամենայն յիւրաքանչիւր գործ։

Յանդիման կացուցանէ առակս, թէ ոչ ոք կարէ ճոխանալ առանց անփառից, և ոչ բարձրանալ առանց անարգից։ Եւ դարձեալ, առձեռն պարգեւօք ակն ունին անդադան յուսոյ բազումք տերանց իւրեանց։

Ը

Ի լինել որթոյն որդէկոտոր 'ի դարնանային ժամանակի, և յարտասուէն, եկին տունկք ամենայն վիսիթարել զնա, եկին ընդ նոսա և մորենի. և այս ինչ էր վիսիթարութեան բան. Մի լար, ասէն, դարձեալ ծնանիս որդիս։ Եւ նա ասէ. Ծնանիմ, և դարձեալ կոտորեն, և այդ զի՞նչ վիսիթար է. այլ այս է վիսիթար անձին, զի մնացեալն իմ որդիք՝ պտղաբեր լինին, և պատճառ ուրախութեան մարդկան. և այսիւ անձն վիսիթա-

ըէր։ Իսկ մորենի ասէր. Եկի միսի-
թարել զքեզ, զի լինիս զաչսդ սրբի-
ցես։ Եւ նա ասէ. Շնորհ ունիմ
անկագործին՝ որ խլէ զքեզ յարմա-
տոյ իմմէ։

Յայտնէ ապացոյցս, զի առ ժա-
մանակ մի է միսիթարել մնացե-
լոցքս, զի մահկանացու է ազգ
մարդկան. այլ այն իսկ է տիրապէս
միսիթարութիւն, զի ըստ հաճոյից
տեառն իցեն մնացեալն ժառանգք։
Բայց մորոսաց բան առաւել զայրա-
ցուցանէ՝ քան թէ միսիթարէ զսդա-
ւորս նման մորենւոյն, զոր շնորհ
ունի բնաւին ոչ տեսանել զանմիտ
միսիթարիչսն։

Թ.

Պահելով ոխս ընդ որթոյ մորենի՝
ասաց հակառակեալ, թէ նման քեզ
բարձրանամ, և զոյդ ոտոցաբերիմ։ և
առաւելումք՝ զի 'ի ձմերայնի անթա-
ռամ լինիմ։ Ապաբանեաց որթ զնա,
թէ պարծանքքդ կատարեալ է՝ յոր-
ժամ 'ի հնձան ժողովեսցիս յաշնան

յեղանակի։ Եւ 'ի լինել աշնան՝ կոխան եղեալ մորենի։

Ուսանիմք յեղանակէ ասել, զի յանդիմանել անմտութեան՝ 'ի դէպ է լռել, և ոչ երկրորդ ձեւանալ կատարելոյ։ Եւ միոմն բազմակատարին նմանել ոչ է կար։

Ժ.

Նռնենի և թզենի առ միմեանս սէր ունել կամեցան, և քաղցրութեամբն հաւասարեցան. բայց ընդ թթութեան նռնենեւոյն տաղտկացաւ թզենի, և լուծաւ դաշինքն։

Խնասում տայ այս առակ, նախ փորձել սիրելեաց զմիմեանց բարս, զի ամենայնիւ նման միմեանց լցեն. ապա թէ ոչ՝ դիւրաւ լուծանելի լցէ սէր։

ԺԱ.

Նախանձ առ միմեանց կալան խընձորի և տանձի՝ եղբարք գողով. և այսպիսի էր յեղանակն, թէ հարազատ մեք՝ զինքրդ թագաւորք զորի-

նակդ քո արարեալ ոսկի, ասէր առ խնձոր, 'ի ձեռին նկարեն։ Եւ նա ասէ. Զի բոլորատեսակ եմ և անուշահոտ. և թէ ոչնախանձիս, առնեմ լինել և քեզ ընդ իս 'ի սեղան Ճոխից, թէ և նշանակն ոչ լինի ոսկի։ Եւ նա տակաւին խանդայր՝ մինչեւ արկաւ խոզից։

Զայս տայ իմանալ յեղանակս, թէ ոչ է պարտ անարդի եղբօր նախանձել ընդ փառս եղբօր՝ որ պատուի 'ի մեծամեծաց, զի 'ի շնորհս նորա և նա վայելէ. թէ յանդգնի, կա առաւել անարդի։

ԺԲ

Հարցաւ ընդ թզենի, թէ զինչդէ զի բազում ոստս առ երկրաւ տարածանես։ Եւ նա ասէ. Քանզի բազում են թշնամիք իմ. և ես խոնարհիմ, զի մի ոստակոտոր եղէց. և նախ քան զելանելն յիս՝ յադեցուցանեմ, և մոռանան զչարութիւն։

Խրատէ զմեզ առակս, խոնարհութեամբ և սեղանօք և քաղցրութեամբ

ընդ առաջ Ելանել թշնամեաց, յոր-
ժամ ստնանել ոչ կարեմք. զի շինա-
նելցին 'ի դառնութենէ բարուց, և
մոռացին զչարիս։

ԺԳ.

Խնամութիւն առնել ընդ միմեանս
կամեցան թթենի և ձիթենի. և պան-
ծայր 'ի զօրութիւն իւր իւրաքանչիւր
ոք, ձիթենի յարագուարճութիւն
և 'ի պտղաւէտութիւն, մանաւանդ
զի պտուղ նորա նիւթ է ձիթոյ, և
ձէթ նիւթ է լուսոյ, և լոյս լուծիչ
խաւարի. իսկ թթենի 'ի քաղցրու-
թիւն պտղոյ, և զի սաղարթ իւր նիւթ
է մեռաքսոյ, զոր որդունք ծնանին,
յորմէ կերպասք լինին, զոր թագա-
ւորք և իշխանք վայելեն։ Որոշմամբ և
դիմադրէ ձիթենի զդիւրանցութիւն
պտղոյ նորա, և զախտաւորն լինել
հանդերձ, քան թէ հարկաւոր. և
զի 'ի գիշերի մերկանայ. բայց լոյս
'ի գիշերի վառի։ Ասէ թթենի. Ա՛յլ
'ի տունջեան շինանի։ Եւ ասէ ձի-
թենի՝ թէ ոչ շինանի, այլ յաղգակցին

լուր խառնի. իսկ փառք քո ծաղկին կէց է և անցաւոր։ Եւ այսու պարտեալ թթենի՝ և հայցէ լինել իրին։

Նշանակ առակիս այսպիսի է. զի թագաւորական ազգ թէպէտ փառաւոր է, այլ երկրաւորութեան Ճոխանայ, որք հոսանուռք են, որում թթենիդ է նշանակ։ Իսկ քահանայական տոհմ թէպէտ և աղքատ լցէ, մեծապատիւ է հոգեւորութիւն, և արժան է զուգիլ ընդ թագաւորական տոհմի։

ԺԴ

Յանփորձից ոք տնկոց հարցանէ զնռնենի. Զի՞ է զի բազում առնես ծաղիկ, սակայն զի հոսես և ծորես։ Եւ նա ասէ. Ագահ է ակն տնկողին, և ես նրբոստ և ծանրապտուղ. և եթէ ոչ էի կակղուղէշ, բառնալ ոչ կարէի. և յաղագս այնորիկ հոսեմ, զի մի բեկայց։

Յանդիմանէ առակս զայնոսիկ՝ որ առաւելքան զկարն և զսահման արարչին պահանջեն 'ի ապաստաւորացս պաշտել. որոց խնամ ածելի է՝ զի

մի 'ի զօրութենէ հատեալք անկցին, նմանապէս և 'ի հոգեւորսն եղեցին, ըստ որում և Աստուած խնամէ :

ԺԵ

Ի միասին սալոր և դամոն և ծիրան ամբաստանեցան՝ թէ ընդէր զատամունս հարուն : Եւ նոքա պատասխանեալ ասեն. Զեզ ոչ է գիտելի. այլ հմուտք 'ի բժշկաց գիտեն՝ զի մեսասիչ եմք որովայնի. արդ եթէ զայն գործեմք և յաճախեն յուտել, զի՞նչ առնէին եթէ ոչ լորձեաք. որով շնորհ ունել՝ քան թէ ամբաստանել պարտիք :

Լուծումն առակիս այս է, զի դառն և ապականիչ է չարութիւն ոչ գլոյ և գժնդակ 'ի գործել նախ, և ախտաւորքն կամին զի դիւրագործ լինիցին. զի թէ դժուարաւ գործին և այնքան ախորժ են, զի՞նչ առնէին եթէ դիւրագործք էին. որ և յայտ խնամանոց է՝ զի գոհանալի է, և ոչ ամբաստանելի զնամողէն :

ԺԶ

Յաստենի երբեմն յանդիմանել սկսաւ դեղձի զսերկեւլի՝ ասելով. Դեղին ես տեսլեամբ և դժուարուտելի մարդկան. իսկ ես՝ բարետեսիլս և դիւրաճաշակ։ Եւ նա ասէ. Կեղծաւոր ես ամենեւին և պատրիչ մարդկան. քաղցր երեւիս 'ի ճաշակել, և մոեալ յորովայն՝ բաղում վնասս գործես. իսկ ես դեղին եմ, զի ցաւակցիմ հիւանդաց՝ 'ի տես երթալով և զհիւանդութիւն բառնալով, և ոչ որպէս դու հալածեալ 'ի հիւանդաց։

Յայտնէ միտք առակիս, զի կեղծաւորք միշտ զճշմարիտս յանդիմանեն իբրեւ զկոշորս վարուք և խիստս մարդկան՝ յօրինադրել, և զինքեանս բարեբոյս և վշտակից. սակայն բանք ճշմարտից դեղ են ոգւոց, թէ և զառաջինն ընդդէմ երեւին. և ընդ նոսա ցաւակցելով զհիւանդութիւնս նոցա բառնան։

19415 3441.9.

ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ԺԷ

Բամբասել սկսան միանգամայն տունկք 'ի միասին զընկուզն, և ասեն. Ոչիշտ ես ամենեւին և տմարդի, կծու և չար, զպտուղ քո բերես անուտելի։ Որոց պատասխանեաց ասաց. Ո՞չ ապաքէն նման ձեզ առնեմ. զի ո՞ր 'ի ձէնջ նախ քան զժամանակն տայ զպտուղ իւր յուտել։ Եւ նոքա ասեն. Ի մէնջ ուտեն յառաջ քան զհասանիլն, իսկ դու ճըշդիւ պահես մինչ 'ի կատարած։ Եւ նա ասէ. Սակայն և արդ ամենեցուն ընդարձակ եմ մարդկան և թռչնոց, ոչ նման ձեզ անկարդաբար տալով։ Եւ այսու արդարացաւ 'ի վերայնոցա։ Մանաւանդ զի բազումք 'ի ձէնջ զնոյն գործեն, ասաց երկրորդելով. և զի ամբողջան ուտելով 'ի ժամու՝ մերկանամ զուրշութիւն։

Ոչ ինչ է տարակուսելի և այս առակ, զի բարեկարգք միշտ բամբասին յարբշռից կերրեւ ուիշտք, զբարի մատակարարութիւնն ամենգութիւն

կոչելով, և անդէպ կերոզացն զասա-

ԺԹ

Մերձ առ սաւոյ առոգանէին երկրագործք զբամբակենին, և մի մեանց պատուիրէին զգուշանալ, զի մի զծառս կոխեսցեն զբամբակենիս. և լուեալ սաւոյն զբարացաւ՝ կոչելով զնա ծառ. ասաց՝ Թէ զնաղդ ինձ համանուն կոչի դա ծառ, զի ես այսքան ստուար և բարձր եմ, և ըզբաղում տեղիս ընդունեալ ունիմ։ Եւ լու 'ի լու ոչ զանգիտեալ՝ պատասխանեալ բամբակենի ասելով. Բարձր ես և ստուար, սակայն անօգուտ. ոչ 'ի շինուած և ոչ 'ի պտուղ և ոչ յայրուն գովելի. այլ Թանձր ունելով ստուերս, յորմէ բամբասիս մանաւանդ՝ քան Թէ գովիս. իսկ ես Թէպէտ փանաքի և տկար, այլ բազմաշահ. ոչ միայն մեծատանց՝ այլ և աղքատաց, 'ի տաճել 'ի քաղել 'ի գործել. և լինիմ հանդերձ որպէս զասր յոչխարաց և զվուշ 'ի կտաւէ և զմեռաքս յորդանց. յորոց և դու ոչ ինչ ունիս բնաւ, բայց միայն խոտ

զակ։ Եւ այսու յարդիմանեալ ը-
ռեաց։

Բանք առակիս զպարծանս անոտիս
լուեցուցանէ զմարդկեղէնս, զոմանց
զոր ունին 'ի տեսակ և 'ի հասակ, և
պատահին բազում անդամ անօգուտ
կենցաղոյս՝ նմանապէս և հոգեւո-
ցացն։ զայլս յականէ խոտեն զակա-
ղըս և զկարճս հասակաւ, որք և պի-
տանիք լցեն 'ի բազում իրս մարդկան
և փարթամացուցիչք։ որք և յիրաց
անոտ գոլին, և նոքա յանդիմանին 'ի
անոտ գործոց։

Ի

Տրտունջ եղեւ անկոց ամենեցուն
զիմաստասիրէն Իւրեանց՝ թէ առաջք
բաշխեաց զիւրաքանչիւր պատիւ։ զի
զոմանս 'ի տունս բնակեցոյց՝ որպէս
զնարինջ, և զոմանս 'ի բուրաստանս
և զոմանս յայգեստանս՝ և պատուին
'ի մարդկանէ, և զոմանս Իւրեւ զան-
արդս 'ի վայրի զպտղաբերս, որ և
կերակուր լինին խոզից և կոխան գա-
զանաց, և զայլս յանտառս՝ որպէս

զմայրս, զսարդի և զնոձի և որ նման սոցին, զոր հարկանեն անխնայ, և անարգ քարշանօք'ի շինուածս և յայրուսին պատրաստեն: Եւ նորա լըսեալ կոչեաց զնոսա, և սատեալ'ի վերայ նոցա՝ ասէ. Ո՞չ գիտէք եթէ զխորհուրդ Թագաւորին ոչ ամենեքեան գիտեն, որպէս և ոչ զԱստուծոյն. և թէ այլ ևս յանդգնիք, մեծագոյն ունիք պատուհասիլ: Եւ զարհուրեալք լռեցին:

Հանձարեղս զմեզ լինել կամի առակս, և հնազանդս Աստուծոյ և Թագաւորաց, և ոչ տրտնջել զանձառ խնամոցն Աստուծոյ, և ոչ զծածուկ խորհրդոց Թագաւորաց. այլ ուրաքանչիւր գործոյ ուշ ունել: Զի ոչ եթէ վայրապար ինչ եղեւ կարդել'ի Թագաւորէն տնկոց զնոսա, որպէս և ոչ Աստուած և ոչ Թագաւորք տնօրինեն վայրապար. զի զոմանս յայգիս կարդեաց 'ի պտղաբերաց, և զոմանս 'ի բուրաստանս, և զոմանս զհամացեղս յանտառս, այսպիսի պատճառաւ՝ զի դաղանաց և անասնոց կերակուր լինիցին, և մի նեղեսցեն

զմարդիկ զտաածեալս 'ի նոցանէ՝ ու-
տելո

գեցայց, զի և ոչ մի ունիք պտուղ մրգոյ. և առաւել ևս զբարիսն։ Եւ մի ոմն 'ի ծառոցն քաղցրութեամբ և հաւանական բանիւք ասաց. Մի՛ տրամիր այր դու, և մի վայրապար բամբասեր՝ զի մեղանչես. Թէպէտ և կարօտեալ ես՝ զի՞նչդ ոչ գիտես Թէ 'ի ձմերայնի հանդչիմք և յարմատս մեր զօրանամք, զի կարասցուք 'ի գարնայնի ծաղկիլ, և յամարայնի մնուցանել պտուղ, և յաշնայնի հասուցանել և կերակրել. ընդէ՞ր ոչ եկիր՝ յորժամ մարդ և անասուն և գազան վայելէր պտղովք մերովք. դու յամենայնի և յամենայն ժամ պատրաստ ես 'ի յուսել, այլ մեք ոչ. երթ՝ և 'ի դէպ ժամու եկեալ կերիցես որչափ և կամ լցէ քեզ։ Եւ գնաց այրն յուսով ասացելոցն։

Դէմք առակիս զհիւրս և զաղքատս խրատէ, զի յանդէպ երթեալ ժամու՝ զմեծարանս խնդրեն. հիւրք պատրաստք յուսել և 'ի հանդչել, և աղքատք զպէտս ընուլ կարօտութեան. այլ ոչ նմանապէս ասպնջական պատրաստք հանդիպին յա-

մենայն ժամ, և կամ բարեգործք՝ յողորմութիւն։ Իսկ յամբաստանեալն նոցա և 'ի տրանջելն՝ չէ արժան զչարանալ, այլ քաղցրութեամբ պատասխանել և զպատճառս անպատրաստութեանն ճառել, և զայլ ժամու զառատաձեռնութիւնն. զոր բազումք գտին զհանգիստ և զողորմութիւն. և ոչքան հնար ելցէ առաձեռնպատրաստութեամբ ընդունել, և խոնարհութեամբ զպէտս նոցա լցուցանել խոստանայցէ, և սիրով և յուսով զնոսա դարձուցանիցէ։

ԻԲ.

Խոհեմ ոչ էհարց զծառս, եթէ զինչ էն պատճառք՝ զի ոչքան բարձրանայք, այնքան արմատս 'ի խոր ձգէք. և նոքա ասեն. Խոհական գոլով զիարդ ոչ գիտես՝ եթէ ոչ կարէաք այսքան ոստս բառնալ և ընդդիմանալ հողմոց բռնութեան, եթէ ոչ զարմատս 'ի խոր՝ և բազմոստս առնէաք. տեսանես զերդբարն մեր զհաճարի և զփիճի, զի ոչ էն բազմ-

ոսոք, և ոչ ընդդիմանալ հողմոց կա-
րեն, 'ի խոր արմատս ոչ ունելով։

Խրատէ առակս՝ որք կամին ու-
սանել հաստատութիւն իրի զհոգե-
ւորաց և զմարմնաւորաց. զի արժանէ
հաստատուն հիմամբք սկզբնաւորել,
զի մի 'ի փորձութեանց անկանիցին
բռնաւորաց՝ 'ի դիւաց կամ 'ի մարդ-
կանէ, և բազմաբեղուն զնրան առ-
նիցեն. ապա եթէ ծանծաղ և 'ի
վեր 'ի վերոյ սկսանիցին, դիւրակոր-
ծանք լինիցին, որպէս տեսուն ու-
սուցանէ առակն։

ԻԳ

Նշենիք քաղցր և դառն՝ եղբարք
դոլով համամարք և ոչ համահարք.
և նեղեալ 'ի դառնութենէ եղբօրն՝
արար իւր բարեկամ և եղբայր ըզ-
կասկենի, բարոյակից զնա դառեալ
ըստ երկուց որակաց. և 'ի բազմաց
մեղադրեալ՝ ասաց. Որ ըստ կամաց
իմոց է, նա է իմ եղբայր։ Եւ ոչ ոք
կարաց ասել նմա ինչ։

Գաջայայտ իսկ է առակս. զի թէ-

պէտ հարազատք եցեն էղբարք, և ընդդէմ միմեանց պատահին բարուք, հարկաւորաբար քակտին'ի միմեանց, և զօտարս բարոյակիցս լաւ համարին. և թէպէտ մեղադրին, ոչ ոք կարէ արդարանալ 'ի վերայ նոցա։

ԻԴ

Մեծաբանեալ անպիտառէր կաղնի՝ ասել զինքն թագաւորազն յաղագս հասակին՝ հզօր զօրութեամբ, երբ'ի Լիբանանս բնակեալ հսկայազօր. և խորհէր առ աթոռ զամենեսեան հարկանել. իսկ ալքայկաղնի ոչ ժուժեալ, յանդիմանական վարեցաւ առ նա բանիւ՝ ասելով. Բազումք համանման քեզ ոչ պարծին. սակայն և ոչ զանխլանան փառք նոցա՝ 'ի պտղոյ առաւել քան 'ի հասակէ դովեալք. զի այդպէս յանդգնիս. ես և ոչ մի ինչ եմ, բայց մարդիկ զպտուղ իմ ուտելով և զիս ես յարգեն. այլ պտուղ քո 'ի դարմանս կայ խոզից։ Եւ զայս ասացեալ լուեցուցանէր, ծիծաղելի զնա ցուցեալ։

Մինաք առակիս յայտնի է, խրա-
տելով զմնացարծս՝ որք յաղագք և 'ի
տեսակս և 'ի զօրութիւնս պարծին.
ոչ ուսեալք յիմաստնոյն՝ եթէ գո-
վեսցէ զքեզ ընկերն, և մի դու. այլ
նոքա զնոտելին առ ինքեանս թա-
քուցանեն, սակայն 'ի գիտողաց
յանդիմանին, ոչ ունելով պիտանի
ինչ կենցաղոյս՝ նաև ոչ հոգեւոր ինչ.
և որք 'ի նմանէ այպանին, բազում
անգամ. քան զնոսա լաւագոյն գտա-
նին, և ընդունելիք մարդկան լինին.
և նոքա անարգ և ծիծաղելիք 'ի բաց
խառին:

ԻԵ

Բողոք առ միմեանս կալան ցա-
ղրասի և հաւամրդի. քանզի և նոքա
տունկք գոլով, սակայն պակասա-
միտք. և տրանջէին ասելով. Զինարդ
նման մեզ լինելով մրոի տեսլեամբ՝
և փանաքութեամբ վարդ, և այն-
քան պատուին՝ զի 'ի տունս բնակին
Խոսրադունից՝ և յեկեղեցիս, և մեք
անարգ լինիմք գործիք՝ զաւելորդս

տանց և դռեհից մաքրելով։ Զայս ասելով՝ զանուշահոտութիւն նոցա և զբժշկութիւնն և զպիտանութիւնն թագուցանելով, և զհամեմատութիւնն ինքեանց առաջի դնելով՝ զամբաստանութիւնն աճեցուցանէին։

Այսպիսի է առակիս տեսութիւն. բազումք նորամուտք 'ի կրօնաւորաց յորժամ ըստ պատշաճի նոցա 'ի խոնարհագոյն գործ ինչ որոշեն, քըրթնջեն՝ թէ մեզ նման ձեւով և այլք են կրօնաւորքն, զինարդ պատուին և 'ի գործ պարկեշտ կան, և յայսքան անարգութեան մեք. և զնոցա արժանի պատուոյ զվարս թագուցանեն. զի ոմանք քահանայք լցեն, և զնմանութիւն տեսառն վարուց ուներն նման վարդի. և այլք 'ի մանկութենէ կուսութեամբ անուշահոտեալք նման մրտի. իսկ նոքա անդիտանալով զինքեանս՝ վայրապար ամբաստանեն։

Զբազումս 'ի գիտելեաց և յանգիտելեաց թողաք իբր համազօրս յօ-

ընակս և յառակս. և զառեալ նշա-
նակսդ չափաւորապէս համեմատե-
ցաք՝ պատճառս տալով տեսողաց
բանին նմանապէս զԹերին լցուցա-
նել։ Եւ արդ փոխանցելի է մեզ և
յայլսն, այսինքն 'ի բոյսս ծաղկանց
և սերմանց և բանջարոց, և 'ի նոցա-
նէ չափաւորապէս զդաղափարսն
առնլի է բարոյապէս և առասպելը-
րէն. և զի Թէպէտ անըմբռն ասա-
ցեալքդ կարծի, սակայն Թանձրա-
մտաց առաւել ախորժելի երևին,
որոյ աղագաւ զսակաւդ յօժարե-
ցաք գրել։

ԻԶ

Տեսեալ ապա այնուհետեւ բու-
սոց Թէ բարեւոք կարգաւորութեամբ
վարին, հաստատելով ինքեանց Թա-
գաւորութիւն տունկք, նախանձ
բերեալ ընդ նոսա՝ կամեցան և ին-
քեանց կարգել Թագաւորութիւն։
Եւ եղեւ ոչ սակաւ հակառակութիւն
զի ոմանք ասէին զշուշան լինել, և
այլք զախրիզան, և բազումք զհա-
մասպրան. և ամենեցուն հաճոյ

թուէցաւ լինել համասպրանն, այս-
պիսի յեղանակաւ. երկոտասան
մասն է երկրի, և երկոտասան ոստ
է համասպրանին, և պարտ է նմա
թագաւորել՝ զի ամենայն տիրեսցէ
աշխարհի. մանաւանդ զի մեծամեծ
ունելով զօրութիւն բժշկութեան՝
զհիւանդս բժշկիցէ, և զայլս քաջա-
տեսս առնիցէ, և 'ի վերայ ծովու
գնալ տացէ, և խմաստութեամբ
զոգէոս լցուցէ: Եւ ապա ամենե-
ցուն հաւանութեամբ թագաւո-
րեաց համասպրանն: Եւ կարգեաց
նոցա կարգս, զի արար զբնաբոյս
ծաղկանց 'ի զբօսանս և 'ի բժշկու-
թիւնս, և զբանջարս դալարիս 'ի կե-
ղակուրս և 'ի դարմանս, սոյնպէս և
զսերմանս ամենայն. և զարդարեաց
ամենայնիւ զտուն թագաւորու-
թեան իւրոյ. և խնդութիւն եղեւ
բնաւիցն:

Խմաստք առակիս ծանուցանի
այսպէս: Տեսեալ ազգի մարդկան
զերկրաւորս թագաւորութիւն, ըստ
կարգի և զերկնաւորն խնդրէին թա-
գաւորութիւն. բայց ոմանք կարծէ-

ցին զարեգակին, և այլք զլուսին, և
այլք զայլ ինչս բազումս։ Իսկ յե-
րեւել Բանին աստուծոյ և՝ի սահմանալ
երկոտասան առաքեալս և առնելն
զնշանս և զբժշկութիւնս, ծանեան
զՃշմարիտն, զնա լինել Թագաւոր
աշխարհի։ Եւ՝ի Թագաւորելն իւ-
րում զոմանս արար աւետարանիչս,
որպէս զախրիզանն՝ երիս ունելով
կենդանութիւն յարմատս, զի և նա
զբնաւորական և զգրաւորականն
ընդ ինքեան ունի զօրութիւն. և զո-
մանս հովիւս և վարդապետս՝ի ըզ-
բօսանս հոգւոյ և՝ի բժշկութիւնս,
՝ի կերակուրս բանք նոցա և՝ի սեր-
մանս, ՝ի խարհոռդս և՝ի միտս։ Իսկ
ըստ կերպարանի շուշանի զբնաւս
կարգեաց զեկեղեցի ընդ իմաստու-
թեամբ աւետարանին ծաղկեալ,
որպէս նա՝ի գեան Եփրատէս և
յայլսն։ Եւ եղեւ ուրախութիւն մեծ
ամենեցուն՝ի Թագաւորելն նորա։

ԻԷ

Ասանել ոմանք՝ի բուսոց կամ-
ցան՝ թէ ընդէր Թագաւորն մեր

զանձն իւր այնքան ծածկէ, և զայլն
ամենայն դիւրապատահս արար
մարդկան և բժշկաց. որոյ աւուրքն
գրեթէ երեսուն յայտնի ոչ լինելով,
թէպէտ և այլ ժամանակն անդիտե-
լի է. և գտեալ 'ի բժշկաց՝ այնուհե-
տեւ 'ի պէտս վարի, ընդ ինքեամբ
անյայտ և զախրիզանն արար՝ լուսով
նշանի 'ի գիշերի գտանիլ: Իսկ նա
գիտացեալ զխորհուրդս նոցա՝ և ա-
սէ. Գիտէք զի միանգամայն անյայտ
ոչ լինիմ, այլ երեւիմ աղօթիւք և
պահօք խնդրողացն. նմանապէս և
զախրիզանն արարի, զի մի դիւրար-
համարհելի լինիցիմք՝ դիւրագտա-
նելի լեալք: Եւ նոցա ուսեալք՝ ու-
րախ լինէին գոհանալով:

Առակս զայս ինչ նշանակէ: Տա-
ղակուսելի է ոմանց խորհուրդն
Քրիստոսի, զի երեսուն ամ անյայտ
եղեւ, և ապա յայտնեցաւ 'ի բժշկու-
թիւն վարեալ առաքելոքն. այս
դիտելին է, թէ և անժամանակ է.
Իսկ զայլ սրբոց բժշկութիւնս ընդ-
արձակ արար, զիւրն ծածկելով, և
նոքաք վարի: Ընդ իւր անյայտ և զա-

ւեռաբանն արար՝ 'ի գիշերի ամ-
բարշտութեանն յայտնելով. իսկ նա-
խախորհրդագէտ գոլով ուսոյց թէ
և ոչ բնաւ ծածկիմ որպէս և գի-
տէք. այլ աղօթիւք և պահօք երեւիմ
խնդրողաց. և այս յայտ իսկ է. սոյն-
պէս և զմիտս աւետարանին աղօթիւք
և պահօք և արբութեամբ դատանեմք,
զի մի գիւրաւ դառեալ որպէս հր-
ութեայքն՝ արհամարհիցեմք. և ոչ բը-
նաւին անտես եղեւ, զի մի անցու-
սութեամբ որոմիցիմք. այլ այսուիկ
ուրախ եղեալ գոհանամք:

ԻԸ

Ըստ գարնանային յեղանակի ե-
ղանէին ոմանք զգեղեցկութիւն մա-
նիշակի. և նա Ճշմարիտ կարծեալ
յանմտաց զասացեալն, և առաքեաց
առ շուշան հրեշտակ՝ առնել ընդ-
նմա բարեկամութիւն, վասն նմա-
նութեան կարծեացն. զի գովիչքն
նման էին ասէին շուշանի. և նա պա-
տասխանեալ ասաց՝ եթէ դու այժմ
ծաղկեալ զարդարիս, և էս տա-

կաւին իբր գօսացեալ և անյայտ. ներբեա մինչ և ես ծաղկեցայց։ Եւ յանապատ նմա յեա ոչ սակաւ աւուրց թառամեալ գօսացաւ մանիշակ. և 'ի ծաղկիլ շուշանին բնաւին անյայտ կայր մանիշակ։

Յայտնապէս ցուցանէ առակս ըղփառս մարդկայինս անոտի լինել, թէպէտ յանմոռաց երանին. և ապա կասեալք 'ի մոռաց կարծեն՝ իբրեւ մշանջենաւոր նման սրբոց ունել փառս, և այսու հաղորդիլ կարծեն և սրբոցն փառաց, և ուսեալք 'ի բանից ընտրելոց առ այժմ անյայտ լինել փառաց իւրեանց. եթէ տեսեսցեն մարդկայինքս մինչ 'ի ծագել փառաց նոցա, կցորդութիւն է 'ի միմեանս. սակայն 'ի պայծառանալն նոցա՝ նուազին ամենայն երկրաւորքս, և յանդիմանին ունայն լինել։

ԻԹ

Փէննա զանձն սրբասէր ասէր լինել, և ամբարհաւաճ էր 'ի բնաւից՝ իբրու զի ընդդիմանայ դիւաց՝, ոչ

գիտելով եթէ 'ի թագաւորէն իւր-
մէ զօրանայ. և յինքն ամիսուքեալ
արքայի զիւրն շնորհ, և գտաւ ու-
նայն քան զբազումս. վասն զի ծա-
ղիկք ամենայն 'ի սէտս վարէին բը-
ժշկաց, իսկ նա և ոչ բնաւ:

Զունի ինչ խորին օրինակս. զի
ամբարտաւանին ոմանք 'ի քահանայ-
ից և 'ի կրօնաւորաց՝ յորժամ տէր
'ի ձեռս նոցա առնէ բժշկութիւն,
և կամ մերժէ զդեղս. ոչ գիտելով
եթէ ոչ նոքա, այլ շնորհն տեառն
որ ընդ նոսա. և յորժամ առնու
զիւրն տէր, լինին և ոչ առ մի ինչ
պիտանացու:

Լ

Եղեւ գժտութիւն երբեմն 'ի մէջ
լեռնականաց և դաշտականացն ծաղ-
կանց. զի հաւրուան և մաւրուան և
առպուզանն և այլք այսպիսիք ոչ
տանէին պարտաւանացն դաշտակա-
նաց՝ արքայածաղկին, կակաչին և
այլոց նմանեաց. զի ստգտանէին իբ-
րեւ տմարդիք և անիմաստք, և զին-

քեանս հանձարեղս և 'ի բժշկու-
թիւնս պատրաստս, և 'ի տեսիլս՝
առձեռն : Լու եղեալ այս յայանջս
թագաւորին իւրեանց. կոչեաց զնո-
սա և ասասիս առաց. Ո՞չ ապաքէն ես
վիճակեցուցի զձեզ այսպէս բնակել-
զի ոչ կարէք զկարգ ձեր փոխոխել
թէ և կամիք. զի եթող պէտս ունել
միմեանց, զի լեռնականք զդաշտա-
կանաց ոչ ինչ ընուն զտեղի, և ոչ
դաշտականք զլեռնականաց, ոչ 'ի
բժշկութիւնս և ոչ յայլ ինչ. և այ-
սու համբուեաց զնոսա :

Ի միտ տայ առնուլ առակս զնա-
խախնամութիւնն Աստուծոյ ամե-
նայն ուրեք՝ ըստ կարգի մատակա-
բարել զլեռնայինս և զդաշտայինս.
և զի զմիմեանց ոչ ընուն զտեղի, և
պէտս ունին իւրաքանչիւրքն մի-
մեանց. և զի ոչ է պարտ պարտաւանս
ունել առ այնոսիկ, այլ ըստ կարգի
արարչին մեծարել զընկերս և զեղ-
բարս :

ԼԱ

Աղաղակէր երբեմն խնկողկուզնկ՝
թէ ես պատճառ եմ սրբութեան

քահանայից. և զոմն սոգոտանէր զծաղիկ, զի արմատ նորա ախրոգի տականին է շարժող։ Եւ զայս լուեալ քահանայ ոմն չարչարեալ 'ի ցանկութենէ՝ և եդ զնա 'ի հանդերձ իւր. և ինչ ոչ օգտեալ թշնամանէր զնենկածաղիկն իբրեւ զսուտ ոք։ Եւ նորա դարձուած արարեալ ասաց. Զի 'ի հանդերձ քո և ոչ 'ի սիրտ զնա եդեր, յաղագս որոյ ոչ ինչ օգտեցար։ Եւ լուեալ այրն լուռ եղև։

Ի հանճարով է օրինակս. զի զողջախոհութիւն ոչ մարմնով, այլ հոգւով արժան է ունել. ապա թէ ոչ՝ անշինջանելի է ախտ ցանկութեան. և չէ պատշաճ զ'ի բարի եղեալս յԱստուծոյ՝ չար կարծել։

ԼԲ

Եղեւ հարսանիս արեգական, և առաքեաց հրաւիրեաց զծաղկունսն առ հատարակ. զի ըստ զուգաւորութեան, և անդ 'ի միասին 'ի հարսանիս գայցեն։ Եւ լուեալ ձիւնածաղկի և այլոց այսպիսեաց, փու-

թացան քան զբազումն ժամանել. և 'ի ժողովին այլոց զի 'ի միասին վայելեսցեն, ոչ երեւէր նա՝ զի խորշակահար եղեալ ցամաքեցաւ. և առ հասարակ սեռք ամենայն պատուեալ պատկեցան։

Մինոք առակիս այսպիսի է. զի արեգակն է տէր, և հարսանիս՝ ժամանակ չարչարանացն, և հրաւիրակք՝ առաքեալքն. զի զկնի աւետարանին և անդ, այսինքն յերկրորդ գալստեանն 'ի միասին պատկեսցին. իսկ ծանծաղք՝ և յօժարամիտք եղեալ աւետեաց բանին, սակայն 'ի փորձանս անկան՝ և ոչ կարացին ընդդիմանալ. և պատկեալ այլք՝ ինքեանք մնացին անպատկ.ք։

ԼԳ

Գնդաձաղնիկք և կորնգան և խոլորձ՝ առուոյտ կապոյտ և սէզ և նմանք սոցին ծաղր եղեալ զցինկ՝ ասէին, եթէ զի է՝ զի մեք զուարճացեալք կամք, և նա ծիւրեալ դեղնութեամբ։ Եւ լուեալ՝ պատաս-

խանեաց. Վասն զի անմիտք էք և անէրկիւղ, ոչ խորհիք եթէ վասն մեր սուրբք սրեն դերանդեաց. իսկ ես խոկալով յայսոսիկ՝ զարհուրեալ դողնիմ։

Յայտնապէս ցուցանէ առակս՝ թէ յոյժ անմիտք են որ մոռանան եթէ բնութեամբ մահկանացու է ազգ մարդկան. և պատրեալք յերեւելի՛ մեծութիւնս՝ ծաղր առնեն զվարս էրկիւղածս և զկրօնաւորս. ուստի յանդիմանին ՝ի նոցունց անմոռութիւն նոցա. և ինքեանք դիտելով զապականութիւն էրկրաւորացս՝ ոչ պատրին, այլ ճնշեալ և էրկիւղիւ միշտ նեղեալ են։

ԼԴ

Խոկացեալ բուսոց թէ ո՛ արդեօք յառաջապահ մեզ կացցէ. և խրոխտացեալ կաւի և նորին նմանեաց՝ ասեն, թէ մեք հարկանող գոլով, մեզ լինել արժան է. և ՝ի կարգելն՝ եկեալ էշք և ուղտք՝ կերեալ և առաթուր հարեալ, գօսացեալք և տարեալք ՝ի հողմոց եղեն։

Ընդդէմ կայ առակս հպարտ մը-
տաց, որք յուսան 'ի լեզուանութիւնս
իւրեանց. իսկ դիտելի է, զի հզօր
է զօրութիւն քան զլեզու։

ԼԵ

Պախատեցաւ Եղեգան ծաղիկ և
նմանք նորա, պաշտօնեայ լինել ա-
ղեգական. և նորա ձգեալ զձեռն
յարեւն՝ երդուաւ արեգական թէ
ոչ եմ։

Բասրէ առակս զայնոսիկ՝ որ 'ի չա-
ղիս յայտնիս յանդիմանին, և հնա-
ղին թագուցանել. որով յանդիմա-
նին յաւէտ քան թէ ծածկին։

Համասեռք այսմ զանց արարաք.
եկեսցուք 'ի սերմանս և 'ի բանջարս։

ԼԶ

Ախուք փառասիրութեամբ
զանձինս պատրատէին սերմանիք
իշխել 'ի վերայ միմեանց. և պերճա-
ցեալ գարի որպէս վաթանաւոր, և

կորեակ որպէս հարիւրաւոր. իսկ ցորեան լուռ եւեթ կայր։ Եւ տեսեալ արքայի նոցա զխոնարհութիւն նորա, զի որք անասնոց և գազանաց մանաւանդ են կերակուր՝ զմիմեանսն էլանեն, և նա հանդարտեալ կայ, մերձաւոր ինքեան զնա արար։

Նշանակէ առակս՝ ոչ այլ իւիք զօրութեամբ անդամ լինել Քրիստոսի, քան թէ խոնարհութեամբ. ըստ որում և տէր եմուտ 'ի քնութիւնս ուսման աղագաւ։

ԼԷ

Իբրեւ ծանեաւ գարի, եթէ խոնարհութեամբ հաճոյ եղեւ ցորեան, եղեւ գլխակորեալ և խոշորագլեսա, զի յարգոյ և նա եղիցի։ Եւ տեսեալ արքային՝ յանդիմանէ մանաւանդ՝ քան թէ մարմին իւր առնէ՝ ասելով, թէ ձեւով միայն խոնարհիս, իսկ յորովայն մտեալ՝ բազում առնես վնասումն, նշանակ ամբարտաւանութեան։

Զայս յինքեան ունի առակս, զի բազումք գիտելով զխոնարհութիւն գովելի և մերձաւոր տեառն, կերպարանեցան լինել, այլ ոչ հոգւովուսոյ խոտին, ոչ ունելով յոգի. քանզի խոնարհութեամբն առաւել եւս ամբարհաւաճեն։

ԼԸ

Զնոյն կրեաց և կորեակ ասելով. թէ գովելի է խոնարհութիւնն, ինձ յաւէտ մերձաւորիլ տեառն 'ի դէպ էր. զի այնքան եմ խոնարհ, մինչ զի 'ի պատուողացն ձեռանէ սողոսկեալ՝ անկանիմ յերկիր։ Ա յսպանի և սա իբրեւ զանմիտ՝ լինելով կերակուր անմոռաց, ոչ գիտելով զպատիւ անձին։

Խմաստք առակիս այսպիսի է. զի խոհականութեամբ խոնարհիլն՝ ոչ բաղէս խոնարհութիւն է, իսկ անխմաստաբարն՝ եղծումն, ոչ գիտելով զբրինակ խոնարհութեան զժամանակի և զտեղւոյ՝ ըստ զանազանութեան։

ԼԹ.

Հաճար և մեռեալ՝ ի միասին ուրախ լինէին, իբրու անդրժելիք էին թըռչնոց։ Եկեալ գազանաց և անասնոց, կերեալ և կոխան արարեալ, և զըղջացեալ ասեն. Ընկայելոյ աղագաւ զանձինս պատեցաք, և այժմ վարկ պարզի ապականեցաք։

Զանազորոյնն յանդիմանէ առակս, զի ըստ կարգի յաղքատս ոչ մատակարարին. իբրու գազանաբարոյից և անմտաց ամբարիք նոցա լիցին. զղջանան, այլ ոչ լինէ օգուտն։

Խ.

Մարմնոյ մեծութեամբ՝ բակլա և սխտեռն պարծէին առ հատ կուսաստի և կնճղեթան։ Եւ նոքա ասեն. Փոքր եմք հասակաւ, սակայն բեղմնաւոր. զի ժողովեալ և տանջեալ մարդկան, լինիմք կերակուր և նիւթ լուսոյ. իսկ դուք թէ և կերակուր, այլ ոչ եւս օգտակար, և ոչ նիւթ լուսոյ։

Ընդունի և ինչ ոչ գովութիւն առակս զմարմնոյ առոգութիւն՝ յորժամ զլոյս ընդ ինքեան ոչ ունի ըզպատուիրանին։ Իսկ փանաքիք յոյժ գովելիք, թէպէտ տանջանօք ժամանակիւք չարչարին, պայծառացեալք լուսով պատուիրանին, և վիշտ կերակրելով զաղքատս։

ԽԱ

Անկաւ 'ի պատառէ կերոզի հատ սիսեռան, և այպանեցաւ 'ի բակլայէ որպէս զերկչոտ. որուն մատաց. Ոչ եմ երկչոտ, այլ արի։

Յուցանէ առակս, յարաժամ յապականչաց կենաց մերոց զանդիտել, սակայն արիութեամբ 'ի նոցանէ փախչել։

ԽԲ

Ամանապէս անդոանեցաւ և'ի նը մանէ բակլա. և պատասխանեաց, թէ ոչ երկնչելոյ աղագաւ եմ տապկատես, այլ խոնարհութեան սակս. զի թէ այսպէս ձեւանամ՝ և

մարդիկ աղօրեօք ջաղջախեն զկս, զինչ՝ եթէ այսպիսի ոչ էի իսկ։

Եւ յայսմ առակէ խրատիմք՝ յամենայնի խոնարհ լինել, անպարտաւ և անպատճառ։

ԽԳ

Ի չափոցէ զերծեալ 'ի ճեռանէ ոչեռն՝ գնատաեսակ գոլով գնտին. և նորա զայրացեալ ասէ. Երթ կերակուր լեր թռչնոց։ Որում ասաց. Բաւական է 'ի կապճիդ 'ի հուր և 'ի ջուր տանջել. ես պարզաբար կերակուր ախորժեմ թռչնոց լինել։

Միտք առակիս այս է. զի միջոց է ընդ տանջանս և ընդ տանջանս, ընդ զրկանս և ընդ զրկանս. յորոց եթէ պատահի, հարկաւոր է զհանդարտագոյնն ընտրել 'ի հզօրագունէն, և 'ի մեծամեծացն զփոքրագոյն։

ԽԴ

Մի ատեսակ գոլով ոսկն իբրեւ զկերծաւոր, դատէ զլուիսա՝ սակատակ

մարմնով և սեւ բերանով կոչելով։ Եւ նորա արդարանալ կամելով ասէ. Սպիտակ ուրախացելոցն եմ, և արջ նատեսակ ոգաւորաց. բայց 'ի փոր ձոյ ծանուցաւ՝ մի զբնութիւնն ունելով վիքացուցիչ որովայնի փարթամաց և աղքատաց, և յայլն նմանապէս։

Յայտ իսկ է միտք առակիս. զի ձեւանան ոմանք, այլ ոչ զբարոյն կարեն փոփոխել, զի յայտնին ներդործութեամբ։

ԽԵ

Անհանդուրժելի եղեալ այսմ յանդիմանութեան, և զնորայն առակել կամեցաւ զբնութիւն լուսնասէր. Զար ամենեւին ես, հանդերձ դձձութեամբ, ինասիչ որովայնի և ջլաց, և դժուարերազիչ, և վատնիչ լուսոյ աչաց։

Զայս՝ առակս նշանակէ, զի անմիտ կերդաւորք զկերդաւորսն յանդիմանեն, և 'ի միմեանց հրապարակ եղեալ ծաղր լինին 'ի մէջ մարդկան։

ԽԶ

Կազմեալ կայր մաշ 'ի դարմանս հիւանդաց, և անարիւռէր. և այլոց սերմանց և հնդոց ոչ տարեալ՝ այ- պանէն զնովաւ, թէ իշխանն մեր՝ որով կեան հիւանդք և առողջք՝ ոչ այդքան պարծի, և դու ծանծաղա- միտ դողով՝ ըստ որում մաշ կոչիս՝ վէքաս, ոչ գիտելով եթէ ժամանա- կաւոր է պէտք քո։

Նմանէ ինն առակս այնոցիկ, որ առ մի ինչ են պիտանիք, և դուզնա- քեայ ժամանակաւ, և հպարտանան անմտութեամբ. ոչ նմանին տիրապէս խոնարհաց, որ առ ամենայն ինչ պի- տանիք դողով՝ առաւել զինչանին, զի անվրէպ լիցին։

ԽԷ

Ի սերմանց է և անուանեալն ար- ջնդեղ. զոր լուեալ արջու, 'ի ցա- ւել որովայնին առեալ եկեր՝ կարծե- լով դեղ ինքեան վասն անուանն, և

ինչ ոչ օգտեալ՝ ասաց. Ո՞ խռբու և Ճանդի, ոլքան բարի էք որս-
վայնի։

Զանխմասակց և զորովայնամոլեց առակս գուշակէ, զի քան զպիտանին և զսակաւն՝ ընտրեն զբազումն և զլ-
խոշորն։

ԽԸ.

Սամիթ և գինձ, չաման և փեղեն-նայ և նմանք սոցին, 'ի խառուատեսակ խոտոց սերմանց պարսաւեցան
ելբ սակաւք, զի ոչ 'ի կալ և 'ի շեղջ դան, այլ 'ի ծրարս դուզնաքեայս ե-փեալ, և զի եփեալքն արտաքս ձգին,
և զինքեանց բաւականք յաման։ Եւ նոցա լուեալ պատասխանեն, թէ ոչ արհամարհելոյ աղագաւ եմք այն-պիսի՝ այլ պատուոյ, զի եփեալ՝ զո-
ղութիւն տամք կերակրոց, զի դոմի զորութիւնն՝ և ոչ ցողունն. և ելբ զպատուական ակունս 'ի վարշամա-կի ծրարիմք. իսկ դուք այնքան էք
անպիտան, զի ոչ ընդ բազումս էք 'ի կալ, և ոչ ընդ սակաւս։

Տեսաւորութիւն առակիս այսպի-

սի է. զի խմաստունք 'ի խելացնորից արհամարհին իբր զչափաւորս և անպիտանս 'ի վարս աշխարհիս, և զինքեանս իբր զպիտանիս կարծեցուցանեն, ըստ որում անօգուտք են. իսկ ուսեալք 'ի նոցանէ, թէ և մարմնով արհամարհիմք, այլ խրատս մեր համեմէ զբարեգործութիւնս, չափաւոր գոլով իբր զաղս, և իբրեւ զաղկանս պատուական պատուին բանք մեր. և այսպէս ամաչեալ դադարեն, զի ոչ ընդ խմաստունս են պիտանիք, և ոչ ընդ աշխարհավարս։

ԽԹ.

Լուեալ ոմն 'ի Գալիանոսէ, զի ըստ խաշնաշն կոչեցեալ սերմն, տքնութեան օգտակար ասէր, և առեալ սերմանեաց 'ի պարտէզ իւր. և ընդ բուսանել և 'ի լինելն բանջար, առեալ եկեր, և ոչ եղեւ օգուտ հրամանն. նմանապէս և 'ի ծաղկելն. և 'ի գլխաւորելն, և ոչ անդ. և սկսաւ թշնամանել զԳալիանոս և զամենայն բժշկապետսն, խաբեբայ զնոսա կո-

ելով։ Եւ նոցա լուեալ սաստեն նմա ասելով. Անմիտ այր դու, զժամանակն ոչ գիտելով զՃաշակման, անօգուտ արարեր, զի մեղադրես մեզ։

Միթէ առակիս այս է. զի ախմարքն լուեալ 'ի վարդապետաց զպէտս պատուիրանաց, անժամանակ ձեռնամուխ լինին. և անկատար լինելով, թշնամանեն զքարոզն, ոչ գիտելով թէ ամենայնի ժամանակ է։

Բաւական է այսմ սեսակի ասացեալքս։

Ծ

Կարդեցաւ հրամանատար և 'ի թագաւորէն բուսոց Ճակընդեղ 'ի վերայ բանջարոց խբրեւ զտեւող յամարայնի 'ի կերակուր մարդկան։ Եւ խանդացեալ սեխ և Ճմերուկ, և այլ պտուղք բանջարաց և պարտիզաց՝ թաղթ և շաղգամ և սոխպղին, և սկսան չարախօսել՝ եթէ սաստիկ ամենեւին է, և գոչող որովայնի։ Եւ գիտացեալ աղքայի նոցա, տանջել

զնոսա հրամայեաց, եթէ զի յան-
դիմնիք ընդդէմ իշխանի. զի հնա-
զանդեալ պարտիք, և ոչ քննիչք լինել
զի մի անկարգութիւն լիցի։

Ցածուցանէ առակս զյանդգնու-
թիւն մարդկան, որ դատիչք լինին
վարուց իշխանաց, և բազում պատ-
ճառս չարեաց գնեն նոցա. և ոչ ի-
մանան՝ թէ այնոքիւք լուծանին
կարգք իշխանութեանն՝ մինչեւ 'ի
բնաւին ժամանէ իշխանն Աս-
տուած։

ԾԱ

Դարմանեցաւ ոմն 'ի թաղթէ 'ի
գարնան յեղանակի. և զբնաւն կար-
ծելով պիտանի 'ի դարմանս, եփեալ
սերմամբն հանդերձ եկեր, և սկը-
սաւ ործալ, և զայրացեալ թշնա-
մանէր. և 'ի նմանէ յանդիմանի՝
թէ յամենայնն եմ պիտանի գիտու-
զաց 'ի կերակուր և 'ի բժշկութիւն։

Նման իմն է առակս այնոցիկ՝ որ
յարին յոմանս վասն քաղցրութեան
բարուց. և թէ պատահի վասն օգտի
ասասել, թշնամանեն խիստս կար-

դալով. զոր և ուսանին, թէ բանք նոցա ոչ միայն 'ի խրատս էին, այլ և 'ի սասս և 'ի բժշկութիւն հոգւոց։

ԾԲ

Բժիշկ ոմն բնախօսէր՝ ստուգաբանելով զանուն բանջարին կոչելոյ սպանախ, եթէ է հիւանդ. զի սպանանել արժան է նախ, և ապա զնոսա տալ կերակուր, զի այնքան ինասակար է։ Եւ լուեալ ախտացեալ այր՝ ամենեւին հրաժարեաց, ոչ գիտելով թէ ոչ վասն ամենայն հիւանդաց սասց։

Զայս տայ խմանալ առակս. զի զպատուիրանս խմաստունք բնախօսեն, թէ զփափկացեալն սպանանել 'ի դէպ է, քան թէ պահոց նոցա պատուիրան աւանդել. և անմոռ կարծին պահք բնաւ հրաժարելի. այլ ոմանց անդէպ կարծի, բայց ոչ և բազմաց հիւանդաց հոգւով. որպէս և սպանախ ոմանց է չար, այլ բազմաց պիտանի 'ի դարմանս։

ԾԳ

Զխստոր Գալիանոս՝ Թիւրակէ կոչէր շինականաց. և լուեալ մշակի միոյ, առեալ եկեր կայթիւ, և խեղաբարեալ կուրացաւ։

Դատումն առակիս այս է, զի ի մատուանք զցատումն մարդկան բուժիչ ասեն երկիւղն. և թէ անհմտաբար անչափանան, կուրանան հոգւով։

ԾԴ

Եփեալ հողագործ ոք 'ի պարտիզէ իւրմէ զսոխ բազում, կարծելով զնա բանջար, և անկաւ յորովայնածուԹեան ախտս։

Խմանալի է զառակս, զի ցանկուԹիւն ամենայն ելի ըստ կարգի բարի է բնուԹեանս, իսկ յաճախագոյն հեռեւելն և յաւելն քան զչափն՝ ապականիչ է։

ԾԵ

Ի հրապարակս Ճոխաց 'ի միասին սոխ և խստոր ընդ բնաւ բանջարս

կամեցան գնալ ծածկել զինքեանս. և ոչ կարացեալ, զի 'ի հոսոյ ուրն-
կունքն լցան, և աչքն արտասուեաց բազմականին. վասն որոյ և բնաւքն
արտաքս անկան։

Խրատէ օրինակս զչարահամբաւ-
սին և զախտացեալ անզգեղջան հո-
գւոյ ոչ թողուլ ընդ մեզ 'ի ժողովս
սրբոց, զի մի և վասն նոցա խոտո-
ցիմք։

ԾԶ

Հարցաւ ստեպղին 'ի շաղգամէ,
եթէ զի՞ այդքան ընդ երկրաւ մնա-
նես։ Եւ նա ասէ, թէ պատկառեմ
ընդ յանդգնութիւն քո. զի կարմիր
և սպիտակ գոլով՝ տեսիլ զքեզ առ-
նես։ Որոմ ապաբանեաց, եթէ չար
է այս, չար է և բնաւ երկչոտու-
թիւն քո։

Յեղանակս՝ միջին հրամայէ մեզ լի-
նել երկիւղի և յանդգնութեան, զի
չար երկաքանչիւրքն են։

ԾԷ

Հասեալ սեխ և քաղցրացեալ,
արքայի պտուղ զանձն կոչէր՝ թէ և 'ի

բանջարոց, իբրեւ 'ի փոքր շառաւիղէ մեծ. և քամահէր զընկուզն՝ մեծ ծառ և փոքր պտուղ։ Որոմ անդրադարձեաց. Զի եթէ յերկարաժամանակ լինէիր, 'ի դէպ էր կոչումնդ. այլ զի որովայնանց լինելոյ դարշելի լինիս մեծամեծաց և փոքունց. իսկ էս թէ և փանաքի, սակայն բազմաժամանակեայ, և լուսոյ նիւթ՝ ճոխաց և աղքատաց։

Զփափկութիւն յանդիմանէ առակս. թէ և թագաւորաց յանկարգոյն, նա և սակաւաժամանակ և սպասկանելի. իսկ առաքինութիւն թէ և գձուձ կարծի, այլ բազմաժամանակեայ և լուսաւոր։

ԾԸ.

Մտեալ ոմն 'ի պարտէզ՝ կամեցաւ հարկանել զձմերուկ և ուտել. և նորա զարհուրեալ ասէ. Զի՞նչ գործես այր դու, ո՞չ գիտես եթէ ձու եմ՝ էս փղի. եթէ տարցես զնս 'ի տուն քո և պահեացես զգուշութեամբ՝ զի մի բեկայցէ, ծնայցէ քեզ փղորդի՝ գնոց

հաղար գահեկանի։ Եւ ուրախ է՝
ղեալ տարաւ 'ի տուն իւր, և յետոյ
ընկէց զնա արտաքս վիրաւորեալ. և
այսպիսեօք զերծեալ եղեւ 'ի սրոյ։

Խելս խառնել առակս 'ի մեզ կա՝
մի. զի 'ի ժամանակս՝ յորում սպա՝
նողն 'ի ձեռն անկանիցիմք, պատուա՝
կան զմեզ ասել՝ և բազմագինս. զի
յուսով շահիցն 'ի տուն տարեալ,
հիւանդութեամբ և կամ մահուամբ
'ի սրոյ ազատիցիմք. զի հարկաւ կը՝
ցեմք զապականութիւն, թէ և նոքա
զդուշանայցեն։

Ծ Թ

Վարունին՝ կոչեցեալ պտուղ
պարտիզի, մեծարգոյ քան զայլսն
կարծէր զանձնէ վասն կանխու՝
թեանն. և 'ի սեխէ ստգտեալ, եթէ
պատուիս՝ իւր զի մերձ ոչ լցեմ, և
եթէ ոչ այնպէս՝ սակայն անպա՝
տուիս՝ դեղնութեամբ դարշելի է՝
ղեալ։

Յայտնի են միտք առակիս, զի ա՝
նարդք պատուին կանխաւ ժամա՝

նեալք 'ի բնաւ տեղիս. իսկ 'ի մերձ գալ պատուականացն՝ արհամարհին, նա և յաւելի յամեալք՝ ժանտութիւն նոցա եւս յայտնին։

Կ

Եռեւ 'ի վաճառի անփորձ ոք զշամանն, և հարցեալ որ մօտն կային, թէ զինչ ի՞նչ է. և գիտացեալ եթէ տգէտ ոք է, ասեն՝ թէ ձու է սիրամարգի. և նա հաւատարիմ կարծեաց վասն նմանութեանն. և տարեալ եդ 'ի նեղքոյ հաւուն՝ զի ելցէ ձագ սիրամարգի, զոր առեալ եկեր հաւն. և յետ աւուրց երթեալ 'ի տես, և պատահեալ անդ ոսկի եզնակ՝ թռեաւ. և նորա նստեալ ելայր՝ եթէ անժամ եկի, և անկատար զբնաց ձագ սիրամարգին։

Զառակս այսպէս գիտեմք, զի յիմարաց գեղեցկութիւնն պատրող է՝ և հաւատարիմ գոյութիւն կարծէ. այլ խմաստունք գիտեն, զի գեղեցկութիւնն անդոյ է, և զօրութիւնն ճշմարիտ։

ԿԱ

Ի բժշկութիւն որովայնի զինքն քարոզէր կաղամբ, եթէ կերեալ ոք հուամ, զորովայնն լուծանեմ, և ե-փեալ՝ ունդեմ. և բազում ինչ ստու-թեամբ բարբառէր։ Եւ պատրեալ ոմն յաճախեաց յուսել՝ օգուտ վար-կանելով. և սկսաւ ձայն յորովայնէ նորա ելանել, և մեղադրէր իբր սակ և պատրող. և նա ասէ. Զէ ինձ փոյթ, զի հնարեցայ յորովայն քո մնանել, թէպէտ և անարդութեամբ ելանեմ։

Զառակս խմանամք այսպէս, զի խաբեբայք և կեղծաւորք բազում ինչ բանս խօսին պատրանաց, մինչ յարգոյ լինիցին. իսկ յեռոյ յայտ-նեալք, թէ և անարգին և խոտին, ոչ բնաւ պատկառին, զի 'ի գլուխ էլ չարութիւն նոցա։

Ուրեցեն և այս տեսակս. անց-ցուք և յայլ ինչ։

ԿԲ

Ի լերանց խուրաքանչիւր ոք զինքն դիտէր գլուխ այլոց ըստ իրեք իրեք առաւելութեան. 'ի Յոյնս Պոնտոս և Պրոպոնտոս, յարեւմուտս Յեռանէ, 'ի Պաղեստին Կարմեղոս, յԱսորիս Կորդուս, տապանակաւն 'ի Հայս՝ Մասիս, և յԱղուանս Կաւկաս. որպէս 'ի Կիլիկիա Պարխար, և 'ի միջնահայս Տաւրոս, և յայլս՝ այլք. և ընտրեալ յայտնեցաւ Քորէք յաղագս երեւման խաչին Աստուծոյ Մովսէսի, և թաբոր վանն տեառն այլակերպութեան, և լեառն գալիլեացւոց սակս տեառն վարդապետութեանն. և յայսպիսի կարծեաց լուեալ դադարեցին, իրաւունս տալով նոցա:

Զայս խմաստս տայ օրինակս. զի թէպէտ մեծ կարծին փառաք թագաւորք հեթանոսաց, և կամ խրայէլի՝ վասն օրինակին, սակայն մեծ են առաքինութեամբ անձինք խոնարհ մարմնով և շնչով, յորժամ՝ 'ի նոսա բնակէ Աստուած ինքեալ:

ԿԳ

Նման այսմիկ և գեռաք՝ իւրաքան-
չիւր զինքն կարծէր առաջին լինել
այլոց, Փիսոն և Գեհոն, Տիգրիս և
Եփրատէս, գեռն Կուր և Երասխ,
Պառատիս, և այլք եւս. և դառեալ՝
առաջին ցուցաւ Յորդանիս՝ տեառն
մկրտութեանն աղագաւ։

Յայտ իսկ է առակս, զի Ճշմար-
տութիւն հզօր է քան զօրինակն։

ԿԴ

Ա յսպէս և աղբիւրք կրեցին, որ-
պէս և այն որ 'ի Պարս դուստր
համբաւեցաւ Նեզոսի, և կամ որ
յԱնտիոքն, և կամ Արեթուսայն, և
այլք. բայց պատուական ցուցաւ, որ
Ղրախան առոգանէն։

Զայս՝ առակս նշանակէ. զի իւրա-
քանչիւր աղբերքն օրինակ մարդկան
խմաստից են. իսկ որ Ղրախան ա-
ռոգանէր, ատուածայնոյն. զի
Ղրախտ է մարդ, և ծառք՝ առաքի-

նութիւնք, և աղբիւր՝ հոգեւորն դիտութիւն, որ առոգանէ զառաքինութիւն։

Սակաւուք և այս շատացուք. աւցուք և 'ի կենդանեաց։

ԿԵ

Խնդրեցին ամենայն աղքք կենդանեաց՝ ջրայնոց և ցամաքայնոց, ինքեանց թագաւոր յարքայէն Քրիստոսէ. և կատարէ զՀայցուածս նոցա, տալով ջրայնոց զլեւիաթան, և ցամաքայնոց զբեհեմոթն. և հարկաւորաբար սահմանեաց, զի մի զմիմեանց բարձցեն զնշխանութիւնն, թէ և կամեսցին. ուստի անշարժ զլեւիաթանն արար, և միշտ կարօտ ջրոյ. և զբեհեմոթն՝ հեղձանիլ 'ի ջուր։

Իմանամք զառակս ըստ այսմ. քանզի բաշխեաց զթագաւորութիւն երկրի նախախնամաբար, զոմանց 'ի ծովու կղզիս, և զոմանց 'ի ցամաքի, լերամբք և դեռովք ամրացոյց. զի մի զմիմեանց ապականեսցեն զթագաւորութիւն, թէ և կամեսցին։

ԿԶ

Յետ կարդելոյ զնշխանս՝ի ջուրն, Լեւիաթան ազգայ, ասէն, զնմրդ է՝ զի ոչ շրջիս, կամ ասպատակես։ Եւ նա ասէ. Զի թշնամիք առ մեզ ոչ գոն, և անկարօտ եմք իմիք, զմերս վայելեսցուք. և ընդ ձեզ ոչ զբօսանամք, զի մի ծանր ձեզ եղէց։ Եւ ասացեալքն հաճոյ նոցա թուեցաւ։

Ակնարկութիւն առակիս այսպէս է. զի թէ թագաւորութիւն յոյլմէ ոչ նեղեցի՝ի թագաւորէ՝ և բաւական կեանս ունիցի, բարի է խաղաղասէր լինել, նա և ոչ իւրոցն ծանրանալ շրջելով. ապա թէ հարկաւորի՝ի թշնամեաց, անարգութիւն է ոչ տալ պատերազմ։

ԿԷ

Եկեալ ազգ ձկանց առաջի թագաւորին իւրեանց՝և ասէն. Զի ասացեր թէ թշնամիք առ մեզ ոչ գան, և վասն այն ոչ տամք պատերազմ, ա-

հաւասիկ եկեալ մարդիկ որսան ըզ-
մեզ, և դու վրէժ ոչ առնուս. և
սղոցաձկանն հարեալ զնաւ որսոր-
դաց՝ և զբազումն ընկղմեաց. և զայլս
եւս եղեալս պատմէին նմա։ Եւ լը-
ւեալ զբարեացաւնոցա. և ումեմն ձկան
հրամայեաց պահ ունել նաւորդաց,
զի մի այնպիսի լինչ պատահիցէ. և
զնոսա հաճէր. Ո՞չ գիտէք, ասէ, զի
իշխան մեր են մարդիկ կարդեալք
յԱստուծոյ, և վասն այն հարկ է
մեզ լուել՝ զոր լինչ և գործեն։

Հանճարեալ կամի առնել օրինակս
զԹագաւորս. զի յորժամ հզօր ոք քան
զնորայն ելցէ Թագաւորութիւն, և
կամիցի հարկս պահանջել, յանձն
առցէ տալ սիրով, և զընդդիմացեալսն
խրատեսցէ՝ ոչ հակառակել. զի յԱս-
տուծոյ կարգաւորեալ է՝ տկարի հը-
նազանդ լինել հզօրի։

ԿԸ

Դարձեալ եւս զայս պահանջէն.
Եթէ յամենայնի բարեմիտ գոլով՝ ոչ
կամիս ամբոխ լինել, սակայն անյայտ

է թշնամեաց, կարգեսցես երկրորդ քեզ։ Կատարէ յայտմ զհայցուածս նոցա, կացուցանէ իւր երկրորդ ըզկիսման։

Հարկաւոր ցուցանէ առակս զերկրորդն լինել թագաւորի և բնաւ կարգաց. զի ոմն զբարեկարգութիւն պահիցէ, և միւսն զմարտան վանիցէ։

ԿԹ

Հանդիսացեալ կրիայք՝ կամեցան արշաւանել 'ի Կրիտէ, յուսացեալք 'ի սպառազինութիւն՝ զսահմանքն գողով, ոչ խնայեալք եթէ դժուարաշարժք եղեալ պարտին. իսկ կրետացիքն դաւաճանեն, առաջի փախչելով՝ և կասեցուցանեն. և ապա դարձեալ թաւալեցուցանեն, և քար եղեալ 'ի վերայ կրծից նոցա՝ սատակէին ծպղը եղեալք։

Պարտաւէ առակս զայնոսիկ, որ մի լինչ ունին յառաջադիմութիւն, և այնու խրոխտան՝ ըստ որում օրինակի և ելից. և հանդիսացեալ ամօթ կրեն 'ի բազմաց՝ զոր ոչ ունին 'ի տեսա-

կէ, յաղթող'ի վերայնոցա երեւեալ այլք։

Հ

Խորհուրդ արարեալ գորտունք ծովու, ասեն. Ընդէր հեղձանիմք'ի ջուրս ողընդելք և դեղնեալք, ելցուք և կենցաղավարեսցուք որպէս զայլս։ Եւ մի ոմն ծերունի ասէ. Հայր իմ պատուէր եդ ինձ, եթէ զապատման ծովու մի թողցես, զի բնութեամբ է մեզ զանդիտել. արդ գուցէ ելանիցեմք և զարհուրեալ դառնայցեմք, և երեւելի զերկչոտութիւնն մեր առնիցեմք։ Եւ նոքա ոչ հաւանեալ ելին, և լուեալ ոտնաձայն՝ փախուցեալ խորասուզին։

Գտանի յառակս խնամատութիւն, զի նախ գիտել'ի դէպ է զզօրութիւն, և ապա զտեղի կամ զգործ փոխել, և հաւանութեամբ առնել ծերոց. զի մի գիտելով զպակասութիւն մեր, քամահիցեն զայն ինչ, զոր ոչ գիտէին յառաջ։

ՀԱ

Զհուր վառեալ որսորդաց, եռեռ եպլենէան, և առիմամբ կերակուր իւր կամեցաւ առնել. և ընթռնեալ զնա որսորդաց, մերկ զնա արարեալ թողին։

Զննել առակս ուսուցանէ նախ զկրան, որում ցանկամք առնել. զի մի դուցէ առնուլ կամեցեալ, և ըստ մերն թողուցեալք զոր ունիմք։

ՀԲ

Ողբէր ոմն զկրանջիւն՝ ասելով. Արի՛ եկ արտաքս, զի մեծարեալ պատուեցիս զքեզ բազմազան օրինակօք։ Եւ նա ասէ. Զինք ոք զքեզ տեսեալ պատուասէր առ այլս, զիարդ և ինձ լինիցիս. ոչ է այդ, այլ զի ա՛ր՝ան խմոյ ցանկաս։ Եւ ոչ էլ արտաքս, զերծեալ՝ի նմանէ զդուշութեամբ։

Զարթուցանէ զմեզ առակս, ամենեւին ոչ հաւատալ պատիր բանից

այլազգեաց, յայտնի ունելով զվիտս յանցելոց խաբէութեանց առ այլ-զի արեան և սատացուածոց ցանկան քրիստոնէից, և ոչ եթէ պատուեն։

ԺԳ

Զմիւռնեան՝ զոմն 'ի խեցէմոր-թիցն 'ի տուն իւր կոչէր առնել նմա ճաշ, և 'ի մահիճս հանգուցանել. և նա յանձն ոչ առնոյր, եթէ չէ դիւ-րին ինձ մերկանալ և յանկողին մնա-նել, թէ և 'ի ճաշն վայելեմ։ Եւ զդժուարամերկն լինել ցուցանել կամելով, սակաւ ինչ յիւրմէ զնե-ցին թողացուցեալ, ձգէ գազանն քար 'ի պատեանն, և ընթանալ ուստէ։

Զբարսնեենգաւորս առակս յայտ-նի կացուցանէ. զի գտեալ ժամ՝ հա-նել'ի գլուխ զջարիս կամի, զառաջինն թողեալ՝ զեղեալն կէտ. զի իւր՝և ոչ բան նմա պատուելի է. յորմէ ոչ դիւ-րին է զերծանել։

ԻԴ

Ոմն 'ի ջրայնոցն ուտել կամէր ըզ գորտունս, և ոչ կարէր՝ ամրացեալ նոցա. և գոլէր զնոսա, թէ յոյժ գեղեցիկ էք ձեռօք և ոտիւք, և քաղցրաբարբառք՝ հնչելով 'ի միասին խրբեւ զերգիսոնն, ընդէր 'ի մեզ ոչ մտանք, զի վայելեսցուք 'ի տեսս ձեր։ Եւ գի տացեալ զնորհուրդ նոցա ասէն. Ո՞չ ապաքէն վկայեցեր տեսլեան և ձայնի մեր. արդ յայտ է եթէ մարմնոյ մեր ցանկաս, և ոչ տեսլեան և կամ ձայնի։

Մինա գնելառակս բանից խաբէուն թեանց ուսուցանէ. զի բազում անդամ յիւրմէ յայտնի յասացուածոց, թէ և ծածկել կամեսցի։

ԻԵ

Մեղադրեցան ձկունք 'ի թագաւորէն խրբեանց, թէ ընդէր զայլս ուտէք զմանուանն։ Եւ նոքա համարձակեալ ասէն. Վասն զի 'ի քէն ուսաք.

եկեալ բազմաց յերկրպագութիւն, և կանելով կերակուր քեզ արարեր. ըստ այսմ և ինքեանք ևս յանդգնադոյնք եղեն։

Զայնոսիկ յանդիմանել առակս, զի որով ինքեանք գործեն, զայլս բամբասել կամելով առաւել ևս 'ի չարիս յորդորեն՝ քան թէ կարձեն. վասն զի գործով՝ քան բանիւ 'ի դէպ է լինել խրատուն։

Շատ լեցի և այս. եկից 'ի ցամաքայինս։

ՀԶ

Հայեցեալ բեհմոնն յիւրաքանչիւր ազգս կենդանեաց, անկաւոր կարգէ խշնանս, զղուարակ՝ անդէոց, և զկոյ՝ հօտից, զնոխազ՝ հօրանաց, և զառիւծ՝ գազանաց, զձի՝ բեռնակրաց, և զարծիւ՝ թռչնոց վայրենեաց, և զաքաղաղ՝ ընտանեաց. և սահմանեալ իւրաքանչիւր գործոյ ուշ ունել։

Բարեկարգս կամի առնել առակս զթագաւորս, ըստ պատշաճի վիճակեալ զնշխանս և զդատաւորս, նման

նապէս և յեկեղեցիս ուղղել ըզ-
կարգս։

ՀԻ

Զուարակ յոգորելն՝ զեղջիւրան հարեալ 'ի գետին թափէ. և վերըս-տին եկեալ նմանապէս, այլ ոչ եւս հողահանէ։

Խմաստուն ցուցանէ առակս զայնոսիկ, որ միանգամ խրատեալ՝ յառաւելութենէ զօրութեանն զի-ջանիցի։

ՀԸ

Փախուցեալ երբեմն 'ի լծոյ հեր-կանց եզն, և ըմբռնեալ 'ի մշակէն՝ ածաւ 'ի կալն, և յայնմանէ փախու-ցեալ՝ ածաւ 'ի սայլն, և յայնմանէ՝ 'ի բաղում ինչ, մինչեւ անհնար եռեւ զփախուստն. և հաւանեալ մոռա-ցաւ։

Ի դէպ է առակիս այնոցիկ լինել խրատիչ, որք լուծութեամբ ըզ-կեանս՝ և առանց գործոյ կամին ան-ցուցանել. որոց արժան է խրատել սոյնպիսի, մինչ զի յանձն առցէ զա-

մենայն ինչ, քանզի ոչ է հնար քաղա-
քավարիլ անդործ։

ԺԹ.

Բազմութիւն անդէոց ժողովեալք
'ի նեղքոյ անտառաց՝ հրապարակա-
խօս լինէին, հնարս խմանալ՝ 'ի վան-
դէ զերծանել 'ի գայլոց. և լուեալ
գայլոց զարհուրեցան, գուցէ ար-
դեօք լուծցին բռնութիւնք նոցա 'ի
հնարից նոցա. և մի ումն 'ի ծերոց նո-
ցա ասէ. Եթէ ոչ աղօթիցէք՝ զի յին-
քեանց պատճառէ ցրուեսցին, հզօր
է խորհուրդ նոցա։ Եւ յաղօթս կա-
ցեալ, և նուիրեալ պատարագս Ա-
տուծոյ, զմիջոցաւ աւուրն մնեալ՝ 'ի
նոսա կէտք. և փախուցեալք ցրուե-
ցան խորհուրդք նոցա, և ուրախ է-
ղեն գայլք։

Յառակէս խմանամք, զի յորժամ
թշնամիք մեր չար խորհեսցին վան
մեր, և չիցեմք բաւական անձամբ
լուծանել, յաղօթս պարտիմք կալ՝
և 'ի պատարագս ապաւինել, զի Ա-
տուած յինքեանց պատճառէ խափա-
նեսցէ զնոսա։

Զ

Եղեւ երբեմն տրտունջ անդէոց, թէ վասն ծննդոց մեր աշխատիմք, և տեսամք ժողովեմք կալմն, և մարդիկ ճմլեալ զպակուանս՝ առնուն 'ի մէնջ զվաստակս մեր. ելցուք և այլ մի դարձցուք առ նոսա: Եւ մի ոմն 'ի նոցանէ խնամառուն ասէ. Ոչ է այդպէս. զի զաւելորդսն քան զպէտս ծննդոց մերոց առնուն մարդիկ, և խնամեն մարդիկ զմեզ և զծնունդս մեր, զի առնումք շատ՝ քան թէ տամք: Եւ ուսեալք զայս՝ ուրախ եղեն:

Խրատէ առակս զքրիստոնչող սպասաւորս, որք շատ կարծեն զինքեանցն քան զտերանցն զոր առնուն. այլ ուսեալք յիմաստնոց գիտեն՝ զի սակաւ է ինքեանցն:

ԶԱ

Խոյ եհար եղջերօք գլխոյ զծառ բազում անգամ, և թափեաց զերեղջիւրսն, և սկսաւ անիծանել զնա. և

նորա պատասխանեալ, ասէ. Քեզէն
եղեր պատճառ, զի մեղադրես:

Զվայրապար անիծանողն յանդի-
մանէ առակս, որք ցասուցեալ ին-
քեանց ախտիւք՝ զայլս պատճա-
ռեն:

ԶԲ

Հօտ՝ յերթալն իւրեանց շարժէին
դմակքնոցա. և սկսան զնոսա բամբա-
սել հօրանքք այծից, թէ ընդէր նը-
ման մեզ ոչ երթայք պարկեշտս: Եւ
զի նախանձ մանաւանդ էին բամբա-
սանքն:

Յանդիման կացուցանէ առակս՝
զբարս նախանձոտաց. յառաջել ո-
մանց շնորհիւ՝ բամբասեն. և ին-
քեանց՝ զի ոչ ունին, 'ի պարկեշտս
համարին:

ԶԳ

Ոչխարն առեալ յայծից եմուտ'ի
դժուարս քարանձաւաց. և տեսեալ
գայլուն, և եկեալ հարցանէ, թէ
զինչ այդր գործէք: Եւ ասեն Մի-
այնակեացք ասա լինիմք զքառասուն

ը։ Եւ հաւատացեալ գայլուն՝ էթող ինոսա և գնաց. և նոքա ելեալ անտի գնացին խաղաղութեամբ զՃանապարհս իւրեանց։

Ուսուցանէ առակս, թէ անիմաստ է դիպող սուութեամբ ազատել 'ի վտանգէ թշնամեաց. և է անեպեր*։

ԶԴ

Անասուն կենդանեաց եկեալ ասեն առիւծուն. Ամենայնիւ իբրեւ զինչեան վարիս, այլմիով իբրեւ զգող զի զհետ քո անյայտ առնես։ Եւ իբրեւ զվտանգեալ 'ինամանէ՝ հնարեցան խափանել։ Ընդ այս տրամեալ յայտնի ելջէր, և գիտելով նոցա՝ ազատեալք 'ի նմանէ լինէին։

Հնարս առակս ուսուցանէ, 'ի գոլութեանց և 'ի պարտաւանաց յոմանց ազատեալ 'ի չարէ։

* Մարդ է ինանալ զերանակէ խօսիդ, որ ասի երկիրդիմի բանիւ. զինի երբեմն ճապաստանել զճղմարտութիւնն 'ի կարեւոր դիպուածս։ Ըստ այսմ է 'ի վերոյ ներ առակին ԾԸ։

ԶԵ

Բեկեալ առիւծու ոտք՝ որոնցէր զքնաւ կենդանեաց, եթէ հարկաւորք իմ էք՝ զի իշխան գազանաց եմ, ընդէր այժմ ոչ պատարագիք՝ զի գարմանեցայց։ Եւ ասէն. Զի 'ի քէն ինչ ոչ գոյք պահպանութիւն՝ ոչ յարջոյ և ոչ 'ի գայլոյ և ոչ յայլ ինչ գազանէ. նա և ոչ գու իսկ 'ի մեզ խնայեցեր. այլ մեզ պատարագել Աստուծոյ արժան է, որ այդպիսի չարեաց զքեզ պատահեցոյց։

Յայտնի է առակիս միտք. զի չարք յառաջնորդաց յաշխարհայնոց և յեկեղեցականաց՝ տանջելով զհնազանդեալսն, և ոչ յայլոց պահեն 'ի վնասանդէ։ Եւ ըստ արժանոյն անկեալք 'ի չարիս՝ Աստուծոյ գոհութիւն մատուցուք՝ զի ոչ 'ի մէնջ եղեւ։

ԶԶ

Առիւծ և արջ և գայլ 'ի միասին ցանկացեալ, ասեն. Ընդէր լինիմք

հմակերք, ըմբռնեսցուք զոմն'ի մարդ-
կանէ՝ զի ըստ օրինի Իսրաեանց զորաս-
ցեալս մեր կերակուր մեզ պատրաս-
տեսցէ. և կալեալ զոմն արարին խորա-
կարար։ Եւ նեղեալ առնն՝ հնարեցաւ
աղաղակել. հերձեալ փայտ մեծ՝ և ե-
դեալ սեպս յիւրաքանչիւր կողմանս,
և ասէ ցառիւծ և ցայլսն. Օգնեցէք
ինձ պատառել զփայտս. դիք իւրա-
քանչիւր զձեռս 'ի ներքս և ձգեցէք։
Եւ իբրեւ եդին, ոտոյց զերիմն, և
մնացին անլոյծ. և առեալ զոտսպարն՝
սկսաւ 'ի ջախել, և ասէ. Զսկիզբն յա-
ռիւծէն արարից։

Զանհրահանգ տենչանս յանդի-
մանէ առակս, զի պատճառ լինին ո-
մանք չարեաց. և լինի բազում ան-
դամ՝ որ նախ պատահի սկսողաց։

ԶԻ

Արջու ցաւեցին որովայն, Եհարց
ղաղուէս դեղ. և նա ասէ. Յայր բա-
ղեպաշտ՝ է այս անուն դեղ, երթի-
ցես անդ՝ և տացէ մեզս որ յոյժ օ-
գուտ է քեզ։ Եւ իբրեւ մերձ եղեւ 'ի

գիւղն, և շունք անդէն փախուցին. և սկսաւ մեղադրել աղուեսուն. և ասէ աղուէս. Առանց դպրութեան է այրն, որ զքեզ 'ի շանցն ոչ ազատեաց՝ և ոչ էտ դեղ. և արդ եկ տար ցայց զքեզ առ կրօնաւոր ոմն հմուտ ասուածեղէն բանից: Իբրեւ եառեալ կրօնաւորն՝ սկսաւ թշնամանել ըզնոսա. և աղուէսն եցոյց զմուտս մեղուացն. և արջուն մտեալ՝ զմի եկեր փեթակ, և զմի առեալ գնայր. և կրօնաւորն անլծանէր զաղուէսն, իբրեւ զպատճառ վնասուն. որում ասաց, եթէ ամարդութիւնդ արար. քեզ զայդ, ես անպարտ եմ. զի ոչ եառեալ դեղոյ՝ եառեալ փորոյ. և ոչ եառեալ դեղ:

Աշխարհականն իբրեւ զսոդէտ անվնաս մնաց, և 'ի կրօնաւորէն վրէժ առաւ իրաւացի. զի յուրշութենէ բազում այսպիսի պատահի վնաս 'ի նենգաւորաց առաջնորդութենէ, 'ի դազանաբարոյ արանց:

ԶԸ

Եգիտ աղուէս զգայլ կուրացեալ, և եմուտ նմա առաջնորդ վարձուց աղագաւ. և 'ի միում աւուր գայլ թագղեցոյց 'ի ջուր յակամայ. և նա ոչ հաւատայր, այլ ապատէր վրէժ առնուլ. և երկուցեալ աղուէսն կամէր փախչել, և ոչ կարէր՝ զի ըմբռնեալ ունէր. և ասէ. Վաղիւ զապիկ է, տարայց զքեզ յեկեղեցին՝ զի կերիցես մսատաղ: Եւ ուրախ եղեալ գայլն, և գնացին 'ի վաղիւն. և տարեալ զնա՝ արկ շանց. և ասէ գայլն. Այս է մսատաղն ո՛չ քար ապատաւոր: Եւ նա ասէ. այդ է, զի այդպիսի քար կուրի, այդ՝ և ոչ այլ ինչ վայել է:

Իմաստալի է զառակս, զի զղջացեալ նենգագործք և առաջնորդեն կուրաց. և թէ չարաբարոյք հրապուրեն զնոսա, յառաջինն դառնանենգութիւն:

ԶԹ

Գայլու ծերացեալ՝ գնաց առ հօտն, և ասէ. Ապաշխարող այժմ եմ,

և շատ զձեզ տրտմեցուցի, և վասն այն կամիմ գալ, և աւել տան ձեր ածել, զի թողութիւն լիցի, և զմանկունս ձեր պահել յայլ ևս գայլոց. և ուրախացեալ շանցն ասեն. Մի՛ եւ մեզանչել նմա։ Եւ կայր և ապատէր՝ մինչեւ եղեն գառինքն մեծ, և սկսաւ յուսել և'ի պատառել, մինչեւ տեսաւ 'ի բազմաց՝ և սատակեցաւ։

Խրատս այսպիսի ասայ առակս՝ ոչ հաւատալ փութով սովորից չարաց, զի հնացեալ՝ բնութիւն լինի, և առնոյն քարշէ՝ լինելով որդի սատակման։

Ղ

Շանց առաջի եկեալ՝ ասեն թագաւորին խրեանց. Ամենեցուն է տուր պատճառ կենաց, մեք զինքդ ապրեսցուք։ Եւ ապրեսջիք։ Եւ ասեն. Այդ մեզ բաւական է. ապա թէ հիւր ոք մեզ եկեսցէ, զի՞նչ արասցուք։ Եւ ասէ ցնոսա. Այնքան զբզեսջիք, զի դարձեալ մի՛ եկեսցէ։

Հիւրամերժս և զօտարատեաց առակս յանդիմանէ, զի իբր օրինաք ու-

նին զինքեանց հոգալ կեանս, և առեալ զՀիւրս։

ՂԱ

Մկունք համանգամայն հրեշ-տակս առաքեն առ կատուն՝ և ասեն. Զի՞նչ քեզ մեղանչեմք՝ որ այդքան զմեզ հալածես, զի՞նչ քո ուտեմք։ Եւ նա ասէ. Ո՞չ գիտէք եթէ յայն տակս զմեզ դարմանեն մարդիկ, զի զամ-բարս նոցա մեք պահեսցուք. արդ եթէ դուք այնմ՝ոչ մեղնցէք, համար-ձակ շրջեսջիք, և ոչ ինչ ձեզ վնասե-ցից։ Եւ ձեռն 'ի գլուխս եդեալ երդ-մամբ հաստատեաց զայս։ Եւ միանցն համարձակեալ՝ կամեցան զանկեալ հատան առնուլ. և յարձակեալ 'ի վե-րայ կալաւ զբազումն 'ի նոցանէ. և ա-սեն. Ո՞չ ապաքէն երդուար՝ անկեալ հատի ոչ առնուլ վրէժս։ Եւ նա ասէ. Ոչ երդուայ, այլ ըստ սովորութեան ղեկնուլ զձեռս արկի։

Նման իսկ է առակս կեղծաւոր երդ-ուեցողաց, զի և ոչ պայմանի մնան և ոչ ուխտի, այլ ասեն՝ դիպող միայն ժամ գտեալ։

ՂԲ

Ընձու զՀետ վազեալ որսու՝ մի-
ջակտուր եղեալ՝ զբարեալ հարկա-
նէր, և անիծանէր զկորիւնն իւր, և
դարձեալ զղջացեալ ողբայր։

Զխստասիրտս առակս պարտաւէ,
զի 'ի դիպուածս չարի անհամբեր
եղեալ՝ զընտանիս որոմեցուցանէն,
և դարձեալ զղջանան։

ՂԳ

Գոլ զբորէ ըմբռնեաց առիւծ. և
նա ասէ. Զմեռեալս ուտեմ, զի կեն-
դանեաց ոչ յաղթեմ. իսկ դու զի
յաղթող ես, անդանդաղ զայդ գոր-
ծես։

Զբռնակալ իշխանս առակս բամ-
բասէ. զի զդողս պատժէն, և ին-
քեանք բռնակալութեամբ զնոյն
գործեն, ըստ յանդիմանութեան ա-
ռաքելոյ։

ՂԴ

Զձագար Հարց ապուէս և ասէ,
Էթէ զի՞ է զի ես նուազ միշտ, և

դու այդքան ստուար։ Եւ նա ասէ. Զի ոչ բազում ինչ հոգամ, և զբաւական զամենայն ինչ ուտեմ։

Զանհոգութիւն առակս ցուցանէ՝ պատճառս առողջութեան, և զդիւրաճաշակն անհոգութեան։

ՂԵ

Հարցաւ նապաստակ, թէ ընդէր այդքան զանդիտող էս։ Եւ ասէ. Զի շունք և արծիւք և մարդիկ էաս որսան զմեզ, որով իրաւացի է երկիւղ։

Յառակէս խրատել 'ի դէպ է. զի բազում են թշնամիք կենաց մերոց, և միշտ երկիւղիս զգուշանալի է։

ՂԶ

Մեղադիր եղեն ոմանք կղզուս, եթէ զինարդ 'ի ջուր յաճախ գեգերիս։ Եւ ասաց. Զի ոչ շատանան զերկուսիս առ կենօք առնուլ, այլ և մահուամբ մերկ 'ի մորթոյ առնեն։

Զչարաց տերանց առակս ազդէ, զի կենօք տանջի և մահուամբ։

ՂԷ

Զվագր նախատէր որսորդ. զի ձգելով զնատած լեր եկէզ զնա։ Եւ նա ասէ. Զխնդրդ և դու չկցես բաղում ամբաստանութեան արժանի, զի նեռիւ և սրով խոցոտես զնս։

Այնոցիկ առակս նմանի, որ դիմեն զոմանս ապանանել, և ընդդիմակցացն նախատինս դնեն, թէ ընդէր ոչ ասան թոյլ զինքեանս ապանանել, որ ոչ է դիւրին առնել։

ՂԸ

Եգիպտացիքս դիրս լինէ. և գնաց առ ոգէոս ոմանս, թէ քահանայ եմ. և կարդեցաւ քահանայել. և յաւուրս ոմանց բարձրաձայն աղօթէր, և յօժարագոյն զաղ օրհնէր, և 'ի յայլ աւուրսն հեղգայր. և 'ի լինել զենման մատաղոյ, զարիւնն եւս լեզոյր. և 'ի մեղադիր լինելն՝ ասէ. Նուիրեալ է, և այդպէս արժան է առնել։ Եւ 'ի լինելն յայտնի կեղծաւորութեան նորա՝ գնաց դաղտ։

Մեկնեալքս ունի առակս զմիտանելի կերծաւորքն՝ որ բնաւ չեցեն քահանայք՝ պատրեն զոգիս. և թէ միա գնեն, 'ի գործոց իւրեանց յայտնին. և երեւելի լեալ գնան հալածեալք։

ՂԹ

Եռեւ կապիկ զմտալում զի լուանայր, և լուացաւ. եռեւ զի 'ի բարձրաւանդակ եղեալ աղաղակեաց, ասար և զայն կապիկ. ելեալ եռեւ զի գեշ ուստեր շուն, և սկսաւ կապիկ. և 'ի մեզադեր լինելն ասաց՝ պչապգի եմ, լուանամ և սրբիմ. զի ղուռեաեն գործէ։

Պարզ է առակս. զի ղբազում չասելս տեսանելով գործեն, և լուացեալ՝ ասեն սրբիլ, զպատճառն 'ի մոլար առաջնորդն կուռելով։

Ճ

Թագաւոր ոմն եռեւ տեսիլ, զի նրբեւ զանձրեւ լիջաներ աղուէս. և քարոզ հրամայեաց կարդալ. Եթէ

ոք զնոսն մեկնեսցէ տեսել, հազար
տաց դահեկան։ Եւ լուեալ ոմն աղ-
քատ, և երթեալ ասէ. Եթէ երկս
աւուրս տացես ինձ ներուսն, և
յայտնեցից քեզ. և երեալ յանա-
պատ շրջէր խոկալով։ Եւ էր անդ
վիշապ, և ետես զայրն տարակու-
սեալ, ասէ. Զի՞նչ ինձ տացես, եթէ
զտեսիլն յայտնեցից քեզ զթագաւո-
րին։ Եւնա ասէ. Զոր ինչ խոստացաւ
թագաւորն, կէսն քեզ եղիցի։ Ասէ
վիշապն. Երթ և ասա՝ թէ ժամանակ
է այսուհետեւ, զի մարդիկ ներեցա-
ւորք եղիցին և խաբեբայք իբրեւ զա-
ղուէս։ Եւ երթեալ ասաց. և հաճոյ
թուեցաւ ասացեալն, զի նման այնմ
իսկ էին և մարդիկն. և ետ զհազար
խոստացեալ դահեկանսն։ Եւ այրն
առեաց վիշապին, և ոչ դարձաւ ան-
դրէն առ նա։ Եւ զինքն դարձեալ
այլ ետես տեսիլ, զի իբրեւ զանձրեւ
ինչանէր ոչխար. և հրամայեաց կո-
չել զայրն, զի նման առաջնոյն մեկ-
նեսցէ. և նորա զնոյն խնդրեալ ներ-
ուսն, և ամենայն իբրեւ զասպերախտ
երթալ առ վիշապն. և գնաց զանձն

պարտաւորելով, ասէ. Մեղայ քեզ.
յայտնեա զերկրորդս, և տայ քեզ
զառաջին և զերկրորդս. և մեկնեաց
նմա ոչ յիշելով զանցուածն. և ասէ.
Երթ և տես, թէ ժամանակ դայ և
եկեալ է՝ զի մարդիկ խբրեւ զոչխարս
պարզամիտք լցեն. և երթեալ մեկ-
նեաց, և այնմ հաւանեալ՝ եւ նմա
հազար եւ դահեկան. և առեալ առն
տարաւ վիշապին՝ ընդ առաջին և
ընդ վերջինն՝ հազար դահեկան:
Չինի այնորիկ դարձեալ այլ եւս է-
սես տեսիլ. և ահա խբրեւ զանձրեւ
ելանէր սուսեր. և հրամայեաց դար-
ձեալ զայրն կոչել, զի և զայն եւս
մեկնեսցէ. և առն զնոյն խնդրեալ
ժամանակ՝ և երթեալ առ վիշապն, և
նա առժամայն մեկնեալ խբրեւ բա-
րեկամի՝ ասէ. Երթ և տես, թէ ժա-
մանակ է՝ զի մարդիկ յարիցեն բրո-
նաւորք և սուսերաւորք: Եւ եկեալ
պատմեաց թագաւորին, և էառ ըզ-
հազար դահեկանն. և եկ գնաց առ
վիշապն, և ասէ 'ի մոլ՝ թէ ընդէր
այժմ թողից վիշապիս զհազար դա-
հեկանս, և կամ զհինգ հարիւր այլ

եւս բերիցս. այլ հարեցս զվիշապս և սատակեցիցս. և ջանաց հարկանել զվիշապն, և ոչ աջողեցաւ նմա՝ զի խոցս եառնմա վիշապն: Եւ այրն զղջացեալ և խորհէր թէ չարիս գործեցի. զի թէ այլ եւս հարկ հասանիցէ, որպէս եկիցս առ սա. և տեսեալ վիշապին զայրն ստրջացեալ՝ ասաց նմա. Այր դու մի տրտմիր, զի ոչ յանձնէ ինչ արարեր, այլ՝ի բերման ժամանակէ. զի ստեղն քո՝ 'ի կերդաւորաց ժամանակին, և զղջանալն և տալն զհազար դահեկանն՝ 'ի վիճառաց ժամանակին, և հարկանելն զնա՝ 'ի բռնաւորաց ժամանակին:

Ոչ այլ ինչ առակս ցուցանէ՝ բայց զժամանակին գիտել զմարդիկ, և զգուշանալ անձանց, զի զանազան բերէ ժամանակն մարդս, երբեմն նենգաւորս, և երբեմն պարզամիտս, երբեմն բռնակալս. և նման այսոցիկ այլս բազումս:

ՃԱ

Փիլ էտ զորդի իւր ցՊղատոն ուսանել խնամատարութիւն: Եւ նա

զառաջինն հրահանգէր զնա գՃիլ՝ի լսարանին, և նա ոչ կարէր. ապա ա-սաց նմա զդլուխն խոնարհեցուցա-նել յերկիր, և զայն եւս ոչ կարաց. դարձոյց զնա առ հայր իւր և ասաց. Ի տունս Թագաւորի վայել է որդի քո՝ միշտ յոտն կալով, և ոչ յինմ լսարան. զի ոչ նստել կարէ, և ոչ զդլուխն խոնարհեցուցանել:

Յառակէ ասի խրատիմք զնուրա-քանչիւր կարդի ընտրելոցանկաւորն՝ կաղմածիւ և բարուք և այլոք այս-պիսեօք:

ՃԲ

Զուզոտ եհար դարմանիչ իւր. և յոյժ ցասուցեալ ասէ. Տես մի հար-կանիցես զիս յորժամ որոտում լցեմ, ապա եթէ ոչ՝ մեռանիս յինէն: Եւ եհարց, թէ զի՞նչ նշան լցէ որոտմու-թեան քո՝ զի գիտացեալ ոչ հարիցս ղքեզ: Եւ ասէ. Յորժամ տեսանիցես զնեղբին շրթունս իմ կախեալ, և զոտս իմ զի ձայն ոչ ածէ, նշան որոտմուԹեան է: Եւ նա պատասխա-նեաց թէ յամենայն ժամ այդպէս է, և ես ոչ գիտացից:

Զչարաբարոյից նշանակ տայ առակս, զի ցասուցեալ միշտ էն. և երբեմն պատճառէն եթէ արտուամ լինելով խրատու յայն սակս ոչ տարաք, զի ստուգեամբ ծածկեսցեն զչարիս իւրեանց. բայց ոչ է հաւատալի նենգաւոր բարուց նոցա։

ՃԳ

Խոզ երթեալ առ քաղդէացիսն յուսումն աստեղաբաշխութեան. և հրամայեցաւ նմա յարուեստաւորէն ընդ երկինս նայել և պշնուլ. և ոչ կարաց, զի բնաւորեալ է անշրջելի ունել զպարանոց. և ասացաւ նմա լուել։ Իսկ նա երկրաւոր ասաց ունել խնամատուութիւն, ըստ որում զերկիր բրէ։ Եւ լուաւ թէ վասն այնորիկ ոչ պատշաճիս երկնաւորին, զի տարփող երկրաւորի եղեր։

Ի դէպ գոյ այս առակ այնոցիկ, որ նման խոզից միշտ ընդ երկիր բեւեռեալ են. իբր զի յերկինս նայել, և զգործ տեսանել ձեռաց Աստուծոյ ոչ կամին։

ՃԴ

Երթեալ էշկրօնաւորիլ՝ի լեառն. և զարհուրեալ 'ի դառնութենէ տեղւոյն, և զի խրատէին անհեղգ լինել, աղաղակեալ փախեաւ ասելով 'ի խառան 'ի խառան. իբրեւ զի ջերմին է խառան, և յայնմանէ եկն կրօնաւորիլ։

Ի դէպ գոյ այս առակ այնոցիկ, որ յաշխարհէ և յանասնական վարուց դան յանապատ, և զանդիտեալ՝'ի կրօնից և 'ի խրատուս վանձանց, դարձեալ դիմեն յաշխարհ՝ յիշելով զառաջին վարսն։

ՃԵ

Նախատէին զՔորի՝ Իշորդի լինել. Ենա պարծէր մարքն. սակայն պարտեցաւ, զի հզօր է 'ի հօրէ ազգ՝քան 'ի մօրէ։

Բան յայտնի է առակիս, զի անկաւոր թագաւորութիւն և այլն ամենայն 'ի հարց՝քան 'ի մարց պատշաճի։

ՃԶ

Խրոխտացեալ ձի, և հնազանդ լինել հեծելոյ ոչ կամեցաւ, և 'ի շրջել անդր՝ պատահեաց նմա աւուծ, և 'ի նմանէ վախուցեալ՝ հանդիպեցաւ արջ, և 'ի նմանէ զերծեալ՝ դիպեցաւ գայլ, և այլ սոյն պիսիս. և խոնարհեալ դառնոյ հընազանդելով, ոչ վասն դարմանի, այլ զի 'ի չար մահուանէն ազատեսցի։

Ըստ առակիս պարտ է և մեզ առնել. զի ոչ միայն 'ի դէպ է հնազանդել Աստուծոյ վասն դարմանի աստէն առնլոյ, այլ զի 'ի դիւաց և 'ի յաւիտենից չար մահուանէն ազատիցիմք.

ՃԷ

Գոմէշ կամեցաւ լինել երկրաչափ. և 'ի չափելն տարակացաւ, և երթեալ անկաւ 'ի շամբ լինչ, և 'ի վարդապետէն խրատ զանժոյժ մեղադրեցաւ. որում ասաց. Մինթէ զերկինր միայն չափել 'ի դէպ է՝ եղիցիմ ես ջրաչափ։

Գոյ 'ի գէպ այս առակ այնոցիկ, որ զողմուտ վարս Թողեալ, և դարձեալ յառաջինն դառնան սովորութիւն, և մեղադրեալք՝ ասեն. Մի թէ պարկեշտք միայն են, այլ և մեղսասէրք, նոյնպէս և մեք։

ՃԸ

Կամեցաւ գոմէշ զդարմանիչ իւր հարկանել, և ոչ կարաց. և տրտունջէր զԱստուծոյ՝ թէ զեղջիւրս իմ ուղիղ ոչ արար, այլ ողնեալ։ Եւ դարմանչին պատասխանեալ ասաց. Գիտէր Աստուած զչար կամս քո, և վասն այն հնարեցաւ այդպիսի բուսանել քեզ եղջիւր։

Յարմարի առակս ոխակալաց. զի ըստ կամաց նոցա՝ և ոչ երբէք տայ Աստուած 'ի ձեռս նոցա առնուլ վրէժս։

ՃԹ

Պատերազմել վիշապ ընդ եղջերու կամեցաւ, և խորհէր 'ի դաշտի որպէս թէ եղջերու 'ի հարթոջ ոչ

կարէ հարկանել. և՝ ի լինել մարտին, ոմիւք եւս պարտէր, և՝ ի յորջ մտեալ՝ անտի եւս մերժէր շնչով, և մտեալ՝ ի ջուր՝ ուստի ըմպէր եղջերու, զի անդ հարցէ, կոխէր և անդ, և յամենայնի յաղթող երեւէր։

Յարմար իմն է նշանակս միայնակէցաց և բանաստիրուին մարտի. զի թէ երկրաւոր վարուք մարտնչի՝ առ ոսս զերկրաւորս հարկանեն, և եթէ նեղութեամբ՝ խորհրդովք յաղթահարեն, և եթէ՝ ի դիտութիւն միսի՝ անտի եւս հալածեն, և ամենեքեան քովքեք յաղթող լինին նման տեառն։

ՃԺ

Գայլ սպասէր այծեման՝ զի ննջիցէ, որպէս զի այնու ըմբռնիցէ. և դիտացեալ նորա՝ ոչ ննջէր զբաղումաւուրս. և ընդարմացեալ գայլն նիրհեաց, և եկեալ առիւծ՝ սատակեաց զնա։

Եւ այս իսկ առակ միանձանց պատշաճեալ է. զի սպասէ սատանայ ախտիւք ննջել, զի ըմբռնիցէ.

խակ զուարթունք եղեալ՝ տաղտկա-
նայ սատանայ, և եկեալ առիւծն
Քրիստոս սատակէ զնա։

ՃԺԱ

Թոռնէկ Թախանձէր զոգնի՝ Թէ
զորդիդ քո սան առից, և բարեկամք
լեցուք. և իբրու յանձն էառ զկնի
բազում հարկի, ասաց՝ եԹէ վասն
զի գժուարահամբոյր է, մերկացո
զնա՝ զի գիւրին լցէ 'ի գգուել։ Եւ
պատրեալ արար։ Եւ իբրեւ էառ զնա,
սկսաւ ուտել, և ձեռնհաս ոչ ինչ
էր առնել. և գնաց բազում կոծով։

Զխորամանկութիւն այլասեռից
առակս նշանակէ, որ զքրիստո-
նեայս պարզամիտս պատրեն՝ իշխա-
նաց տալ զորդիս նոցա, զի պա-
տուեալ մեծացուցանիցեն. և ոչ
կամին Թէ խրատիչ ոք ընդ նոսա լ-
ցէ, զի Թափուր արարեալ զոգիս
նոցա, ապականիցեն. որ և յայտ է-
զեալ խաբէութեանն, ոչ ինչ կարող
են առնել, բայց միայն ողբան. նը-
մանապէս և 'ի դատերան է տեսանել։

ՃԺԲ

Յոլով զհետ երթեալ որսու և ոչ յաջողեալ՝ զբուծանողն նախատէր, ոչ ուտէր և ոչ ըմպէր և ոչ հեծանէր. որում ասաց. Անձին է մեղ, զի ոչ ժուժկալութեամբ որսաս, այլ հեղգութեամբ։

Զդէմն ծուլից ունի առակս, զի սակաւ աշխատեալք եթէ հոգեւոր եթէ մարմնաւոր, և ոչ յաջողեալք՝ ոչ յանձանց զինեան վարկանին, այլ տրանջեն զԱստուծոյ և զերրատչաց. որ և 'ի դէպ յանդիմանի՝ զինքեանս ունել պատճառս։

ՃԺԳ

Հրաման էլ 'ի թագաւորէն կէնդանեաց ցամաքայնոց՝ գալ առ նա ամենեցուն. և անյապաղ ամենեցուն ժողովեալ եկին. իսկ քարաթաւշ և մողէզ և խլուրդ՝ եկին և նոքա առնուլ պարգեւս. զի այնորիկ աղագաւ կոչէր, զի ըստ իւրա-

քանչիւրոցն պատուիցէ. և ծաղը ամենեքեան առնէին։ Եւ մեծարեաց զամենեսեան ըստ կարգի իւրեանց. Հարց և զնոսա, եթէ զի՞նչ սպաս ինձ ունիցիք՝ զի պատիւ յինէն առ՝ ջիք։ Քարաթաւշ և մողէզ ասեն. Քարամուտ եմք, 'ի բերդս Թշնա՝ մեաց տեառնդ մերոյ մնանեմք. Թէ յաղթել ոչ կարեմք, զօրս անդ հա՝ նեմք։ Իսկ խլուրդ ասաց, Թէ 'ի քա՝ ղաքս մնանեմք՝ ական հատանելով։ Եւ այսմ հաւանեալ պատուեաց և զնոսա զքամահեալսն 'ի բազմաց։

Ընաւից կարօտ լինել մեծամեծաց և փոքունց առակս ցուցանէ, ոչ միայն Թագաւորաց, այլ ամենեցուն՝ իշխանաց և այլոց աշխարհականաց, նմանապէս և յեկեղեցիս. զի պէտս ունին փոքունց և անարգաց։

ՃԺԴ

Թռչունք առ հասարակ զաղա՝ ղակ բարձին, եթէ չար է իշխանս մեր արծիւ, զի միշտ 'ի մէնջ կերակ՝ ուի՝ և յայլոց որսողաց ոչ պահէ։ Եւ

լուեալ ասաց՝ եթէ զինչ քան զայն ձեզ բարի, զի երկու ծնանիմ որդի՝ և զմինն ապականեմ, զի մի ծանր ձեզ եղէց. և մերձ լինելով իմ՝ ոչ ոք կարէ որսալ զձեզ, և այլ ուրեք յանպատրաստի զձեզ գտեալ՝ որսան. զուր զինէն ամբաստանէք։

Ըստ առակիս սովոր են առնել թագաւորք ամենայն, առ իւրեանս ունել որդի՝ ժառանգ թագաւորութեան, զի մի պատճառ կործանման նցեն յաշխարհի. և 'ի մերձ կեալն նոցա՝ չիշխեն ոք գործել չար։

ՃԺԵ

Զոգք ասեն ցծնողս իւրեանց, թէ ընդէր նման արծուոյ և բազէից՝ կենդանիս մեզ ոչ որսայք, այլ զմեռելոց ոսկերս բերէք մեզ 'ի կերակուր։ Եւ նոքա ասեն. Որդեակք, վասն այն արար զմեզ Աստուած երկայնակեաց, զի ոչ զկենդանիս սպանանեմք, այլ շատիմք մեռելոքդ՝ նման քահանայից՝ և ոչ ըստ օրինակի իշխանաց՝ զկենդանեաց յափշտակեմք։

Արդարապէս վարիլ մեզ առակս կամի, ճշմարիտ և անկաւոր ընչիւք մեռելոց. և ոչ զկենդանեաց անիրաւութեամբ յափշտակել. որով երկայնակեաց լիցուք յերկրի։

ՃԺԶ

Բազէ զհետ մռեալ աղաւնոյ, և նորա աղաղակեալ ասէ. Պատարագ եմ տէրունի, մի ինձ մեղանչեր։ Եւ նա ասէ. Պատարագն տէրունի 'ի տէրունի սեղանն լցէ, և ոչ ասա յօդս շրջիցի. և հարեալ էկեր զնա։

Դէմք առակիս առ այնոսիկ է, որ 'ի մահուանէ զանդիտեալք՝ ասեն թէ զանձինս տեառնն նուիրեալք եմք բնակել յանապատ. զոր 'ի դէպ իսկ ասէ՝ թէ այդպիսեացդ տեղն կրօնաւորք են, և ոչ վայրապար շրջիլ յաշխարհի. որում ոչ խնայէ, այլ ըմբռնէ։

ՃԺԷ

Վարուժանի տեսեալ բազմորդի զոր՝ գոհանայր զԱստուծոյ, և խնդ-

դակից նմա լինէր։ Եւ ասէ լոր. Եթէ ճշմարտութեամբ գոհանաս, երանի է քեզ. և անդէն էհար զմի 'ի ձագուց նորա՝ և ըմբռնեաց։ Ասէ լորն. Ահա յայտ եղեւ, զի ոչ վասն Աստուծոյ գոհանայիր, այլ վասն ագահութեան։

Յայտնէ առակս զբարս խշխանաց, զի ուրախ լինին ընդ ձեռամբ անկելոց ընդ յաջողուածսն, ինքեանց վարկանելով զնոցայն՝ քան թէ ըստացողացն։

ՃԺԸ

Ի ձեռաց շահենի յորսալն զերծաւ ձագ հաւքալի, և ասաց. Եղիցի պատարագ տեառն։ Ծաղր արար զնա հաւքալն, եթէ զոր ձեռօք մատուցանես՝ այն պատարագ տեառն։

Զհոգուին ձեւացուցանէ զբարս՝ առակս, զի զկերակրեալս դազանաց և զբեկեալս գայլոց՝ նուէրս տեառն ասէր լինել։

ՃԺԹ

Յին զձագս տեսեալ զհաւու՝ խոստանայր ընծայս սրբոյն մատուցանել Սարգսի, եթէ յաջողեսցէ նմա որսալ զնոսա. և յիշանել առնուլ զորսն՝ խոչ հարեալ 'ի նա կուրացոյց զաչս նորա. և ամբաստանէր զսրբոյն եթէ ոչ օգնեաց նմա։ Որում ծանոյց, եթէ մինասու սուրբք ոչ օգնեն, այլ բարւոյ։

Սատան առակս այնոցիկ, որ 'ի չար գործսն զսուրբս ապաչէն առնիթ լինել, և ոչ օգտին. քանզի անմատուցեալ ախտարացն ոչ անսան սուրբքն և ոչ լսեն անդէպ բանից նոցա։

ՃԻ

Զ Ջայլամն տեսեալ չիտ՝ զի մեծամեծս արկանէր ձուս, և այսմ տարփող եղեալ՝ հարցանէր ուսանել. որում ասաց՝ եթէ հուր ճաշակեմ, և վասն այն այդքան հղօր արկանեմ ձու։ Եւ զայս արդար կար-

ծեալ՝ ճաշակեաց հուր՝ և մեռաւ. ոչ խորհեցաւ թէ ոչ միայն այն է պատճառ, այլ և մեծութիւն հասակի։

Զվայրապար տուփանս առակս յանդիմանէ. զի զգործս տեսեալ հզօրաց՝ ցանկան, ոչ ընդ միտ ածեալ զինքեանց տկարութիւն. զոր թէ և ուսանել կարեն զարուեստս կամին, ծաղր զնոսա առնեն, ոչ զտիրապէս պատճառն յայտնելով, զոր 'ի դէպ է ինքեանց իմանալ։

ՃԻԱ

Ի տունի սրբոյ զատկին էկին թըռչունք ամենայն, և խոստովանութեամբ հաղորդէին օրինացն. էկին ընդ նոսա սակս և հոգամաղ, և խոստովան եղեն քահանային, եթէ ոչ այլ ինչ գիտեմք խիղճ, այլ զի որսացաք միուն և գորտուն՝ և կերաք. և նա մերժեաց զնոսա պիղծ կոչելով. և երթեալ որսացին ձագս սուրբս, և մատուցին քահանային. և այսու պատրեալ արդարացոյց զնո-

սա ասելով. Ոչ դիտացեք խոսաովանել, զի այն ծերացեալ և 'ի թեւոց թափեալ թռչունք էին. և հաղորդեցոյց զնոսա:

Զադահ քահանայից առակս ասոյ պարացոյց, զի զպտուղիկս և զայլս եւս պիղծս մերժեն յեկեղեցւոյ՝ երկեցուցանելով. իսկ յետոյ դարձեալ կաշառօք ընդունին պատճառելով բանս ինչ, և հաղորդեցուցանեն զնոսա:

ՃԻԲ

Երամ ճրնճղկու երթեալ առ ալրադիլ, և աղաչեալ զնա ասեն. Ի բոյն քոյ տեղւոյ մեզ տացես հանել ձագս, և յօձից զձագ մեր պահեսցես: Եւ նա ասէ. Զի՞նչ ինձ առնիցէք, զի զայդ ձեզ առնիցեմ: Եւ ասեն. Աղօթս առնեմք, զի ձագք ձեր առողջութեամբ մնանիցին 'ի վնասակարութենէ օդոյ, և 'ի հանդերձեալն կենաց արժանի լինիք յաղագս արդարութեան ձեր: Եւ յաղագս այսորիկ տեղւոյ եւ նոցա:

Եւ եղեւ 'ի հանել նոցա ձագ, ողջոյ օձ առնուլ 'ի նոցանէ. և տեսեալ տառեղան՝ ահար տատակեաց զօձն. և զրջէր եւս շուրջ 'ի սահմանն, միանգամայն տատակել զօձն յաղագս փրկութեան նոցա:

Զվերտակցութիւն առակս ուսուցանէ տկարաց՝ յերկաքանչիւրսն վայելել փրկութիւն, սակս բարեգործութեան նոցա:

ՃԻԳ.

Բոլ հրեշտակ առաքեաց առ արծիւ, և խնդրեաց զդուստր նորա հարսն, ասելով. Դու տունջեան քաջամարտիկ ես, և ես գիշերոյ պատշաճիմք 'ի խնամութիւն: Եւ յետ բազում թախանձանաց յանձն առ տալ: Եւ 'ի լինել հարսանեացն, 'ի տուէ լոյս ոչ կարէր տեսանել փեսայն. և ծաղր առնէին բազմեալքն. և իբրեւ եղեւ գիշեր՝ և ոչ հարսն էառեա լոյս, յաճախեաց և անդ այպանումն. և վասն այսորիկ փութով լուծաւ հարսանիքն:

Զմիտս իւր առակս նմանեցուցանէ այնոցիկ հաւատացեալ թագաւորաց և իշխանաց, որ զդատերս իւրեանց ըստ իրիւք պատճառի յամուսնութիւն տան այլասեռից՝ խաւարելոց 'ի լուսոյ հաւատոց. ուստի և ոչ է միաբանութիւն, այլ հարկաւոր բաժինս։

ՃԻԴ

Զարծիւ աղաչէալ սկսան թըռչունք միանգամայն որ ընդ ձեռամբ նորա, և ասեն. Անյապաղ զհարկ քո տացուք, մի յարաժամ զմեզ զարհուրեցուցես։ Եւ նա դաշինս էդ, և կայր ընդ նոսա խաղաղութեամբ բազում ժամանակս. և սկսան ապստամբել, այլ և այպանել. և ժողովեալ խորհէին և յիշխանութենէ էւս ընկենուլ. պարծէր և ճընճղուկ, եթէ յաչս նորա ծրտեալ կուրացուցանեմ. և իւրաքանչիւր զօրութեամբ իւրով պարծէր. և սկըսան մարտս էւս դնել. և նորա ոչ տարեալ յարձակեցաւ 'ի վերայ, և ըզ

բազումն 'ի նոցանէ սատակեաց ։

Տպաւորէ այս առակ զդէմն հաւատացեալ թագաւորի և զանհաւատից, որ բարեպաշտութեամբ խաղաղութիւն առնեն. և նոքա ապախտացեալ ապստամբեն, զպատճառս խաղաղութեան ոչ գիտեալով. և այպանեն, և պատերազմ եւս շարժեն, և ակամայ լինին մահ արկանել նոցա անխնայ ։

ՃԻԵ

Հաւ ընտանի յըմբռնեալ սացողին ի բրոց, յոյժ աղաղակէր. և ոմանք մեղադիր լինէին, եթէ զմի վայրապար կռիւս ամբառնաս. ուրոց ասաց, թէ զարհուրիմ, զի ոչ յամենայն ժամու վասն բարւոյ ըմբռնէ. զի երբեմն գլխ 'ի վայր կախէ, և բազում աւուր ճանապարհ տանի. և երբեմն 'ի վերայ կայծականց խորովէ և ուտէ ։

Զբարս տերանց առակս յայտնէ, զի ոչ է յամենայն ժամու բարի 'ի նոցանէ դատանել, թէպէտ և քաղցր

լցեն. այլ երբեմն և չարի ակն ու-
նել արժան է, և զգաստ կեալ, և
պատրաստութեամբ վարել ընդ
նոսա։

ՃԻԶ

Զձագս աղաւնոյն բաղում ան-
դամ առեալ ոմն, և գովէր զմիամը-
տութիւն նորա. որում իսկ ասաց.
Ո՛ խստասիրտ այր դու, եթէ ինձ ա-
սացաւ միամիտ, միթէ քեզ հրամայ-
եցաւ արիւնարբու լինել. արդ յայտ
է թէ չարամտութեամբ գործես։

Զրկողաց առակս բերէ նշանակս
բարուց, զի դիտեն՝ եթէ անոխակալ
առաքինութիւն լինին, առաւել չարանան
և գովեն զվարս նոցա, որով և յան-
դիմանին. զի թէ ասացաւ առաքի-
նեաց համբերել, այլ ոչ եթէ նոցա
հրամայեցաւ զրկել. արդ յայտ է է-
թէ յանդգնութեամբ գործեն։

ՃԻԷ

Երթեալք 'ի թռչնոց ոմանք հիւր
սատրակի, և տեսեալ զնա աղքատ

և գձուձ կրօնաւոր, և ցուցանէին նմա տեղն անձուկ, և'ի դէպ կրօնաւորութեան. միանգամայն զանազան պահանջէին խորտիկս, զոր նա ոչ ունէր. որոց ասաց. Զերկաքանչիւրսդ հակառակ տեսանեմ միմեանց խորհուրդ:

Զսովորութիւն աշխարհականաց առակս յայտնէ. զի զկրօնաւորս տեսեալ, և զտեղի քարանձաւաց նոցա ցուցանեն. և դարձեալ զպարարտակերակուր պահանջեն. որոց խորհուրդն՝ ընդդէմ միմեանց. զի թէ յանձաւս բնակիցեմք որպէս նոքա, զինչդ զանազան կերակրօք զնոսա դարմանիցեմք ըստ կամաց նոցա:

ՃԻԸ.

Աբաղալ բազում անգամ աղաղակեաց և ասէ. Ամառուած իսկ գիտակ է, զի մի և կամ երկու բարբառն զուարթնոցն բաւական է. իսկ բազումն՝ ծուլից վասն է. նա և ոչ այնու ծոյլքն զարթնուն. բայց զի ըղպատճառն հատից զպղերգից:

Զ միտս առակիս այսպէս պարտիմք խմանալ. զի գրոց վարդապետութիւն միանգամ և երկիցս բաւական է ըզդասուց, իսկ բազումն՝ հեղգից վասն է. և թէպէտ յայտնի է քարոզչաց, զի խառնակրօք և ոչ յայտնմանէ օգտին, այլ զի մի պատճառիցեն՝ եթէ ոչ լուաք, վասն այնորիկ յաճախս խօսին:

ՃԻԹ

Պատարագ զենման մատուցանել ագռաւ կամեցաւ, և զբազումս հրաւիրեաց. և եկին յօժարեաքք. և զենումն նորա էր մուկն հնացեալ, և սկսաւ ինքն հարկանել, և ասպա այլքն. և եղեւ պատերազմ. և զբազմաց զաչսն փորեցին, և մերկ զմիմեանս արարին, և սկսան նզովել զպատարագ նորա, և զմատուցողն եւս. և ասաց նոցա, թէ յաշակերտացն ուսայ'ն . . . . զսկիզն մատուցանել, և դարձեալ պատերազմել:

Գիտելի է ամենեցուն առակս. զի զդէմն պատարագին ունին պըղծոյն . . . . :

ՃԼ.

Ապա ՃԸՆՃՂԿԱՑ հրապարակ եղին խորհել զորսողաց. իսկ ծերունի ոմն ասէ. Մի ժողովեք, զուցէ լուեալ զձայն Թեւոց Թշնամեաց, և Թռուցեալ՝ զվատասրտութիւն ձեր յայտ առնիցէք. այլ յեկեղեցիս դիմեալ աղօթեցէք առ Աստուած: Եւ ոչ լուան. և յանկարծակի ձայն առին Թեւոց որսողաց, և լուծաւ երամն:

Զմեզ խրատէ առակս. զի յորժամ՝ չեցեմք բաւական ընդդէմ կալ Թըշնամեաց, բարի է ոչ ժողովելոյ վասն նոցա տալ կարծիս, և դիւրաւ լուծանել յահէ նոցա, և զվատասրտութիւն մեր յայտ առնել. այլ խրատու խմաստնոց յեկեղեցիս յաղօթս ապաւինել:

ՃԼԱ.

Մեռաւ որդի ագռաւու՝ և ոչ ոք յոյժ. եկին և բազումք յողբ նորա, և նա ՃԱՇ մեծ յօրինեաց սգաւորա-

ցին ասելով։ Զայս 'ի քրիստոնէից ուսայ, և ոչ 'ի յայլազգեաց. զի ժլատեալք 'ի լաց, և ոչ 'ի հաց կոչեն. և զայս ագռաւարար, զի զբան պատարագին բժշկիցէ։

Ամենայնիւ առակս զսովորութիւն կարգաց նոցա թիւրս ցուցանէ՝ ըղձպոյ և զպատարագի և զայլոց եւս։

ՃԼԲ

Սովորաբար անծեղ յանտառս վիշտ աղաղակէ, մանաւանդ 'ի տեսանել զոք 'ի կենդանեաց. և 'ի հարցանել ճագոյն՝ ասէ. Զի թշնամիք վիշտ արթուն զիս տեսցեն, և մի յորս ինչ մոտաբերիցեն։

Արթունս զմեզ կամի առակս առնել, զի յամենայնի զաղօթս և զօրհնութիւնս 'ի բերան կալցուք. զի թշնամին ոգւոց մի վատահացի տալ պատերազմ ընդ մեզ. մանաւանդ յորժամ տեսցուք զնա դիմեալ առ մեզ, յաղօթսն յաւելցուք։

ՃԼԳ

Սարեկ էտ զորդի իւր յուսումն քահանայութեան. և նա 'ի սուրճս և 'ի մրմունջս թեւակոխէր. և խրատէր քահանայն՝ օրհնեցութեանց և սաղմոսաց վոյթ առնել, յորմէ սուգ և զղջումն յոգի գործի. իսկ նա 'ի պարյաւէլոյր, թէ հօր իմոյ արուեստ ուրախութեան է պատճառ, իսկ քոյդ տրտմութեան. և թէպէտ ուստաւ յեռոյ՝ թէ տրտմութիւն այժմուս բերէ ուրախութիւն յետոյ, սակայն անլուր եղեալ, դարձաւ 'ի տուն իւր։

Զերկրաւոր ուրախութեանց ըզպատրանս առակս նշանակէ, որով զկատարածն իմանան, եթէ 'ի յոգի վախճանի, որպէս և տէր իսկ ասաց. նմանապէս և հոգեւորն սուգ յուրախութիւն յանդի։

ՃԼԴ

Հրաւիրի 'ի հարսանիս արքնապառաւ 'ի յանդեղէ. և նա հրաժարէր՝

թէ կրօնաւոր եմ և սգաւոր, և վասն այն ոչ կարեմ գալ. հարկաւորէր հանել զսուգնորա, և յանձն ոչ առնոյր ասելով. Եթէ յայսմ աւուր հանեմք, սակայն հարկաւորաբար զդէնուն յայլում աւուր. բարի է բնաւ չհանել։

Զկերպարանս կրօնաւորաց ունի առակս, զի միշտ սեւազգեստք են, և բնաւսգաւորք, 'ի բնութիւն հայելով մարդկան. զի թէ կամեցի ոք աւօրեայ զուարճանալ, ոչ կարէ յերկար լինել. և զայս գիտելով նոքա, բարի վարկանին միշտ նոյնօրինակ կալ։

ՃԼԵ

Ճայեկ առ սագ աղերսէր, եթէ գիշերագէմ գոլով էս՝ 'ի բնաւից պարսաւիմ, և դու այդքան սովտակ և պայծառ լինելով. աղաչեմ զի ուսուցես ինձ նման քեզ սպիտականալ։ Եւ նա կամակից եղեալ՝ ասաց, թէ միշտ նման ինձ լուսացիս ջրով։ Եւ 'ի լուանալն ելանէր սեւ նորա փետուր, և դարձեալ նոյն

դայր օրինակաւ. և զայս դարձեալ աղաչէր ուսանել. որում ասաց. թէ ընդ լուացմանդ զիմն ուսցիս լեզու, ապա կարիցես նման ինձ լինել: Եւ նա յանձն ոչ առնոյր զաղդի մոռանալ զձայն. և մնաց նոյնօրինակ դիշերադէմ:

Մեկնի այսպէս առակս. զի գիշերադէտ են ոգւով ազգ Պարսից. և եկեալ առ քահանայս՝ զպայծառութիւն կամին ուսանել ոգւով. զոր ասաց զնորհուրդ միրտուութեանն ամբողջապահել. և նա լուացեալ'ի մեղաց փոխեալ լինէր. և դարձեալ զճշմարիտն խոստովանութիւն յանձն ոչ առնոյր, նոյն օրինակաւ մնայր սեաւ ոգւով. զոր չէ արժան և ոչ ջրով միրտել, եթէ զհաւատս ոչ ընկալցին:

ՃԼԶ

Սիրամարդ զգեղեցկութիւն իւր ամենեցուն յայտնեալ՝ և գովեալ լինէր, և խորհի թագաւորել. և ոմանք խնամատունք խրատէին, եթէ չէ պարտ 'ի բանս հայել պատրա-

նաց, զի ապգաւ է թագաւորել. և ոչ այսմ ունկնդիր եղեւ: Եւ լուեալ ալեքսին թուչնոց, և եկեալ էհար, և զմանկունս նորա և զազգատոհմն նորա. և բազումք զթեւս նորա և զվեռուրս քարշեալ մերկացուցին. թագաւորութեան ոչ էհաս, և յիւրոց գերեցկութեանց եւս թափեցաւ:

Բազմաց ըստ առակիս պատահեաց պատրիլ, միով յաջողմամբն թագաւորել. հրապուրեալք 'ի բանս յորդորչացն, յինքեանցն անկեալք, այնմ ոչ հասին:

ՃԼԷ

Զերման տեսեալ որսորդի զկաքաւի, սկսաւ խոստանալ նոցա պատիւ 'ի թագաւորաց տուն, և կերակուր ըստ կամաց պատրաստել. և անդէն իսկ արկանէր կերակուր: Եւ ունկնք խոկացեալ ասէին. Զար է խոստումնդ, և զազատութիւն մեր խափանէք, և 'ի կատարածի 'ի կենաց եւս թափէք, և զայլ եւս մեօք որ-

սայք, այդմ ոչ հաւանիմք. և զոսա արձակեալ փախեան։ Իսկ ոմանք պատրեալք 'ի դէմս նորա, դիմեալք 'ի կերակուրն և յընկերն՝ որ աղաղակաւ կոչէր, և անդէն ըմբռնեալ՝ էանց ընդ նոսա ամենայն ասացեալքն յիմաստնոցն։

Զէ ինչ անյայտ առակս. զի որսորդքն սատանայ պատրէ զաղջ մարդկան փափկութեամբ և պատուով թագաւորաց, և յայլոց էաս օրինակաց՝ որ 'ի նոցանէ պատուի. իսկ խմաստունք 'ի կատարածն հայելով ինասուն, զի ասէն զաղաստութիւնն խափանեն, և 'ի հանդերձեալսն բնաւին կորուսանեն, փախստեամբ 'ի չարէն ազատին։

ՃԼԸ

Կիսուի նեղեալ յափրոդիտականէն, և երթեալ խոստովան եղեւ սատրակի՝ եթէ այնքան տանջիմ, զի և ոչ զձագ իմ հանեմ, յայլոց բոյն ածեմ ձու։ Եւ նա խրատ տայր նմա՝ թէ աղօթս արասցես, և տե-

զն մի տացես ախտի, և կենդրուկ մատուցցես Աստուծոյ: Իսկ նա 'ի ջեռնլոյ ոչ դադարէր, թէ և զպատարագն մատուցանէր. ուստի ոչ ինչ օգտէր, այլ եւս ասուի յանդիմանէր:

Զվաւաշտոս առակս յանդիմանէ. թէ և խոստովան լինիցն ողջախոհիցս և ընծայեն Աստուծոյ, և յորժամ ընդդիմանալ ոչ կամին խորհրդոց, անօգուտ մնան:

ՃԼԹ

Ծիծառն արարեալ իւր բնակութիւն 'ի հեծանս տան յաղագս երկիւղի որսողաց. և յընտանի թշնամեացն նեղեալ 'ի միանց, առեալ մաղ 'ի կատուէ՝ եդ 'ի բոյն իւր. և ճաղք նորա մնային անվնաս:

Ըստ խմաստասիրութեան թըռչնոյս առակս խրատէ, զի յորժամ յօտար թշնամեաց զգուշանամք ամրացեալք և յընտանեաց նեղիմք թշնամեաց, 'ի նոցունց յընտանեաց գրացուք ընդդէմ նոցա օգնականս մեզ:

ՃԽ

Հաւբալ զբոյն տատրակի քակ-
տեալ, և իւր շինեալ. և եղեւ նոցա
երթալ առ արդարն արագիլ'ի դա-
տաստան. և անդ զմիմեանս նախա-
տէին և պարծէին, տատրակ ողջա-
խոհութեամբ, կրօնաւորութեամբ,
և հաւբալ պահօք քառասնօրէիւք. և
նախատի ոմն կեղծաւորութեամբ,
և ոմն զայլոց ուսելոց զվաստակն: Իսկ
դատաւորն երկուցն ասաւէ. և հարց-
անէ զհաւբալ, թէ ընդէր քակտե-
ցեր. և նա ասէ. Շինուածոյ նշան ինչ
ոչ տեսի. և վասն այն առի ինձ: Հարց-
անէ դարձեալ. Դո՞ւ էիր եղեալ զոր
առեր: Եւ նա ասէ՝ ոչ: Եւ կամ՞ ոչ
էր երկուհեծան եղեալ'ի վերայ մի-
մեանց. և ասէ՝ եղեալ էր: Հրամայէ
անդրէն դարձուցանել, նա և տու-
գանս եւս տալ:

Զդատաստան ուղիղ հրամայէ ա-
ռակս դատել, և ոչ յատենի մեծա-
բանել, և կամ թշնամանել զմի-
մեանց դատախազաց. և դարձեալ

զի զոր չեցեմք եդեալ՝ ուսուցանէ
ջառնուլ, և զշինուածս յայլոց՝ թէ
և յոռի լցէ, ջքակել։

ՃԽԱ

Խորդք տողին 'ի գնալն Իւրեանց,
և զմիմեանս յառաջատեն, և մի-
մեանց տեղի տան 'ի կռիւն. և ոչ
նման ոմանց առանձնաբար շրջին.
այլ և պահ միմեանց ունին։

Սոյնպէս և մեզ պարտէ միաբանու-
թեամբ և զգոյշ կեալ, և պատիւ մի-
մեանց գնել, և պահել 'ի չարէ զանձն
ընկերին։

ՃԽԲ

Բլուիճակ աղաղակէ՝ կաս. և մի-
սին ասէ՝ կամ. սակայն ոչ կայ, այլ
թռուցեալ այլուր երթայ։

Զատոց յայտ առնէ առակս. զի
բազումանգամ յանձն առնուն զճըշ-
մարտութիւն, և ոչ առնեն։

ՃԽԳ

Արաւր և կռիւ 'ի կղզիս հանեն
զձագս, անեղկեղ ուսուցանելով. և

ասեն. Ահա այսուհետեւ անպարտ եմք, բաւական էք ձեզէն զգուշանալ:

Հարկաւոր ցուցանէ առակս՝ յեկեղեցիս մնուցանել զմանկունս քրիստոնէից, և'ի չափ հասուցանել ընտրութեամբ բարւոյ և չարի. և այնուհետեւ անպարտ լինել 'ի նոցունց:

ՃԽԴ

Զկնաքաղ 'ի մեծի պասի ուտէր ձուկն, և կատաբ իբր խոտաճարակ՝ բամբասէր զնա. և նորա ասացեալ՝ թէ 'ի Յունաց և'ի Վրաց ուսայ քահանայից, և այսու լաւագոյն եւս եմ, զի և զինի ոչ ըմպեմ:

Զբարս որովայնապարար ազգացն առակս յանդիման կացուցանէ, զի զպատճառս եռուն բազմաց դայթագղութեան:

ՃԽԵ

Սարսարակ թուչուն 'ի տուէ պարարի, և 'ի հոգալ զվաղիւ՝ 'ի դիշերի մաշի:

Զհոգածս առակս յանդիմանէ, զի ոչ է պարտ զտեառն մուռանալ զխըրատս, եթէ մի հոգալ զվաղիւն. զի պատ է հոգւոյ և մարմնոյ։

ՃԽԶ

Սոխակ և ցախ սարեկ, և այլք նմանք սոցին երգաբանիչք՝ ոչ միայն երգեն, այլ և սիրեն աննախանձաբար զայլոց երգել։

Աննախանձս առակս զմեզ կամի լինել, զի և յերգելն մերում զօրհնութիւնս, և զայլոց էլս սիրեսցուք զերգելն։

ՃԽԷ

Ճսլուռ այնքան երգէ, մինչ զի յօդոյ յղանայ և ծնանի, մերկանալով զմարմին։

Զօրհներգութիւնս սրբոց առակս կերպարանէ. զի յղանան հոգւով զխորհուրդս բարիս, և ծնանին զառաքինութիւնս, զկիրս մերկանալով զմարմնոյ։

ՃԽԸ

Երկու են բանք թռչնոց, ումն յասել, և ումն յերդել, որպէս այն՝ որ աղաղակէ, լծեա. և միւսն, կէր ճաշ և այլք նման այսմ:

Զօրինակս այսպէս խմացիս. թէպէտ ասելն և երգելն ինքեանց դիտելի է, 'ի մեզ այսպէս լսի. զոգի և զմարմին լծել ըստ դրեան անձին պարտիմք, և մարմին տեառն ուտել ճաշ:

ՃԽԹ

Զիսկան թռչուն զծառս փորէ. և ջուր անձրեւու փտէ, և որդունս ծնանի, և այնու կերակրի:

Զբանսարկուն առակս ձեւացուցանէ. զի նախ զսիրտ հարկանէ, և մեղկութեամբ փտեալ զչար խորհուրդս ծնանի, և այնու կերակրի. զի մեղք կերակուր նորա է:

ՃԾ

Քաղաքդ զհիւանդութիւն բառնայ տեսլեամբ:

Պառաշաձի առակս տեառն, որ բանիւ և տեսլեամբ բժշկէր. սակայն հիւանդք գիւրանան 'ի տեսլենէ սիրելեաց։

ՃԾԱ

Արմատ նոյն է 'ի ծախել և 'ի ծընանել։

Նշանակ է տեառն, զի նոյն է նախ քան զչարչարանս, և զկնի չարչարանաց. նմանապէս և յարութեան մեր, զի նովին մարմնով յառնեմք՝ որով և մեռանիմք. նա և ճշմարտութիւն մի է 'ի սկզբանն և կատարածին։

ՃԾԲ

Մեղու գործատիրութեամբ ըզծաղիկ և զմոմ և զմեղր ժողովէ, և կազմէ զգործ իւր։

Ուսիր յառակէս ըստ կարի բան դրոց ժողովել, և զլոյս օրինաց, և զքաղցր վարդապետութիւն փրկչին՝ 'ի բժշկութիւն ոգւոյ։

ՃԾԳ

Մրջիւն ժիր է յերկասիրութիւն՝ և բազմիմաստ. սակայն երկայնմտութեամբ և համբերութեամբ յանկէ զգործ։

Ծանիր և յօրինակէս, զի զոր սկըսանիցես զգործ բարի՝ հոգւոյ և մարմնոյ, մի ձանձրութեամբ թողուցուս։

ՃԾԴ

Զբոյն մրջեան արջ փորէր, և լեզուաւ ժողովէր և ուտէր. և հնարի մրջիւն սատակել զնա. երթեալ առ պիծակ և գոռեխ և մժեխ և շանաՃանՃ և բրէտ և առ նմանք սոցին, և աղաչէ օգնել իւր աղդայինք. ցաւակցեն՝ հարկանեն զաչս և զլսեալս արջուն, և հարկանէ գլուխս զքարի, և նեխի, և որդունք ելս ծնանին. և 'ի սատակութենէ ցաւոց՝ զբերան բացեալ գոչէր. և նոցա մտեալ յորովայնն՝ խոցոտեն զաղիսն. և նեղեալ դիմէ 'ի հուանս

ջոյ, և անչափ 'ի նեղքս մտեալ հեղ-
ձանի :

Զօրութիւն առակիս այսպիսի է.
զի հզօրք զտկարս արհամարհեն, և
ոչ երկնչին. սակայն խնամատուութեամբ
զօրանան փոքունք, և յաղթեն հզո-
րաց. և այս խնամատուութիւն է, 'ի փո-
քունց խբրեալ 'ի մեծամեծաց երկնչ-
ել :

ՃԾԵ

Յոպոպ թէպէտ արդարախոհու-
թեամբ զծերացեալ հայր կերակրէ,
սակայն բազումք անդոանէին զնա
վասն զաղքահոտութեան. և նորա
գտեալ նիւթ անուշահոտութեան,
'ի լանջս իւր թագուցանէր. սակայն
զչարահոտութիւն իւր ծածկել ոչ
կարէր :

Հայր առակս առ այնոսիկ, որ թէ
'ի բազում ինչ գովելիք ցուցեն, և զմի
ինչ յոռի ունիցին անմեկնելի, այլով
վարուք զնա ծածկել ոչ կարեն :

ՃԾԶ

Ղղկիան զլոյս տեսանել ոչ կա-
րէ, և 'ի ծերպս մտանէ վիմաց, և

'ի խորանիսս 'ի տուէ. և թէպէտ չարահոտ էն և զազրատես, գունդ լինին, և 'ի գիշերի համարձակին։

Նման իսկ է առակս դիւաց և աւազակաց, զի 'ի լուսոյ փախչին պատուիրանաց, և սիրեն զխաւար անգիտութեան. և դեռք ընդ տգէտս շրջին, և աւազակք և գողք սիրով գունդ լինին. թէպէտ չարահոտ էն վարուք, և 'ի գիշերի գործեն չարիս։

ՃԾԻ

Ժողովեալ առ հասարակ թրուչունք զբօսանել 'ի ծով, և ոմանք առ էղերս շրջէին, և ոմանք խորասոյզ լինէին բնաւ։ Իսկ ոմանք վերանային՝ և դարձեալ ելանէին, և հեռանալ ոչ կարէին. իսկ այլք թռուցեալք 'ի լերինս ելանէին, և 'ի նոցանէ ոմանք գային և ընկղմէին. և էղեւ կորուսեալոցն հանդէս առաւել քան փրկեալոցն։

Զմիտս առակիս այսպէս ծանիր. զի ծով աշխարհս է, և թռչունք ազգմարդկան, որ զբաղնուն 'ի վարս աշ-

խարհիս. ոմանք պարկեշտութեամբ վարին, և ոմանք բնաւին 'ի սէր աշխարհի ընկղմին, և ոմանք Յանան պատատանալ բազում անգամ, և ոչ կարեն. և ոմանք 'ի լերինս կրօնաւորին, և 'ի նոցանէ ոմանք պատրին 'ի ցնոր աշխարհի. և ըստ տեառն ձայնի՝ բազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալ:

ՃԾՐ

Մարախ զոր անուանի Ասուծոյ, զի նորին հրամանաւ ժողովի ապականել զերկիր, և նորին ակնարկութեամբ առաքի տարմ'ի ջնջել զնա:

Ըստ կամաց տեառն՝ առակս ցուցանէ զօրաժողով լինել թագաւորաց՝ ապականել զերկիր աւարաւ, և ըստ նորին խնամոցն զօրանան ոմանք հալածել զնոսա:

ՃԾԹ

Մեղուաքաղ մեղուի ոչ ինչ ասել որքան 'ի տան իւրում ելցէ. իսկ արտաքոյ գտեալ՝ կլանէ զնա:

Բանաստեղծն յաղթել մեզ ոչ կարէ որքան յեկեղեցի կայցեմք և մոռք առ Աստուած. իսկ արտաքոյ դառեալ՝ արկանէ զմեզ 'ի բազում մեղս : Զայս ուսանիմք ըստ առակիս :

ՃԿ

Թիլթղունք որքան յօդս շրջին, ոչ ինչ գործեն ինեաս. իսկ խոնարհեալ յերկիր՝ ծնանին թրթուր ապականարար երկրի :

Ըստ այսմ զայս իմանամք զառակ. զի խոհականութիւն մեր որքան յերկինս շրջի, շահի և ոչ ինասի. իսկ թէ յերկիր խոնարհի, ծնանի խորհուրդս զազրութեան, և ապականէ զմարմին :

Աւարտեցաւ առակք բարոյականք և առասպելականք : Դիցուք և սակաւուք առակք ստեղծականք, որ նման ասացելոցն կերպարանէ զՃշմարտութիւնն աշխարհօրէն և եկեղեցականատպէս :

ԾԿԱ

Թագաւորին հնդկաց էր թռչուն մի, որ արկանէր մարգարիտ և ականս խրթեւ զձու. և լուեալ ազգային Յունաց՝ այնմ ցանկացաւ. և առաքեաց հրեշտակ և խնդրեաց. և նա եառ. սակայն և նա հայցեաց զձի նուրա, որ երագութեամբ անցանէր ընդ թռչունս։ Եւ թէպէտ ծանր էին միմեանց խնդիրքն, անյապաղ երկաքանչիւրքն կատարէին. և՝ ի գալ հաւուն՝ ի Յոյնս՝ ըստ օրինակի այլոց ածէ ձու։ Եւ ձիոյն երթեալ՝ ի հնդիկս՝ կաղայր, և ոչ բնաւ արշաւէր. դարձուցանէ թագաւորն հնդկաց զերիվարն, մերագրելով յոյժ. և նմանապէս ամբասանելով զթռչունն. և երկաքանչիւրքն յինքեանցն երթեալ տեղիս, լինէին ըստ առաջին օրինակին։

Ոչ այլ ինչ առակս նկարագրէ՝ բայց զայս, զի խրատքանչիւր թագաւորութեան ճոխութիւն Աստուծոյ տուեալ է. և թէպէտ հնարին՝ ի միմեանս դարձուցանել, ոչ կարեն։

ՃԿԲ

Որդի թագաւորին Յունաց խընդ-
րեր կին. և զոր հայր իւր կամէր, և
այնմ ոչ հաւանէր ասելով, թէ յա-
մենայն թագաւորութեան խնդրեա-
ցես՝ զի բնաւ ջքնաղագեղ լցէ։ Եւ
հօրն յայսմանէ նեղեալ, կոչէ զդաս
խմաստասէրսց հաւանեցուցանել զը-
պատանին. և նոքա բանիւք խմաս-
տութեամբ ոչ կարացին. և հնարին
ազնիւ կերակուր ըստ սովորութեան
պատրաստելոյ՝ 'ի զանազան արկա-
նել անօթս, ոսկեղէնս և արծաթե-
ղէնս, փայտեղէնս և քարեղէնս, և
յայլս այսպիսիս. և 'ի ժամ ճաշոյ
մատուցանեն նմա, և յամենեցունց
հարկեն առնուլ ճաշակ. և 'ի ճաշա-
կելն ասաց. Մի է ամենեցուն համ,
ընդէր ոչ զանազանս պատրաստեցիք
կերակուրս։ Ասեն խմաստունք. Օ-
րինակ այդ քեզ լցէ. մի է բնաւ յա-
մենեսեան խորտիկդ, նոյնպէս մի է
բնաւ կազմած մարմնոյ կանանց,
ճաշակ պիտոյից։ Եւ այսու հաւանի
պատանին։

Զ ցանկասէրս առակս յանդիմանէ. զի պէտս կանանց 'ի զանազան կազմածս մի է. և վասն որդէծնութեան տուեալ է, և ոչ է անօթի ցանկութեանն։

ՃԿԴ

Իշխան ոմն էր չար. և նեղեալ 'ի նմանէ՝ որ ընդ ձեռամբ նորա էին. և ծեր ոմն խրատ եւ, թէ այլ ազգ ոչ զերծանիք 'ի նմանէ, բայց եթէ 'ի կարծիս արկանիք նախանձու կընոջն։ Եւ զայս լուեալ իշխանին, հիւանդացեալ մեռանի, և փրկին հնազանդեալքն։

Զբուռն նախանձն յայտնէ առակս զկանամբեաց. զի թէպէտ և խրատասիրեալք լցեն, յայտպիսեաց իրաց բեկանին և մահանան։

ՃԿԴ

Ա յր ոմն կատաւագործ բնակեալ էր 'ի Տամբատ. և իւր սովորութեան բաղք էր՝ առ 'ի զօրացուցանել զորդին՝ ասէր. Թագաւորեմք արուեսս

տիւս։ Եւ 'ի հարցման որդւոյն՝ թէ ո՞րպէս, ասաց. Սանդր շուոյն իւր զթագ դնեմ 'ի գլուխս, և զսուէծ իւր զսուր վերացուցանեմ, և 'ի գործ կոտաւին իւր յաթոռ նստիմ, ընդ ոտիւք ունելով պատուանդան, և զկոտաւ ժողովեմ իւր աշխարհ հնազանդեցուցանելով, և ձայն սանդերն իւր զձայն փողոց. և այլ ինչ ասացեալ այսպիսի։ Յայսմանէ սիրէ զհայրն, զդուստր թագաւորին Պարսից խնդրեալ իւր, և երթեալ խընդրէր. և նորա զայրացեալ հրամայեաց սպանանել։ Եւ գիտացեալ՝ թէ 'ի Տամբատայ է այրն, հրամայեաց նեբել։

Յուցանէ առակս, թէ նեբման արժանի է առ Աստուած և առ մարդիկ անգիտութեամբ մեղանչելն։

ՃԿԵ

Ի թագաւորէն Աղեքսանդրէ մեծարեալ լինէր երկրագործ՝ քան ըզհիւան, յորժամ ապարան նմա չինէին. և նախանձ ընդ նմա կալան հիւ-

սին և հողագործ. ոմն ասէր զբնակ-
կութիւն առնել, և ոմն զկերակուր.
նորա լուեալ խմաստասէր գողով,
կոչէ և այլ եւս խմաստունս 'ի մէջ
նոցա առնել ընտրութիւն պատուոյ։
Եւ ասեն նոքա, եթէ առաջին ասա-
ցաւ Ադամայ գործել զերկիր. բայց
դարբնութիւն կանխաւ ցուցաւ. և
զի զիւր առնէ զգործի՝ և նոքաւ զհիւ-
սան և զմշակի, վասն որոյ առաջին
է պատուով. իսկ հողագործն եր-
կուցն պէտս ունի։ Եւ այսպէս հա-
մոզեն զնոսա չնախանձել։

Տեսութիւն առակիս յայն հայի,
թէ 'ի հոգեւոր արուեստն՝ թէ 'ի
մարմնաւոր, պատուոյ արժանի են
առաջինքն, թէ և 'ի միմեանց պէտս
ունին։

ՃԿԶ

Ալբային Սողոմոնի հանդերձ ոմն
կարէր՝ արուեստիւ աքանչելի, և յոյժ
ուրախացեալ պանծայր. և բեհե-
զագործն ընդդէմ՝ զիւրն յարգէ ա-
լուեստ։ Եւ լուեալ ալբայի կոչեաց
զնոսա և ընտրեաց 'ի մէջ նոցա, թէ

անկազմ է կուսաւ առանց կարողի. սակայն զի կարէ արուեստիւն, եթէ չիցէ արարեալ կուսաւ. զի և Ադամ զտերեւ եդիտ, և արար հանդերձ։ Եւ այսու առաջին ցուցաւ կուսաւադործ՝ քան զկարող։

Ամենայն ուրեք առակս անպարտաւ ցուցանէ զկուսաւադործ, զոր բազումք այսպանեն։

ՃԿԷ

Պղնձագործ և երկաթագործ 'ի խնամենալն՝ արուեստիւ Ճոխաբանէին. և'ի լինել հակառակութեանն, յասեան եւս երթային ծերոց. և նոքա մեծարգոյ ցուցին զերկաթագործ ասելով, թէ հասարակաց օգտակարն պատուական է։

Ոչ լինչ պատուական՝ քան զհասարակաց օգուտն առակս ցուցանէ՝ 'ի մարմնաւորսն, և նմանապէս և 'ի հոգեւորսն։

ՃԿԸ

Ի թագաւորելն ոսկի խնդրէր երկրպագութիւն յամենայն նիւթոց,

և թագաւոր զանձն կոչէր, զի պատ-
կեր էղեւ թագաւորի. և նովաւ ամ-
բարտաւանէր գործոնքն եւ'ի վերայ
արծաթագործաց և այլոց. և 'ի
դալն ամենեցուն՝ ոչ էին ցորեան ա-
սելով. Կամ, մինչեւ նախ ինձ է-
կեալ երկիր պագանիցէ։

Փոխոխելն առակս ցուցանէ զնիւ-
թականքս, զի ոչ միշտ պատուին. զի
երբեմն մեծարի ոմն, և երբեմն ան-
պատուի. վասն բազում անգամ վը-
տանգի սովոյն նիւթք ամենայն իսո-
նարհին ընդ ձեռամբ ցորենոյ, նման-
ապէս և յայլսն է տեսանել. ըստ
այսմ և յարուեստաւորս պատահի,
որովք չէ պարտ ամբարհաւաճել։

ՃԿԹ.

Խաղախորդ ոմն էանց ընդ դուռն
մորթեգործի, և ակսաւ այպանել,
և չարահոտ զնա կոչել. և նորա եր-
թեալ թշնամանէր ասելով. Եթէ
յոսկեգործաց և կամ յայլոց եւս
նախատ լինէի, 'ի դէպ էր. դու ժա-
հահոտ քան զիս, զինքդ համար-
ձակիս։

Զբաղումն ցուցանէ առակս՝ թէ անհամբերք լինին, յորժամ քան զինքեանս 'ի չարեաց բամբասին, և իրաւունս տան արդարոց յանդիմանութեան։

ՃԿ

Ի մէջ ծերոց բանք հինք պատմէին։ այր ոմն բրուտ ծեր իրս ինչ ասէր, որում ոչ կարէին հաւատալ, և հաստատէր՝ թէ յորժամ յաշակերտութեան էի Աստուծոյ, լուայ. և այլ ոմն՝ թէ այդպէս ոչ լուայ յԱստուծոյ, յորժամ աշակերտեցայ նմա շինողութեան. զի նախ է լինելութիւն երկնի և երկրի, քան զլինելութիւն մարդոյն։

Զբարս ծերոց ցուցանէ առակս, զի վասն հնութեան բաղում ինչ ասեն։

ՃԿԱ

Այր ոմն զանկեալ գէշ եկեր 'ի փողոցի, և անդէն եռեռս զկոշկակար՝ զի առատամբք պարզէր զմորթ, և սկսաւ բամբասել զնա. որում ասաց.

Այր դու, եթէ մեռեալս մորթ այսպէս չար է, և այն զի ոչ ուտեմ, որչափ այդ զի մարմին ուտես, և այն անզէն։

Զյանդգնութեան զոմանց առակս նշանակէ. զի զմեծ չարիս զինքեանց ոչ տեսանեն, և զայլոց սակաւն դատեն ըստ տեառն ձայնին։

ՃԺԲ

Յաւուր զատկի ասին էկին հաստատացեալք հաղորդել, և զոմն հրվիւ բռնադատէին հաղորդել. և տեսեալ՝ 'ի բաց փախեաւ ասելով. Ոչ ճաշ է զի կերայց, և ոչ հրամանք։ Եւ ասեն. Այդքան է խորհուրդն։ Եւ ոչ հաւանէր առնուլ, այլ 'ի բաց գնաց։

Զարամենայն ուստեք առակս ցուցանէ զանդիտութիւն վայրենացելոց ոմանց, զի յերեւելիս միայն հային և դայթագղին։

ՃԺԳ

Այր ոմն յաւուրս Գալիանոսի աւուրջ ունելով կաղմուածս մարմնոյ,

արհամարհէր զբժիշկս որ բնախօսէին զառողջութենէ. և անկարօտ ասէր զինքն արուեստին։ Եւ եղեւ նմա հիւանդանալ. և երթեալ առ բժիշկս, և 'ի նոցունց յանդիմանի. և ուսեալ զակարութիւն մարմնոյ, միշտ դեղերէր առ նոսա։

Կամք են ասել առակիս. զմարմին կարօտ ասել միշտ բժշկի, և զհոգի՝ խրատու վարդապետութեան. և չէ պարտ արհամարհել և ոչ զմինն, զի ոչ միշտ առողջ եմք։

ՃԺԴ

Պատահեաց երբեմն Գալիանոսի բնախօսել զառողջութենէ մարմնոյ. ընդ նմին ասէր. Եթէ ոք զգոյշ լինիցի յուտել և յըմպել, անկարօտ լիցի արուեստիս մերում։ Եւ լուեալ այր ոմն՝ ոչ ուտէր և ոչ ըմպէր. և յայնմանէ չարաչար եղեւ նմա հիւանդանալ, և թշնամանէր զԳալիանոս. և նորա լուեալ՝ ասէ. Ո՞չ գիտես անմիտ այր դու, եթէ արարիչ ոչ եմք բնութեանս, այլ օգնական. և դու

ընդէր զբան իմ ոչ իմացար, և հաւա-
սարապէս ոչ վարեցար ։

Ուսուցանէ բանս , եթէ հմտու-
թեամբ արժան է լսել զբանս վար-
դապետաց և զբժշկաց, և հաւասա-
րութեամբ վարել, յորմէ առողջու-
թիւն է հոգւոյ և մարմնոյ, և յանչա-
փութենէ խոյս տալ՝ յառաւելու-
թենէ և 'ի նուազութենէ . վասն զի
չարն յերկոսինդ է ։

ՃԿԵ

Իմաստասէր ոմն էառեալ զմանկա-
դործ, զի հատանէր և տնկէր . և ա-
սաց . Այր դու , գործող էս և ոչ
տնկող ։ Եւ հմտութեամբ էառ պա-
տասխանի, եթէ 'ի դէպ է, զի և Ա-
դամայ գործել և պահել ասացաւ և
ոչ տնկել, զի անկարօտ էր տնկելոյ .
այլ մերս ապականելի միշտ կարօտ է .
և դարձեալ եթէ տնկասէր եղեալէր,
ոչ արդեօք մերժեալ լինէր , և տար-
ժանելի զերկիր գործէր միշտ սեր-
մանելով ։

Բանս խրատու յառակէ ուսա-

նիմք, եթէ ամենագործք ամենասէրք լեցին, յերկար ժամանակ 'ի ամենոջ և յայգոջ և 'ի գրախտի կայցեն, և 'ի գործել զերկիր ըստ իւրաքանչիւր ամի. մի՛ մատնիցեն միանգամայն հը-զոր զբանականն ցուցանել զգիտու-թիւն:

ՃԿԶ

Զօրական ումն քաջամարտիկ 'ի թագաւորէ հարկաւորի եղանել նա-հատակ ընդ այլում թագաւորի միամարտի: Իսկ նա զանգիտեալ վասն ծերութեան, և հնարի զհերս նեռկել և զմօրուս. և 'ի լինել մար-տին՝ պարտի, բնութեանն ոչ օգ-նեալ:

Նշանակ առակիս այսպիսի լիմն է, զի 'ի տեառնէ նահատակ կոչեցաք՝ պատերազմել ընդ դեւսն. և եթէ ծեր մեղօք լցեմք՝ և ձեւանամք բա-րեաւ՝ պարտիմք, յորժամ զնոյնն կա-կապէս ոչ ունիցիմք զառոյգութիւն բարւոյն:

ՃԿԷ

Գող եմուտ 'ի տուն Ճոխից առ-
նուլ ինչ. և մտեալ այրն ետես, և դան
հարկանել կամեցաւ և ըմբռնել. և
փութացաւ գողն և հարկանէր զայրն
և ասէր. Ընդէր զիս տեսանելով
աշխատեալ՝ ոչ ասացեր վաստակիլ:
Եւ աղաղակեալ և կոչեալ զայրս, յա-
տեան զգողն կացոյց. և հարցեալ
դատաւորին՝ Եթէ ընդ որոց բա-
ղեաց գործոց ողջոյն խնդրէիր, էա
պատասխանի. Եթէ նմա ոչ էր բա-
ղի, սակայն ինձ յոյժ բարի: Յայս-
մանէ ոչ ինչ օգտի, այլ կախեալ հրա-
մայի:

Զչարագործաց զսովորութենէ
յայտ առնէ առակս, զի թէպէտ
զայրս վնասեն՝ ինքեանց բարի կար-
ծեն, յորոց ոչ արդարանան, այլ ատ
պատժին՝ և անդ:

ՃԿԸ

Զքահանայ ոմն ըմբռնեալ աւա-
զակ՝ սպանանել կամելով. և ելն 'ի

վերայ նորա հոգի զօրութեան, և յաղթահարեաց զնա, և ասանջէր ըստ արժանի գործոյն. և նա աղաչէր և ասէր. Քահանայ էս և միշտ ասես՝ խաղաղութիւն ընդ ամենեսեան, և այլ էլա նման այսմ։ Ասէ քահանայն. Ո՛վ չարագործ, և էս վասն զխաղաղութիւնն ամբողջ պահելոյ տանջեմ զքեզ, զի ոչ սիրես զխաղաղութիւն։

Զհակառակաբար գալն մեզ առակս յայտ առնէ. զի ոչ վասն խռովասիրութեան 'ի դէպ լոյնէ հակառակել, այլ զի զխաղաղութիւն մի ասցուք յապականութիւնս՝ հնարելի է։

ՃԺԹ.

Յաղագս վայրապար շրջելոյ մանկանն, ասաց մայրն՝ եթէ մարդագայլ է որդեակ, արտաքոյ։ Եւ ելեալ մանկանն, ետես զծեր ոմն կորացեալ՝ շրջեալ աջոք, և կարծեցեալ մարդագայլ, անկաւ առ մայրն՝ և ասաց. Զէ՞ ինչ հեռի 'ի գայլոց՝ զի չար էր ծերն։

Ի դէպ է յառակէս ուսանել, եթէ չէ ինչ պատուական ծերութիւն, յորժամ չարաբարոյ լցէ։

ԾԶ

Թագաւոր ոմն զբազումն կոչէր՝ի զինուորութիւն ինքեան, և խոստանայր զկնի պատերազմին Թագաւորութիւն յաւիտենական, և պատուիրէր մի՛ ինչ ունել հին զէն, այլ իւրով զինու զինիլ, զի յաղթող լիցին։ Եւ յօժարեալ զինուորացն. և՝ի լինել պատերազմին, ամրացեալքն Թագաւորին զինու, անխոցոտելի մնացին։ Իսկ զինակիրքն հին՝ Թէպէտ և զնորն ընկալան, վիրաւորեալք մեռան, մնացեալք անպատկա՛ի պատկիլ յաղթողացն։

Ըստ առակիս՝ Թագաւոր Ճշմարիտ Թագաւորաց Քրիստոս է, և կոչէաց զբազումն՝ի հոգեւոր զինուորութիւն. և զոմն մեղաց չհրամայէ առնուլ ընդ զինու արդարութեան, զի հակառակ միմեանց են. ապա Թէ ոչ՝՝՝ի պատերազմի չարին մահանան, և պատկի արդարութեանն ընդ յաղթողն ոչ հասանեն։

ԾԶԱ

Այր ոմն մնկաաէր մնկեաց 'ի պարտէզ իւր քաջ ուղէշ, և ոռոգանէր գեղեցիկ աղբիւր զառունկն. ուստ և փուքանակի պտղաբերի. և ուրախ յոյժ լինի մնկողն. ժանգատեսիլ և այլուստ գայր ջուր, և սլատղակորոյս զձիթենին առնէր. և յորժամ ընդ այլ դարձուցանէր զնա, դարձեալ պտղաբերէր քաջապէս. և այսու եւս զուարճանայր մնկողն։

Պարտէզս անուանէ առակս զպէսպէս զառաքինութիւնս մնկեալ յոգի առաքինասէր. իսկ ձիթենի՝ ողորմութիւն, զոր սիրեաց, և ընդ այլն եւս մնկեաց. և աղբիւր՝ գիտութիւն, յորմէ մարգասիրութիւն քաջապատուլ լինի. իսկ ժանկաջուրն ապականիչ ախտքն՝ փառասիրութեան և այլն. և 'ի բաց դարձուցանել՝ հատանել զախտն, և վերստին ուրախանալն ընդ պտղաբերին։

ԺԶԲ

Արք երկու Ճանապարհորդէին 'ի քաղաք ուրեք երթալ հեռի. և ոմն յրսկզբանն արիաբար երթայր, սակայն էտ զետէ հեղգայր, և աստ և անդ անկանէր 'ի Ճանապարհին. և մերձ 'ի քաղաքն բնութիւնն հեղգացեալ, և յաւազակաց մեռանի։ Իսկ միւս ծոյլ յրսկզբան էր, և առաւել քան զառաւել փութայր, և մերձ 'ի քաղաքն ամենեւիմբ արագէր. և մը-տանէր, և 'ի հանդիստն վայելէր։

Դէմք առակիս առ պղերգս է և արիս՝ զի յոյլք սակաւ ինչ Ջանան բարութեան Ճանապարհին՝ որ 'ի կեանս տանի, և ապա ծուլանան օր ըստ օրէ. և 'ի կատարած կենաց՝ զոր ա-ստանալ պարտին, բնութիւնն լուծանի, և 'ի ձեռաց գիւաց մեռանին, զրկեալք 'ի մոկց կենաց։ Իսկ թէ և արիք 'ի սկզբանն հանդարտ եմն շարժին, միշտ ուսմամբ յառաջատեն, և մերձ 'ի մտանելն 'ի կեանս՝ երկեալք 'ի մարմնոյ առաւել փութան, և 'ի բարիսն վայելեն։

ԾԶԳ

Վաճառական ոմն ունէր մարգարիտ մի մեծ յոյժ, և անդին պատուականութեամբ, և ակունք բազում և անդիւտ առաւել. և լուեալ բազմաց, 'ի գնել փութացան. և էկեալ՝ և ոչ գտեալ գին, էգ գնոսա վաճառականն 'ի գլուխ սեանն քարի յոյժ ողորկագունի. և ասաց՝ էթէ ոչ է գին. այլ էթէ էլանիցէ և առնուցու ոք, նմա լիցի։ Եւ ջանացեալք բազումք՝ և ոչ կարացին և ոչ միով հնարիւ. և ոմանք արիւն հանեալ յոտից, և զի մատղող է արիւն, նովաւ էլեալ առին, և յոյժ ուրախացան։

Ըստ առակիս՝ վաճառական է Քրիստոս, և անդին մարգարիտ՝ աւետարանն իւր, և ակունք՝ մարգարէից և առաքելոց բանք, և սիւն է ճգունք ուսման. և զի արեամբ ջամի է աշխատելի, զի 'ի գլուխ էլանիցէ՝ և զմիտս աւետարանին ուսանիցի 'ի սրբոց։

ԾԶԴ

Քաղաք էր հեռի թագաւորի ուռ-
մեին, յոյժ հռչակեալ գեղեցկու-
թեամբ, և բազում ունէր առ ինքն
ճանապարհ, և ըստ իւրաքանչիւր
ճանապարհի փուութացան մարդիկ
երթալ 'ի նա. և պատահեաց ոմանց
յերկար և դժուար, և ոմանց դա-
զանուտ, և ոմանց զառ 'ի վեր, և ո-
մանց հարթ և կարճ. սակայն հուսկ
'ի քաղաքն ամենեքեան 'ի հարթն
խառնէին ճանապարհ. և 'ի քաղաքն
մտեալ 'ի զանազան հանդիպէին օ-
թեվանս. և բնաւքն տեսողք լինէին
յոգնօրինակ գեղեցկութեան, յոյժ
ուրախացեալք:

Առակս այսպէս է. թագաւոր տի-
րապէս Աստուած է, և քաղաք՝ ար-
քայութիւն նորա, և ճանապարհ բա-
զում՝ պատուիրանք նորա. զի ոմանց
պատահի կուսութեամբ երթալ, և
դժուար և յերկար, և ոմանց ընդ
հեթանոսս պատերազմիլ վկայու-
թեամբ, և ոմանց կրօնաւորութեամբ

ՀԳԱՆՑ, և ոմանք մարդասիրու-
թեամբ. սակայն կատարածն սէրն է
բնաւից, և նովաւ ըստ իւրաքանչիւր
վաստակոց հատուցանի. և ուրախա-
նան՝ արժանացեալք ըստ պսակի որ
պարգեւի:

ՃԶԵ

Լեառն մի էր յերկրի յոյժ ամբար-
ձեալ և անմատոյց. 'ի նմա ամրա-
նալ կամեցան բնակիչք աշխարհի, զի
լի է ամենայն բարութեամբ, և ա-
ռողջութեամբ ընդ ամրութեանն,
սակայն դժուարելանելի էր, թէ-
պէտ և բազում ունէր շաւիղ. և յե-
լանել այնոցիկ, որ զոսոս դադարե-
ցուցանել հանդէպ կամեցան, ոա-
տեալք մինչ յատակն հասանէին. և
բազում անգամ նոյն պատահէր:
Իսկ որք ոչ կամեցան հանդէպ, այլ
'ի գաւազան յեցեալ յընթանալն
փութային, ելին և հանդիսաց դոյն:

Մինչ առակիս այսպիսի է. լեառն
ամուր՝ երկիրն կենդանեաց, և կա-
մին հաւատացեալք բնակել 'ի նա
զանազան պատուիրանօք. և եթէ

հանդէսէ յանդգնութիւնն կամին, ոչ կարեն եւանել, զի անդուլ է ընթացքն. իսկ որ ոչ այլ իւիք հանդէս, բայց միայն 'ի համբերութիւն յենու, դիւրաւ եւանէ. զի հանդիսատ առաքինութեանն համբերութիւն է. և ուրախացեալ հանդէսեցի:

ՃԶԶ

Երկու 'ի միասին մնկեալ ծառք լի պտղովք, և միոյն գեղեցիկ էր 'ի տեսանել պտուղն, և քաղցր 'ի ճաշակել, և ախորժելի հովանին. վասն որոյ բազումք փութային 'ի նա, և մոտեալ ընդ հովանեաւ՝ ախտացեալք հիւանդութեամբ լինէին, և ճաշակեալք 'ի պտղոյն մահանային. իսկ միւսն խոշոր 'ի տեսանել, սակայն հովանին զհիւանդս բժշկէր, և ճաշակեալ անմահս գործէր. և անդան ուսեալք, բազումք փութացան, և զուարճացեալք ընդ գիւսն լինէին:

Զայս տայ առակս խմանալ. երկու տունկք՝ մեղք և արդարութիւն՝

'ի մարդիկ անկին. յառաջնումն ա-
խորժելի կարծին մեզք. խորհիլն՝
հիւանդութիւն է հոգւոյ, և գործել՝
մահ. այդ է հոլանին և ճաշակքն։
Իսկ առաքինութիւն յառաջնումն
դժուարապահ է, այլ կամելն և
գործելն՝ ոգւոյ առողջութիւն է և
կեանք. զոր ուսեալք՝ յեռոյ հեռա-
նան 'ի չարէն բնաւին, և ուրախա-
նան ընդ բարին։

ՃԶԷ

Ծառ մի է յաշխարհի միում բար-
ձրը հասակաւ, և գեղեցիկ տեսա-
կաւ և պտղով, և ցանկալի հովա-
նեաւ. և ամենայն թռչունք սուրբք
յոստս նորա հանդչին, և կենդանիք
սուրբք ընդ հովանեաւ նորա. և թէ
պատահի գազանաց կամ անսուրբ
թռչնոց դիմել 'ի նոսա, նոյնժա-
մայն սատակին. իսկ սրբոց ճաշա-
կեալ 'ի պտղոյն՝ աճեն և անմահանան։

Ծառ՝ ըստ առակիդ սուրբ էր-
ղորդութիւնն է՝ ամենաբարի նշա-
նաւ, բուն հայր, և ոստն որդի, և

պատուղն հոգի, և հոլանին խնամք, և սուրբքն ընդ հոլանեաւ և յոսաս՝ 'ի զօրութիւն նորա հանդչին. և թէ բանասարկուն և դեւքն յանդգնին, սատակին. և ճաշակեալ արդարքն՝ անմահանան հաւատովք, և աճեն 'ի բարիս և 'ի վարս սուրբս։

ՃԶԸ

Իբրեւ լուան ազգ ամենայն, կամեցան վայելել 'ի ծառոյն. և կին մի ժանտատեսիլ նատէր յանցս ճանապարհին, և բաժակաւ արբուցանէր դեղ յիմարութեան. և առեալք՝ անկանէին և ոչ կարէին երթալ. և ոմանք ժայթքէին, և դարձեալ երթային. իսկ որ հեռի անցանէին, անխափան հասանէին և վայելէին։

Կինն՝ ատանայ է բազմաճնուն դարեօք, և բաժակն՝ հրապոյրք պատրանաց, և դարձուցանէն՝ խոտորվանեն, որով փրկին, և 'ի հեռի անցանեն՝ հրաժարեն յաշխարհէս, որ անխափան տայ վայելել 'ի խնամն երրորդութեանն՝ և անմահական։

ՃԶԹ

Սերմանող ոմն սերմանեաց յա-
գարակ իւրում. և 'ի բուսանելն փո-
խեցաւ 'ի գարի, 'ի կորեակ և յո-
րոմն և 'ի ցորեան։

Այս իսկ է առակս. սերմանող՝
Քրիստոս, և սերմն՝ աւետարանն, և
ագարակն՝ աշխարհս, և 'ի փոխելն
'ի զանազան աղանդս՝ յառաւել և
'ի նուազ, և սակաւ մնալն ցորեան,
զի սակաւ են ընտրեալք, թէ և բա-
զումք ուղղափառք։

ՃԺ

Այր ոմն ելանէր 'ի բարձրագոյն
լեռնէ, և յաջ ելեալ արեգակն, և յա-
հեակն լուսին, և երկոտասան աս-
տեղք 'ի լանջսն. և աղբիւր 'ի բե-
ռանոյ նորա բխէր, և 'ի չորս բաժա-
նէր առաջս, և ընդոյր զերկիր. և կեն-
դանիք սուրբք և անսուրբք լուա-
ցեալք լինէին. և 'ի դառնալն առն,
սակաւք վերացան, և 'ի լեառն բա-

զուտ թռչունք էին՝ ընդ նոսա խառ-
նեցան, և մնացեալքն յառաջին կերպ-
արանն դարձան, և այլքն թէ և ոչ
փոխեցան՝ վերանալ ոչ կարացին։
Առակս այս յայտնի է։

Եւ այս առակք աւարտեցան
ստեղծականք 'ի փառս Քրիստոսի
Աստուծոյ մերոյ։

Եւ արդ մի՛ ոք ծաղր առնիցէ ըզ-
մեզ, զի առնուլ 'ի սոցունց 'ի զրու-
ցատրութիւնս և յասացուածս 'ի
դէպ համարեցաք, քան զաշխարհա-
կանացն վարիլ սովորութեամբ։ Ե-
թէ հաճոյ ոմանց թուիցի, տեառն
շնորհ. ապա թէ ոչ, թողութիւն
մեզ արասցէ սիրով նորին։

ՑԱՆԿ

Ագաղալ ՃԻԸ
Ագռաւ ՃԻԹ. ՃԼԱ
Ախրիզան ԻԶ. ԻԷ
Աղաւնի ՃԺԶ. ՃԻԶ
Աղբիւրք ԿԴ
Աղէքսանդր ՃԿԵ
Աղուէս ՁԷ. ՁԸ. ԴԸ
Աղուեսուց անձրեւ Ճ
Այծեամն ՃԺ
Անասունք ՁԴ
Անգղ ՃԼԴ
Անդեայք ՀԹ. Ձ
Անծեղ ՃԼԲ
Առիւծ ՁԴ. ՁԵ. ՁԶ
Առուոյտ կապոյտ ԼԴ
Ասպուզան Լ
Ասեղք Ե
Ասորւոյծ Ա
Արագիլ ՃԻԲ. ՃԽ
Արաւր թռչուն ՃԽԳ

Արեգակն Գ. Ե
Արծիւ ՂԵ. ՃԺԴ. ՃԻԳ. ՃԻԴ
Արմաւենի Է
Արմաւ թռչուն ՃԾԱ
Արջ ՁԵ. ՁԶ. ՁԷ. ՃԾԴ
Արջնագլուխ ՃԼԴ
Արջնեղէղ ԽԷ
Արքայկաղնի ԻԴ
Արքայածաղիկ Լ
Բազէ ՃԺԵ. ՃԺԶ
Բակլա Խ. ԽԱ. ԽԲ
Բամբակենի ԺԹ
Բեհմոթն ԿԵ. ԿԷ. ՀԶ
Բլբիճակ ՃԽԲ
Բժիշկ ՃՀԳ. ՃՀԴ
Բորէ ՂԴ
Բու ՃԻԳ
Բրէտ ՃԾԴ
Գազանք ՁԵ
Գայլ ՀԹ. ՁԳ. ՁԶ. ՁԸ. ՁԹ
Գարի ԼԶ. ԼԷ
Գեղք ԿԳ
Գինձ ԽԸ
Գնդաածաղիկ ԼԴ
Գող ՃՀԷ
Գոմէշ ՃԷ. ՃԸ

Գոռեխ ՃԾԴ
Գորտունք Հ. ՀԳ. ՃԻԱ
Դամոն ԺԵ
Դեղձի ԺԶ
Դժնիկ Է. ԺԸ
Եղն ՀԸ
Եղեգան ծաղիկ ԼԵ
Եղջերու ՃԹ
Եպենէս ՀԱ
Երկաթագործ ՃԿԷ
Երկինք Բ. Զ
Երկիր Զ
Զմիւռնեան ՀԳ
Զուարակ ՀԷ
Զօրական ՃՀԶ
Էշ ՃԴ
Ընկուզի ԺԷ. ԾԷ
Թագաւոր ՃԶ
Թախիծ Ծ. ԾԱ
Թզենի Է. Ժ. ԺԲ
Թմենի ԺԴ
Թիւթեղն ՃԿ
Թոքեկ ՃԺԱ
Թուջուն հրաշալի ՃԿԱ
Թուջունք ՃԺԴ. ՃԻԱ. ՃԻԴ. ՃԻԷ. ՃԽԸ. ՃԾԷ

Թրթռուր ՃԿ
Խմաստասէր ՃՀԵ
Ինձ ՂԲ
Իշխան ՃԿԳ
Լեառն բարձր ՃՁԵ
Լերինք ԿԲ
Լեւիաթան ԿԵ. ԿԶ
Լոկիաս ԽԳ. ԽԵ
Լոր ՃԺԷ
Լուսին Դ. Ե
Խաղախորդ ՃԿԹ
Խաշնաշ ԽԹ
Խեցեմորթ ՀԳ
Խրխնջիւն ՀԲ
Խլուրդ ՃԺԳ
Խնկաճաղիկ կամ Խնկողկուզիկ ԼԱ
Խնձորի ԺԱ
Խոզ ՃԳ
Խոլորձ ԼԳ
Խոյ ՁԱ
Խորդք ՃԽԱ
Խատոր ԾԳ. ԾԵ
Ծառ մի բարձր ՃՁԷ ՃՁԸ
Ծառք դրախտի ԻԱ
Ծառք երկու ՃՁԶ
Ծերք ՃՀ

Ծիծառն ՃԼԹ
Ծիրան ԺԵ
Կաքաւ ՃԼԷ
Կակաչ Լ
Կաղամբ ԿԱ
Կաղնի ԻԳ
Կապիկ ՂԹ
Կառ ԼԴ
Կասկենի ԻԳ
Կատաղ ՃԽԳ
Կատու ՂԱ
Կենդանիք ԿԵ
Կիլոյ ՂԶ
Կիտոս ԿԸ
Կկու ՃԼԸ
Կնճռիթան հատ Խ
Կորեակ ԼԶ. ԼԸ
Կորնգան ԼԳ
Կտաւագործ ՃԿԳ
Կտաւատի հատ Խ
Կրիա ԿԹ
Կուիւ ՃԽԳ
Կօշկակար ՃՀԱ
Հաճար ԼԹ
Հաճարի ԻԲ
Համասպրան ԻԶ. ԻԷ

Հաւ ՃԻԵ
Հաւամրգի ԻԵ
Հաւբալ ՃԺԳ. ՃԽ
Հաւրուտ Լ
Հոզամաղ ՃԻԱ
Հովիւ ՃՀԲ
Հօտ ՁԲ. ՁԹ
Հօրանք ՁԲ
Ձագք ՃԺԵ. ՃԻԱ
Ձի ՃԶ. ՃԿԱ
Ձիական թռչուն ՃԽԹ
Ձիթենի ԺԳ
Ձիւնածաղիկ ԼԲ
Ձկնաքաղ ՃԽԳ
Ձկունք ՀԵ
Ձմերուկ Ծ. ԾԸ
Ճագար ՂԴ
Ճակնդեղ Ծ
Ճայեկ ՃԼԵ
Ճանապարհորդք ՃՁԲ
Ճնճղուկք ՃԻԲ. ՃԻԳ. ՃԼ
Ճպուռ ՃԽԷ
Մալուամ ՂԹ
Մայր՝ և մանուկ ՃՀԹ
Մայրք Է. Ի
Մանիշակ ԻԸ

Մաշ ԽԶ
Մարախ ՃԾԸ
Մարգարիտ ՃՁԳ
Մաւրուտ Լ
Մէղու ՃԾԲ. ՃԾԹ
Մէղուաքաղ ՃԾԹ
Մժէխ ՃԾԳ
Մկունք ՂԱ. ՃԻԱ. ՃԻԹ
Մնեւ ԼԹ
Մողէզ ՃԺԳ
Մորենի Ը. Թ
Մորմէգործ ՃԿԹ
Մրջիւն ՃԾԳ. ՃԾԴ
Մրտի ԻԵ
Յոպոպ ՃԾԵ
Յովազ ՃԺԲ
Յունապի ԺԸ
Նապաստակ ՂԵ
Նարինջ Ի
Նշենի ԻԳ
Նոխազ և այծք ՁԳ
Նռնենի Է. Ժ. ԺԴ
Շահեն ՃԺԸ
Շաղգամ Ծ. ԾԶ
Շամամ Կ
Շանաճանճ ՃԾԴ

Շուն ՁԷ. ՁԹ. Ղ. ՂԵ. ՂԹ
Շուշան ԻԶ. ԻԸ
Ողնի ՃԺԱ
Ոլեռն ԽԳ
Ոչխարաց անձրեւումն Ճ
Ոսկի ՃԿԸ
Ոսպն ԽԳ
Ուրդի Թագաւորին Յունաց ՃԿԲ
Ուրդունք ՃԽԹ. ՃՆԴ
Ուրթ Է. Ը. Թ
Ուղտ ՃԲ
Ղամեան ԽԸ
Ղիտ ՃԻ
Պարտէզ ՃՁԱ
Պիծակ ՃԺԴ
Պղնձագործ ՃԿԷ
Ջայլամն ՃԻ
Ջղջիկան ՃՆԶ
Ջորի ՃԵ
Սագ ՃԼԵ
Սալոր ԺԵ
Սակռ ՃԻԱ
Սամիթ ԽԸ
Սարդի Ի
Սարեկ ՃԼԳ
Սարսարակ ՃԽԵ

Սասի ԺԹ
Սէխ Ծ. ԾԷ. ԾԹ
Սէրկեւիլ ԺՁ
Սէրմանոզ ՃՁԹ
Սէզ ԼԳ
Սիսեռն Խ. ԽԱ
Սիրամարգ ՃԼՁ
Սոխ ԾԴ. ԾԵ
Սոխակ ՃԽՁ
Սոզոմոն ՃԿՁ
Սուսերաց անձրեւումն Ճ
Սպանախ ԾԲ
Սոեպղին Ծ. ԾՁ
Վագր ԴԷ
Վարդ ԻԵ
Վարուժան ՃԺԷ
Վարունկ ԾԹ
Վիշապ Ճ. ՃԹ
Տանձի ԺԱ
Տառեղն ՃԻԲ
Տատրակ ՃԻԷ. ՃԼԸ. ՃԽ
Տնկագործ ՃՀԵ
Ցարասի ԻԵ
Ցախ սարեկ ՃԽՁ
Ցին ՃԺԹ
Ցինկ ԼԳ

164
Յորեան ԼԶ. ԼԷ
Փեդեենայ ԽԸ
Փեննա ԻԹ
Փիլ ՃԱ
Փիճի ԻԲ
Քահանայ և աւաղակ ՃՀԸ
Քաղաքդր ՃԾ
Քաղաք Թագաւորի ՃՁԴ
Քարաթաւշ ՃԺԳ
Օձ ՃԻԲ

ԸՆՏԻՐ
ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

ՈԴՈՄՊԻԱՆՈՍ

ԱՌԱԿՔ

ՈՂՈՄՊԻՄԱՆՈՒ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

—

1842

ԱՌԱԿՔ

ՈՂՈՐՄՈՒԹԵՍՈՒ

Ա

Ստնտուն ցմանու�՝ վասն զի լայր, թէ ոչ լուռ կայցես, ասէ, դայլոյ բառնամ ընկենում։ Զբանս լուեալ գայլն, և յուսայր ելն սպառնմանն. և եկաց մինչեւ ցերեկոյն թէ առցէ զմանուին. ապա երեկոյէր, և մանուին 'ի քուն կայր. և նա երթեալ գառնայր այն օր ունայն յորոյ։ Եւ քաջ հարցանէր. և նա զպատճառն ասէր, թէ կնոջ հաւատացեալ՝ խաբեցայ։

Եւ դու մի հաւատար. գիտա, քանզի բազում նոքա վասն արուեստից խոստանան, և մինչեւ ցբանն են յուսացելոցն շնորհք։

Բ

Կրայ զձի 'ի հանդէս ընթացից կոչէր. և իբրեւ սահմանեցաւ տիրականերն, և ձին ծաղր առնէր զնրան, և զամենայն զինքն բարեկենդանութեան և դատարկութեան տայր. և կրային գործ լինէր ասպարէզք և ստէպ ստէպ կրթութիւնք, և աճեցուցանէր յինքեան հրահանգօք զերագութիւն: Իբրեւ եհաս ժամանակն հանդիսի, և ընդոյր տեսլարանն, և յարձակեան եկեալ կային, և զնշան ընդունէին զընթացից, յայնժամ առ 'ի յոյժ դատարկութենէն կապեալ լինէր ձին, և գնալ անդամ ոչ կարէր. իսկ կրայն երագագոյն քան թէ որչափ կարծէր ոք զնմանէ, զասպարէզն կատարէր և յաղթող երեւէր:

Ոչ զամենայն ինչ բնութեան արժան է հաւատալ, այլ պիտոյանալ կրթութեան և փութոյ ամենայն ուրեք:

Գ

Ընդ կուսի գեղեցկութեան ա-
ռիւծ զարմացեալ տուփէր, և՝ ի հօրէն
երթեալ խնդրէր զնա կնութեան.
իսկ նա երկուցեալ՝ ոչ յուրասա լի-
նէր զջուալն, այլ արուեստիւ պաճա-
րանս գտանէր առիւծուն, և ասէր՝
թէ և ես խնդամ ընդ քո խնամու-
թիւնդ, բայց կոյս երկուցեալ է՝ ի
ճիրանացդ և յահագին ժանեացդ.
իսկ եթէ թափուր յայսցանէ եկեա-
ցես, ցանկալի առաւել երեւեսցիս և
վայելուչ փեսայ։ Հաւանեցաւ ա-
ռիւծն, քանզի ամենեւին՝ ի ցան-
կութիւն յեղեալ էր։ Եւ մերկացեալ
՝ի ճիրանացն և՝ ի ժանեացն, գայր
զաղջկանէն. և իբրեւ՝ ի նեղքս մտա-
նէր, ջարդեալ լինէր քարամբք, վասն
զի ոչ ունէր զվերիժական։

Խրատէ առասպելս զբաղումն՝
զբնութեան զէնս ոչ մերկանալ։

Դ

Տուփեցաւ աքիս՝ ի պատանւոջ, և
զԱստղիկ աղաչէր լինել կին գեղե-

ցիկ. և հասեալ ըղձիցն, թուէր թէ կին ելցէ, և խօսեցեալ տուփելոյն հարսանիք էին, և երգք և ցոյցք և զամբարք առագաստաց։ Իսկ նա իբրեւ մեկ մի եռեռս յընթացի, զհետ մոռանէր որսալ։

Այսպէս և բնութեան իրք անընդդիմակալ են և յամենայնի բուռն։

Ե

Յառիւծէ ծերութիւն հատանէր զզօրութիւն և զաւագութիւն, և նա զարուեստն 'ի վար արկանէր առ յորսոյ դիւրութիւն. և հիւանդկայր, և պատմեաց զիւր անցս։ Իսկ անասունքն ամենայն ուստեք գային առ նա, և նա 'ի նեղքս ընկալեալ 'ի գործ արկանէր զսովորութիւն։ Իսկ աղուէսն գիտացեալ զնորա հնարսն, աքսաքոյ անցեալ առ դուրսն մնայր, և անդուստ ընդոյր զայցելութիւնն։ Եւ առիւծն եհարց, թէ հիմ դու միայն յայլոցդ աքսաքոյ կաս դրացդ։ Հեռդ, ասէ, զիս արդելու. քանզի մոռելոցն յայտ է, և ելելոցն ոչ եւս։

Խարդախաց առ բարեբարս կարի է խաբէութիւն, իսկ իմաստնոցն յայտնի է։

Զ

Մայր ցեղջերու ասէ, եթէ դու և մեծութեամբ յաղթ ես քան զջուն և արագութեամբ, վեհ մատուցանէ քեզ ընծէ զքեզ և եղջերց բոյս արդ զի՞ երեւ քեզ, զի այդպէս բերես 'ի քեզ զջանց երկիւղ։ Իսկ եղջերուն ասէ. Եւ քաջ, ասէ, տեսանեմ զմեծութիւնս, և յեղջերս պանծամ, և ընթացիւք յաղթեմ։ այլ եթէ զհաջիւն միայն լուայց, անդէն վաղվաղակի ամենայն խորհուրդքս սուզանէին, և յերկիւղ և 'ի փախուստ դառնամ։

Արդ ոչ ես այսուհետեւ և ոչ մի ինչ բանի մխիթարութիւն և յորդորութիւն զօրացուցանէ զբնութեամբ երկչոտան։

Է

Քարոզ'ի հաւս հասանէր յՌրմիզ դէ յօր դալ առ նա յերեւելի առ'ի

գեղեցկութեան ընտրութիւն, զի ամենայնի լեցի՝ որ յաղթն է հաւուց՝ թագաւոր: Եւ լի էին այնուհետեւ աղբերք և գետք հաւուք, 'ի նոսա զինքեանս պճնելով, և զանվայելուչս թեւոցն հանելով. և թողուին ամենեքեան որ միանգամ 'ի զարդ մատչէր: Այլ ճայ արուեստիւ հնարէր, զի զայլոց հաւուց զթեւս զիւրեաւ բարդեալ և յարմարեալ, կարի յոյժ գեղեցիկ և զարմանալի երեւէր, և բազմատեսիլ էր իբրեւ բուրաստան պայծառութեան թեւոքն խրոխտացեալ. և զարմանալի էր ամենայն հաւուց, զարմանալի էր և գիւցն, և ամենայն կամօք տեղի տուեալ յաղթութեան: Իսկ գիշերահաւն իբրեւ այլով ամենայնիւ իմաստուն էր, և յայնժամ զթեւն ծանեաւ, և մատուցեալ 'ի բաց եհան, և 'ի ցոյց ամենայն հաւուց արար զգործն. մինչեւ իւրաքանչիւր ոք մատուցեալ զիւրն 'ի բաց հանէր, և մերկ ճայն երեւեցաւ խաղ ամենայն հաւուց:

Արդ ասէ, որ ինչ միանգամ ոք ունի 'ի բնութենէ, զայն բաւական

համարել, և մի արտաքուստ պիտոյանալ զարդու :

Ը.

Նապաստակը՝ի մի վայր եկեալք, Մեզ, ասեն, կեանքս անկեանք են. քանզի արծուիք և շունք և ամենայն ինչ՝ի վերայ մեր հարեալ են, և բազմագիմի կիրք պատեալ ունին զմեզ. և արդ լաւ է հոսել՝ի լիճս յայս և հեղձնուլ: Եւ իբրեւ այս կամ՝ եղեւ, և էին ոռքա ամենեքեան միաբան, ՝ի լճափինն գորոյքն զընթացս նոցա ըզգացեալ՝ երկիւղիւ ընկղմեցան՝ի խորագոյնս լճին. և մի ոմն՝ի նապաստակացն՝ որ ծերագոյն էր՝ խմացեալ որ ինչ եղեւն, Կացէք, ասէ, ո՛վ սիրելիք և դադարեցէք, սոգոտանելով զանձինս, քանզի են և այլ երկչոտք քան զմեզ :

Արդ մատուցանէ թշուառացելոցն միխիթարութիւն, զեւս չար ընկերացն տեսանել զի կրկին՝:

Թ.

Ագռաւ զիւր բնութիւնն պարտաւէր՝ թէ արջնայեղց է թեւօք, և փորոյն սպիտակութեանն երանի տայր։ Այլ ոչ է արժան, ասէ, զարմանալ ընդ զանազանութիւն, այլ անձին զարդ համարել. քանզի դու առ բազնօք և ծխով միշտ յածելով մՀրոտեցեր զթեւսդ, իսկ զիս մարդունին և գեղք զամենայն օր։ Եւ թէ էր հիմն ագռաւուն թէ ուղիղ ասաց, և անցեալ դեգերէր՝ ի գեաս և՝ ի մարգս՝ զթեւոցն փոխումն յուսացեալ ընդունել. և զաս ապա սով և պարզն հարեալ սատակէր, և ոչ ինչ նուազէր սեւութիւնն։

Ոչ ինչ արժան է նորոգաձեւս ձեւել, որ ոչ բնութեան է տրան։

Ժ.

Ինչ էր՝ և առիւծ թուէր, քանզի արկեալ էր զիւրեաւ առիւծենի, և՝ ի հեռաստանէ՝ ի տեսլենէն մատու

ցանէր Երկիւղ, և ապա զամենայն նախիրս կոխուց և զամենայն հօտս 'ի փախուստ դարձուցանէր։ Եւ իբրեւ հողմն սաստիկ հնչեաց և մերկացաւ զնա յառիւծենէն, և յանդիմանեցան պատրանքն, ամենեքեան ոտս արձակեցին 'ի նա. ոմանք ջնէին և ոմանք հարկանէին. վասն զի էշ էր, և առիւծ կեղծաւորէր բազմաց։

Եւ դու ո՛վ մոգի, կարօտ էս տանջանաց. վասն զի յոյժ անհրաժանգ էս, և զխրատէլոցն կեղծաւորիս ձեւ։

ԺԱ

Գորտ մեծաձայնէր, միանգամայն և ամբարհաւաճ, և առ այլս ասնասունս. Ես ձեզ բժիշկ կարեմ լինել և զամենայն լինչ բժշկել, վասն զի ուսեալ եմ զասկլեպիադայցն։ Զայն հուչակելով թուէր թէ ասիցէ լինչ, և հպարտութեամբ առլնոյր։ Իսկ ազուէս իբրեւ այլով ամենայնիւ խմաստուն էր, և զգորտոյն հպարտութիւնն յանդիմանէր. Յայտ է, ասէ, թէ այդպէս դեղին և հիւանդոս

լեմն զմարմինդ ցուցանելով, ապա դեղք քո զայլս բժշկել կարեն, բայց դոյն ինքն զքեզ ողջացուցանել չեն ձեռնհաս։

Ոչ է արժան յանդիմանել զսուտս, քանզի բազում անգամ յինքեանց մատնին։

ԺԲ

Գայլք առ ոչխարս հրեշտակա-գնաց եղեալ՝ ասեն, թէ միշտ պատե-րազմ ունելոյ մեզ ընդ ձեզ և յար անհաշտութեան՝ շունքն են պատ-ճառք։ վասն զի զայրացուցանեն զմեզ, և ակամայ 'ի թշնամութիւն յուզեն։ ապա թէ սոքա 'ի միջոյ բարձցին, խա-ղաղութիւն է այնուհետեւ ընդ մեզ և ընդ ձեզ, և չար եւս 'ի մէնջ այլ ոչ լիցի։ Հաւանեցան ոչխարքն, քանզի էր անմոռացիք, և զշանցն պահպա-նութիւն յանձնեցին։ և գայլքն զնոսա 'ի շանցն անասպատ գտեալ, զամենեսեան զնոսա 'ի վերայ յար-ձակեալ կոտորեցին։

Խրատէ առասպելս 'ի թշնամեաց խրատուց զգուշանալ։

ԺԳ

Զուարակք 'ի միասին արածէին. էր ուրեմն անդ առիւծ մօտ, և յեր-կիւղէ նորա 'ի սէր միաբանութեան պարփակեալ էին զուարակքն, և մի-աբանական առնէին զիրաց զեալս և զմուտս, և միաբան զարօտս և զգնացս, և միաբան դարձեալ և զառիւծուն պահպանութիւն: Իսկ առիւծն ոչ կարացեալ հերքել զօրութեամբ, ա-րուեստիւ պաշարէր նոցա. քանզի զբարեկամութիւն կեղծաւորեալ մատուցեալ էր առ խրատանչիւր ոք 'ի նոցանէ, զմիմեանց չարախօսու-թիւն մատուցանէր, և թշնամիս ա-րարեալ և զատուցեալ 'ի միմեանց ընթռնէր:

Խրատէ բանս առ բարեկամն հաս-տատուն պահել զմտերմութիւն:

ԺԴ

Ագռաւ պանիր ունէր 'ի բերանն և նստէր 'ի բարձրաւանդակ տեղւոջ:

Իսկ աղուէսն գոլծ առնէր, 'ի նմա նէ հանել զպանիրն. և մատուցեալ մօտ անդր և զանն 'ի նա հարեալ՝ է բանի տայր բնութեանն. Զի սեւա թոյր գունով և գիշերոյ մանուկ, և վայել է քեզ ծաղկել 'ի գունոյդ. այլ և զօրութիւնքդ քո 'ի քեզ՝ որչափ ոչ յայլում. բայց և իմաստութիւն, և ոչ ինչ եւս արդել ունէր զթագաւորութիւն զարծուոյ զանց արարեալ ամենեւին, և թագաւոր հաւուց՝ է թէ ձայն գոյր, և ոչ ամենեւին կարօտ գտեալ էիր յիրէդ։ Դրդուեցաւ 'ի գովութենէն ագռաւն. և զմեծաձայնութիւնն ցուցանել կամեցեալ, եբաց զբերանն և գոչեաց յոյժ մեծ. և պանիրն 'ի վայր անկեալ, որս լինէր աղուէսուն։ Եւ նա առլցեալ կերակրոմն, Ձայն գոյ 'ի քեզ, ասէ, կարի քաջ, ո՛վ ագռաւ, բայց 'ի մոտց պակասես։

Զայս առասպել գիտելով մի երբէք պատրեցիս 'ի սուտակատպասաց գովութենէ։

ԺԵ

Կապիկք մեծ ինն խորհեցան քան զբնութիւնն, և զայն եւս ընդ մարդկանն նախանձեցան, և 'ի քաղաքի բնակութիւն առնել ընդ միտ ածին, և ժողովարանս հաստատել և խորհրդարանս, և արուեստք հրահանգել, և միանգամայն կեալ մարդկային վարուք: Եւ իբրեւ այս կամ եղեւ և զգործոյն բուռն հարին, ծեր ոմն 'ի նոսա կապիկ՝ Զի այդպէս խոկայք, ասէ, զի այժմ որսալ զմեզ մարդիկ ոչ դիւրաւ կարեն. իսկ եթէ 'ի նեղքս 'ի բակի լեցուք, շուրջ պատեալ զմեզ սատակեսցեն:

Ունի ինն ծերութիւն իմաստութիւն ժամանակաւ և հմտութեամբ աւելագոյն:

ԺԶ

Արծիւ հալածէր զկաքաւ, և կաքաւն 'ի բզէզն ապաւինեցաւ, և էբեր բարեխօս, և արծիւն ոչ լուաւ բզէզին. և բզէզն զսնեցաւ և եկանէր

'ի բոյն արծուին, և զձու նորա դնը-
ռէր և ձգէր 'ի վայր և կոտորէր, և
բազում ժամանակս անորդի առնէր
զարծիւն. և գնացեալ էած զձուն իւր
'ի գոգ Թագաւորին: Խնացեալ բզէզն,
եմուտ 'ի մէջ ոսկց նորա և էխած
զծայր երանաց նորա. և նա 'ի վեր
վազեաց, և անկեալ բեկեցաւ ձուն:

Ցուցանէ որ Թէ՝ հնար լցէ, բնաւ
մի առներ քեզ Թշնամի զոք 'ի մարդ-
կանէ, Թէպէտ աղքատ և տկար լինի:

ԺԷ

Մրջիւն և աղաւնին. աղաւնին
տեսեալ էառ մրջմանն՝ որ ոչ խեղդէր 'ի
ջուրն. և մրջիւն եհար զերանս որ-
սորդին, յորմէ զերծաւ աղաւնին:

ԺԸ

Որսորդն կաչաւ կաքաւ մի և կա-
մէր զենուլ. և ասէ կաքաւն. Մի
սպանաներ զիս, զի էս խաբեցիս զբա-
զում կաքաւս և ածիս յակնառս քո:
Եւ ասէ որսորդն. Այժմ ստուգիւ

մեռցիս 'ի ձեռաց իմոց, զի զսիրելիս քո և զաղդականս քո մատնես 'ի մահ։

Ցուցանէ՝ թէ մի՛ կազմեր որոգայթ սիրելւոյ, զի ոչ հաճի Աստուած 'ի գործս քո, և դարձեալ քեզ պատրաստէ զնա։

ԺԹ

Աղուէս մի քաղցեաւ և եդիտ սառն, և սկսաւ խորնոսալ և ուտել. և ասէ. Վայ ինձ զի ահագին է դալդայլոյն, և աղաղակս 'ի գլուխիմ, և 'ի փորս իմ ոչ ինչ չէ մտեր։

Ցուցանէ՝ թէ փառք աշխարհիս և մեծութիւն զերդ երազ է, և միայն զաղաղակ ունի և զբաղումն. յետոյ ոչ երեւի ումեք, զի անցաւոր և խաբող է։

Ի

Հարցին ընդ աղուէսն թէ քանի՛ կել և արուեստ գիտես. նա կրկնեցաւ և ասէ. Հազար կել և արուեստ գիտեմ. երեսուն՝ ագռաւս առաջի շանն, թող թէ քանի անձամբս. ա-

պա մեծ արուեստ այն է իմ, որ ոչ
էս զշուն տեսանեմ, և ոչ նա զիս։

Ցուցանէ՝ թէ անթիւք են որք ա-
պաշխարեն զմեզս և Աստուծոյ լինին.
նա է կատարեալ մարդ, որ ոչ մեղան-
չէ։

ԻԱ

Այրի կին մի ունէր տղայ մի. և
սկսաւ տղայն գողանալ միրգ և բան-
ջար. և մայրն ուրախութեամբ ճա-
շակէր, և ոչ խրատէր զտղայն 'ի կամն
Աստուծոյ. և նա էլս աճեցոյց զգո-
ղութիւնն, բերէր անասուն և անօթս,
և այր էղեալ՝ էղեւ աւազակապետ 'ի
Լերինս, և բազում չարիս առնէր. և
կալեալ տարան 'ի կախեալ զնա, և ա-
սէ. Բերէք զմայրն իմ, զի հանիցուս
ընդդէմ զնա։ Եւ յորժամ էին մայրն,
խածեալ էհատ զքիթ մօրն։ Եւ ասէ
թագաւորն. Ո՛չ չար, ընդէր խրա-
տեցեր զմայրն քո։ Եւ նա ասաց. Զի
ոչ խրատեաց զիս 'ի տղայութեան 'ի
կամն Աստուծոյ, որ չէի յայս վիճաս
անկեալ. յիրաւի արարի զայն։ Եւ

թագաւորն հրամայեաց զնա արձակել, և զմայրն կախել:

Ցուցանէ՝ թէ ամենայն ծնողք որ ոչ խրատեն զորդիս իւրեանց'ի կամս Աստուծոյ, նա մեղք որդւոցն 'ի գլուխս ծնողացն է յաւուրն դատաստանի:

ԻԲ

Աղուէսն և խեցգետինն եղեն եղբարք և արարին ցան, և հնձեցին, և կասեալ կուտեցին: Ասէ աղուէսն. Եկցուք'ի բլուրս յայս. և ով շուտ ինքնէ, նա առնու զցորեանն: Յորժամ եկին, ասէ խեցգետինն. Արա ինձ սէր, և յորժամ կամիս վազել, զարկ զագիդ առաջի իմ, որպէս իմանամ և գամ զհետ քոյ: Եզարկ աղուէսն զագին և վազեաց. և խեցգետին փակաւ յապին աղուէսուն. և յորժամ հասաւ աղուէսն 'ի շեղջն, և դարձաւ յետս թէ ո՞ւր իցէ խեցգետինն, և խեցգետինն'ի վայր անկաւ'ի վերայ շեղջին և ասաց. Յանուն Աստուծոյ, այս ինձ երեք մոդ և կէս: Զարմա-

ցաւ աղուէսն և ասէ, թէ ով դու չար, էրը էկիր այսր։

Յուցանէ՝ թէ բան և գործ առնէն նենգաւոր մարդիկ, որ կորուստ լինի անձանց նոցա, և տկարքն յաղթեն նոցա։ Դարձեալ շատ մեղաւորք այս տկար մարմնով Ջանան խմաստու-թեամբ և յաղթեն սատանայի. խոս-տովանութեամբ և արտասուօք քա-ւեն զմեղս, և տեարք լինին երկնային հացին։

ԻԳ

Առիւծն կալաւ իւր սպասաւոր աղուէսն, և ասէ նմա՝ թէ յորժամ արիւն տեսանես յաչս իմ, ինձ յիմաց արա, այն է իմ որսոյ նշանն։ Առիւծն որսայր և ուրախ լինէին։ Եւ հպարտացեալ աղուէսն էլ յառիւծէն, և գնաց առ գայլն և տրար իւր սպասաւոր. և ասէ ցգայլն. Յորժամ լինի յաչս իմ արիւն, և թէ ոչ լինի, էրը հարցանեմ, դու ասա՝ այո։ Եւ ասէ գայլն. Թանձրագոյն արիւն կայ յաչս քոյ։ Եւ նա ուրախացաւ և նստաւ յանցս էշանց. և ասէ ցգայլն. Դու

բախեա 'ի վերայ իմ։ Եւ 'ի գալ ե-
ղանց՝ նա վազեաց յառաջս նոցա,
որպէս տեսեալ էր յառիւծն. և ե-
ղուն՝ հարեալ զգլուխ աղուէսուն,
և սատակեցաւ. և ասէ գայլն. Յոան
կաց, այժմ ատուգասէս Թանձրա-
ցաւ արիւն յաչս քո։

Ցուցանէ՝ Թէ ոչ վայել է մարդոյ
ձկտել աւելի քան զկար իւր, ոչ 'ի
հոգեւորն և ոչ 'ի մարմնաւորն։

ՑԱՆԿ

Ագռաւ Թ. ԺԳ
Աղուէս ԺԳ. ԺԹ. Ի. ԻԲ. ԻԳ
Այրի կին ԻԱ
Առիւծ Գ. Ե. ԻԳ
Արծիւ ԺԶ
Աքիս Դ
Բզէզ ԺԶ
Գայլք և ոչխարք ԺԲ
Գորտ ԺԱ
Եղջերու Զ
Զուարակք ԺԳ
Էշ Ժ
Խեցգետին ԻԲ
Կապիկք ԺԵ
Կաքաւ ԺԶ. ԺԸ
Կրայ և ձի Բ
Ճայ և այլ հաւք Է
Մրջնին և ալաւնի ԺԷ
Նապաստակք Ը
Սոնտու Ա
Փոր Թ

ՀԱՅԿԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

1939 г.

Февраль — 10 р.

Март — 10 р.

Апрель — 10 р.

Май — 10 р.